



Բազմի

ԸՍՍԵԳԻՐ

Գրականություն
և Արտ-Եւրոպի



ԺԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ. 6

ՅՈՒՆԻՍ 1974

digitized by

Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յ. ՈՇԱԿԱՆ	Մոռցուած բաներ
Յ. ՆԱԳՈՒԼՆԱՆ	Քամին
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Փշարարացանկերի եզրերին
Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ	Վերադարձի հրգ
ՄՈՎՍԵՍ ՊԶԱՔՅԵԱՆ	Կատում
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Աղամամութիւն
»	Վախս
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Հարիզմէ հարիզմ
* * *	«Նահանգը» ներքին սպառման ապրանք
Բ. ԵՂՆԱՅԵԱՆ	Ժողովրդային հոգեբանութիւնը «Քաջ Նազար» հեփաքիմ մէջ
Ն. ԶԱՐԻՆՈՒՅԵԱՆ	Ֆրանսական ժամանակակից բանաստեղծութիւնը
Բ. ԿՐԱՆԵԱՆ	Ալիսիա Կիրակոսեան
Բ. Փ.	«Թատրոն 67»-ի ներկայացումները
* * *	Որպէսզի թիրիմացութիւնը չխորանայ
* * *	Բարի լուր եւ տխուր իրականութիւն



Բազմը

ԱՂՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵԱՏԻ

Գ. ՅԱՐԻ, ԲԻԻ Ե

Յ Ո Ւ Ն Ի Ս 1974

ՊԵՏՐՈՒՄ

383(184)

Յ. ՕՇԱԿԱՆ



ՄՈՒՑՈՒԱԾ ԲԱՆԵՐ

«Մտացուծ բանքը ընդհանուր խորագրեր կրող այս անվան գրությունը սահման է սահմարտ ստորակէ մը, որ երկրորդ հաստատար մը մէջ երբ զարժան են ըմբեր կառնալիկները, մասնաձևերը, վկայագրաները: Արի՛ւ առի՞ժով մը. ընթերցողին պիտի ներկայացնենք մեծանուն գրողներն այդ նէր:»

Մտացած ենք հոգը, թէ՛ իբրև յգացք, թէ իբրև զգայնութիւն:

Մեր արիւնէն իսկ ջնջուած ըլլալու է այն հպարտ ու գեղեցիկ ապահովութիւնը, որ հոգեվիճակն է հաւանաբար կարգ մը ժողովուրդներու, իրենց սահմաններուն ետին բերդացած ու անազու: Չեմ բանար սա գուգորդութիւններուն կախարդ հանգոյցը: Հիմա ո՛չ արքայ ունինք, ոչ նախարար:

Ան՝ որ այս տողերը պիտի կարդայ մտայն, գորշ խանութի մը անկիւնը, կամ խարխուլ խրճիթի մը սեմինն եւ կամ ելեկտրական գանգակներով սկերանգ սրահի մը մէջ, եթէ իր տարիքը արտօնէ իրեն, հագիւ յիշէ պիտի

այն միւսները, ասոնք ալ խանութ, խրճիթ, սրահներ, որոնք, շատ հեռու երկրամասի մը մէջ, իրաւ է՝ յաճախ երկիւզարիք պատկերներու խառնուած՝ պատասպարեք էին իր անօթութիւնը, յոգնութիւնը, պղտոր ու ճիղն ալ հանգիւսները, մայրը, զաւակները: Որոնք, իրենց հնազարեան կամ քիչիկ մը արդի յօրինուածքին հակառակ զինքը կը պաշտպանէին սա աշխարհին չարիքէն, կրցածնուն չափ ու իր հոգիին յատակը գտեր յարգարեք էին կեանք ըսուած երեսոյթը ընդունելու, առանց մեծ տագնապանքի, զայն գործածելու ի հաշիւ քանի մը խուլ, անբեղում, բայց անհունապէս հզօր բնագոյներու (երբեմն ապրիլը խելի գործ չէ), հիներէն իրեն եկած ու իրմով ուրիշներու յանձնելի տուրքերու... Ան ու նմանները կրնա՞ն չայցուիլ յաճախանքէն աչա կարգի զգայութեան, անոնց լայնէն, վստահութենէն, գրեթէ երջանկութենէն, որոնք այդ խեղճ կառոյցներուն ուղեղներէն անդադար կը ծորէին խորը իր ուժերուն սրբարանին: Վասնզի սեփականութեան նեղ ու պզտիկ զգացումները յաճախ կը հայածուէին, կը հալէին ուրիշ աւելի ազնիւ, աւելի բարձրորակ զգացումներու արձանկութեան մէջ, երբ այդ մարդերը, սանկ առանց որոշ նպատակի, հեղ մը դուրս տանէին իրենց մարմինները ու ամուշիկ աչք ածէին իրենց գեղը, քաղաքիկը շրջանակող պատկերներուն: Անոնք անշուշտ գիտէին, թէ այդ քաղաք գիծերէն քիչ անդին սկիզբն էր դժոխքին, թէ՛ իրենց գերութիւնը զիրենք կը վարսէր իրենց անմիջական փարախներուն, թէ՛ օտարին կրունկները միշտ պատրաստ էին կործանելու կախարդ այդ պարիսպները իրենց անհատականութեան: Բայց այդ մարդերը հարիւր անգամ աւելի պաշտպանուած էին, քան այսօրուան *բարիաներս*:

Այսօ՞ր:

— Մտոցած ենք հոգը:

Այսինքն՝

ամէն հոգեղէն կառոյցի հզօր ու հաստատ պաշտպան ա՛յն իրեղէն աշխարհը, որ արտաքին, նիւթական ձեւերու հանրահանդէս մը թէւ, բայց արդի մրգաստանի, այգիի, անտառի, լեռան, գեղի, ջուրի ու ծուռումուռ կածաններու քիւրագանակ կերպարաններուն ներքեւ, դարձ դար, ի հենուկա աւերածին յարաճուն ուժերուն ծներ էր, կարծես հրաշքով, մեր իսկ ուղեղէն: Զի ստոյգ է, որ երկիր մը գործն է մարդոց բազուկներուն, բայց ատոնց հետ ու ատոնցմէ առաջ՝ թերեւս գործը ուղեղին: Դաշտավայրի մը վրայ վեհափառ ոստան մը, ուր կը վազէին բարձր գիծերը հեռաստանէն փրթոյ, անշուշտ գանձ մըն է:

Ու աւերակները, քարի կոշտեր կամ շագախի շերտեր ըլլալու շափ՝ կործանած միտքեր են, երկրէ մը խօսող :

Հո՛ղը,

որ, դարեր շարունակ, մայրագործով ու աննահանջ յատակ, աւագան, «բանաւոր անդաստան», ընդունարան նարեց մեր ռզնդէն տուրքերուն, այսօր այլասերման բոլոր ստիբիւթներով խարանհար տուրքերը մեր ժողովուրդին, այդ տուրքերը աշարար, մշտառոյց պահե՛ղը իր ընդերքի ստեղծարանին մէջ միշտ գանձե՛մ մարմնաւորողը : Անոնց բոլոր ստեղծերը, գանակները իւրակերպողը : Նիւթին եւ ոչ-նիւթին աշխատանքէն իր ապրումին ոնր բեղմնաւորողը, անեցնողը, մարմնաւորողը՝ գանձե՛մ մեզի վեր բերելու, անհաշուելի ուրիշ աներոս ներքեւ...

Հո՛ղը,

այսինքն՝ մեր իմացականութեան բոլոր մեծ իրագործումները, որոնք լեռնէ լեռ կը ձգուին, բայց նամբու կերպարանքին տակ մեր պատմութեան մեծ ձգտումները կը թելադրեն : Մեր անձանձիր բազուկներով կարկինուած դաշտերուն ընդելոյց խնամկարները, երբ սարերու ոտքին, գարնան վերջերուն կը փռեն իրենց գմբախտն ու ոսկին ու կը վառին հովերու շրթներուն... : Ու մեր ոտքերուն մուրհովը կռանաւոր մեր անուշիկ արանքները, որոնք անշուշտ մեր ուղեղէն երկրաշփոխեցան (ներեցէ՛ք սա գէշ բառին) ու ինկան մեր երկրին սա ու ան ծայրերուն, արտեւանուեցին, ընդերքին :

Հիմա, հողը մեր գոճութիւնը, գայլութիւնը, գիշատիչ բնագոյնը փաստող ախորժակ մըն է՝ գաղթատանի մեծ տրտմութեանց մէջ, մեզ անգամ մըն այ փոքրող : Հիմա, մեզմէ՛ քիչերը միայն ընդունակ են մնացած նիշդ չափելու, արժեւորելու շնորհը, խորհուրդը, գեղեցկութիւնը, հարսնային քաղցրութիւնը այգիին, գոր մեր պայտերը բոնի կորգեցին ժայռածուտ, փշահեղձ բլուրի մը կողերէն, վանեցին խոպանն ու տատասկը, գայլախաղն ու դժնիկը, աւագն ու խօյաբոյսը, ու ածու յարդարեցին, անկողին շինեցին գեղանի, աստղատերու տունկին, որուն երակներէն արեւ ու երագ, արիւն ու ոսկի, քաղցրութիւն ու հրապոյր կը թուէին հոսիլ դէպի նամբաները մեր սիրտերուն : Հիմա, մեզմէ՛ քիչեր ընդունակ են հասկնալու հըպարտ խռովքը, գոգար գոհունակութիւնը, գորս կը թելադրէր նոյն սարի փէշերէն նարուած պարտէզը, մրգաստանը, խիտ ծառերու հիւսկէն մը, գոր երկէր վտակը իր փրփուրին ժանեակներովը եւ որուն նիւղերուն ընդմէջէն շագախի աչքերը խնձորին ու տանձին... Հագարներու մէ-

չէն սա օրինակները բա՛ւ են ճշդելու հօր, աննահանջ, դարաւոր վաստակը, որով հայրենիք մը կը յօրհնուի, ուղեղին, բազուկին, ճաշակին ու հոգիին համագանգ տենալը, ինչպէս կ'ըսեն հիմա արեւելահայերը, երկաթն ու փոթասն ալ խառնելով ճիգին:

Բայց տխուրը ան է, որ ո՛չ միայն մոռցած ենք հոգը, այլև անհազորդ ալ կը դառնանք արծէֆին, որ կը ներկայացնէր հոգին վաստակը ցեղային ուժին մայր տաճարին վրայ: Գազաթներու մէջ իրաւ, հասկնալի սա չըտեսութիւնը աղէտ է սակայն մայր երկրին մէջ: Հում միութարտարարուեստը հիմա շահ է ու հաշիւ, ծախու ցորեն կամ արտածուելիք գինի, պահածոյ: Ու չէ՛ ինչ որ էր մեր պայերուն. — այսինքն՝ ասոնցմէ անդին: Այսինքն ու մանաւանդ՝ Հայրենեաց Հող, սուրբ գերեզման մեր Հարանց, օրորան ծնածնեբուն. ու մրցարան, կրկէս մեծցողներուն: Այսինքն՝ մշակոյթ, որ շատ աւելի ընդարձակ տարագ մըն է, քան ան, որ կը թելադրուի, երբ քանի մը գիրք, շէնք կամ նկար կ'առնէ, քով քովի բերելու համար ժողովուրդի մը հոգեկան շինուածքը...:

Թող ներուի ինձի, արագ, անամբողջ (որովհետեւ չենք անդրադառնար, թէ պատառ մը գեղեցկութիւնն անգամ անհուն համադրութիւն է) քանի մը թուով այդ մշակայթին տարրերէն, փշուրներէն, ա՛յ մեզի համար պարպուած, իրենց ոգեղէն իսկութենէն վտարուած բառերու, որոնք մեր հետու անցեալին մէջ մեզ կը սփռուէին, կը յուսադրէին ու մեզ զգեստող աղէտները հանդուրժելու, տիրակալելու մտայլ հերոսութիւնը կը ներշնչէին մեծին ու պզտիկին, ասպետին ու պարեգօտաւորին (եկեղեցականին), աւագին ու անաւագին: Ընդարձակ է մեր պատմութիւնը: Նայեցէք անոր դարերուն: Ո՛ր մէկին ալ կենաք սեմին, դուք լիառատ ունիք այդ փշրանքներէն, հասած միւշել մեր չկամ, չտես իմաստութեան օրերուն, ուր ատանք արեւամարտի մրցանիշ է դարձած մեզմէ ամէնէն խելացիներուն:

Կը մտնեմք ամէնէն հիններուն ու ամէնէն պարզերուն, բայց այդ անցեալն ի վար ամէնէն ուժովներուն, որոնք գուցէ այդ հանգամանքին իսկ համար, ամէնէն դիւրաւ լճուողները եղան:

(Անտիպ)

Յ. ՕՇԱԿԱՆ

Յ. Ն Ա Գ Ո Ի Լ Ե Ա Ն

Ք Ա Մ Ի Ն

Ֆազաֆի գիշերային ֆամիմ
իզճերիս սրտումբքմ է
այս պահին
եւ միշտ գիշերայն կէսին
ստզնայ է բերում ֆազաֆին

Ֆազաֆի գիշերային ֆամիմ
երազիս ժխորն է
այս պահին
անշշուկ
բազմում է իզճերիս բազրիֆին

Ֆազաֆի գիշերային ֆամիմ
սեհազանգում է
սենեակիս
սեմին
հենց այս բապէին

սխուր է
իմ կեանքի շղթայումս օրերի
համար

արեւը մահացաւ
ֆազաֆի գիշերային ֆամիմ
սիրացաւ
իմ հոգաւ
իզճերին

Յ. Ն.

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

ՓՉԱԼԱՐԱՑԱՆԿԵՐԻ ԵԶՐԵՐԻՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՐԻՑ ԷՏԱՊ

— Կայանաւորնէ՛ր, քայլելու ժամանակ շարքերից յետ մնացածներէ կամ հանապարհին ընկածներէ վրայ կը յարձակուեն մեր պահակաշները եւ կը սկսեն կրծոտակի նրանց օտքերն ու մարմիններէ այլ մասերը, մինչեւ որ նըրանց վազկցնելով կը հասցնեն առաջ շարժուող շարքերին...

«Զգուշացնում եմ, որ ս'չ ետ, եւ ոչ էլ իմ զինուորները չպիտի խառնուենք պահակաշներէ այդ գործողութիւններին, որովհետեւ նրանք իրենց պարտականութիւններէ կատարման մէջ կը զանուեն...»:

Մի էտապի(1) պետի հրամանից:

ԲԱՆՏԱՊԵՏՆ ԻՆՁ ՏԱՆՈՒՄ Է ԻՐ ԿՆՈՋ ՄՕՏ...

Զինուորներն ինձ անմիջապէս իմ խուցը շտարան, որովհետեւ նրանց ստացական էր պէտք ինձ յանձնած լինելու համար: Ուստի՝ նրանք ինձ տարան բանակի զիշերային հերթապահի պարտանենակը»:

Այդ պարտանենակը կատարուած էր բանակի երեք շարքերից երկրորդի կենտրոնում, այնտեղ, ուր չորս միջանցքներ միմեանց էին միանում եւ մի բնդարձակ տարածութիւն կազմում: Հենց այդ տարածութեան վրայ էլ զըտնրուում էր բանակի, եւ այդ շատ մեծ շէնքի գլխաւոր դուռը, որից այն կողմը բակ էր եւ մի շատ մեծ դարպաս:

Բանասային հերթապահի պարտանենակը հսկայ մի սունկի էր նման, որի մէջը դատարկ էր: Հենց այդ դատարկ տարածութիւնն էլ հերթապահի պարտանենակն էր, ուր նստած էր նա սեւ վերարկուներ հագած իր մի քանի օգնականների հետ: Հերթապահն ու օգնականները գտնուում էին սնկածեւ

1.— Կայանաւորների փոխադրւելիս:

զրասնենակի կոթի մասում, իսկ սունկի վերևի մասի եզրերը բոլորածև ու միակուռ մի մեծ սեղան էին ներկայացնում: Այդ կլոր սեղանի բոլոր մասերում թղթեր էին ծրարեր ևւ Հեռախօսային գործիքներ: Ընքը, հերթապահը, որ բարձրահասակ մի մարդ էր, թւում էր, թէ աշխարհի ամէնից գործազբաղ մարդն էր: Իրապէս, ես նրա նման շատ դրաղուած մարդ չէի տեսել: Տպաւորութիւնն այն էր, որ նա մի բանա չէ, որ կառավարում է, այլ աշխարհի բոլոր բանտերը: Տասից աւելի Հեռախօսներ էին գրնդում կլոր սեղանի բոլոր կողմերում, ևւ միայն նա էր պատասխանում այդ բազում ևւ շրնդհասուող Հեռախօսականչերին: Եթէ մի Հեռախօս գրնդում էր, նրա օղնականերից այն մէկը, որ մօտիկ էր գրնդացող Հեռախօսին, վերցնում էր լսափողը, կանչողին միայն ասում էր զսպասել՝ ևւ յետոյ դնում սեղանի վրայ, մինչև ոք Հերթապահը վերցնում էր տուեալ լսափողը:

Հերթապահի խօսակցութիւնները մեծ մասով կարճ էին ևւ երբեմն էլ երկար: Երբ կարճ էին լինում, նա միայն ասում էր.

— Դա՛, դա՛, դա... (2)

Կամ էլ՝

— Նէ՛տ, նէ՛տ, նէ՛տ... (3)

Երբեմն էլ՝

— Դա՛, դա՛... Նէ՛տ, նէ՛տ... Դա, նէ՛տ...:

Երբ խօսակցութիւնները երկար էին տևում, նա ձեռքի ափով սրբում էր ճակատից վազող ջրոտները ևւ ամէն մի նախազատութիւնից յետոյ, օտսական մի երկար Հայհոյանք էր թափում իր Հեա խոտղի Հասցէին.

— Ես քա...:

Բայց, երբեմն էլ նա շատ զգաստ դէմք էր ցնդունում, այնպէս որ՝ կարծես նրա խօսակիցը լսափողի միջից տեսնում էր նրա դէմքը: Նման դէպքերում նա չէր Հակահառում իր խօսակցին, այլ միայն ասում էր.

— Սլուշայուս, տովարիշ նաչպանիկ... (4) Դա՛, դա՛... կոնէնցնօ, կոնէնցնօ... (5):

Երբ գիտուորները ինձ բանտի Հերթապահի գրասենակի մօտ բերին, Հերթապահը վիհում էր սնկածև զգրասենակի՝ արատքին եզրին շատ մօտիկ կանգնած մէկի Հեա:

Այդ մէկը երեւի գրսից էր եկել, ևւ շնայած իր Հաստ մուշտակին ևւ ներսի տաքին, դեռ մրսում էր ևւ բառերը դժուարութեամբ էր կարողանում արտասանել:

— Ինդրում եմ, — տասց գրսեցին, — շատ եմ խնդրում, տովարիշ Պոխլով, ընդունես գրանց... Շատ չեն, ընդամէնը երեք Հարիւր Հօդի են...:

— Տեղ չունեմ, տեղ չունեմ, — տոսնց իր խօսակցի երեսին նայելու, գրաղուած իր ներքին գործերով, արագ-արագ պատասխանեց Հերթապահ Պոխլովը:

— Թերեւս միջանցքներում, — շարունակեց յամառել գրսեցին իր թաթմաններն իրար խփելով:

— Միջանցքներում չի կարելի, արգելուած է, — պատասխանեց Պոխ-

2.— Այո՛, այո՛, այո՛...
 3.— Ո՛չ, ո՛չ, ո՛չ:
 4.— Լսում եմ, ընկեր պետ:
 5.— Այո՛, այո՛... անշուշտ, անշուշտ:

լովը, նորից ոչ թէ իր խոսակցին, այլ ինքն իրեն: Բայց յանկարծ խորամանկորէն ժպտաց եւ ասաց, — Ծիւղն ասաց մէկ հողու տեղ ունեմ...

— Մէկ հողու համա՞ր, — հարցրեց դրսեցին, — Ժւր: Միջանցքում...

— Ո՛չ: Ասացի միջանցքներում արգելուած է: Մեր ասանք... Կնոջս մօտ... Կնոջս անկողնում...

Ինձ հետ եկած գինուորները ժպտացին: Ժպտացին նաև Հերթապան Խոխովի օգնականները:

Դրսեցին զեռ շէր հասկացել Խոխովի կտակար, եւ նրան էր նայում շուտաւրտ, երբ Խոխովն ասաջին տեղում լինելով զէմքը մեր կողմը դարձրեց: Տեսնելով ինձ երկու գինուորների արանքում կանգնած, ես երեւի ենթադրեց, որ ես նոր ձերբակալուած եմ, ասաց դրսեցուն:

— Այն մէկ հողու տեղի մասին մտայցիր, որովհետեւ ես տեսնում եմ, որ այս երիտասարդին պիտի ասանեմ կնոջս հետ պառկելու... Այս մէկը մերն է...

Թէեւ ես գիտէի, որ Հերթապան Խոխովի ասածը ուսանական կողմից կատակ էր, բայց նորից ինձ լու զգացի:

«Տեսնեա, տիկին Խոխովան ինչքան զեղեցիկ է», — սին հեռանկարներից ասորում մտածեցի ես, եւ որովհետեւ սպասելուց բացի անելիք չուրեքի, սկսեցի նրազել:

Մտածեցի, թէ ինչպէս, քիչ յետոյ, երբ Հերթապան Խոխովը կ'ընդհատի իր դործերը, դուրս կը գայ այդ սնկման զգրտահետակցից եւ ինձ կ'ասի. — Պոլիտով(6):

Ես նազ կ'անեմ ու կ'ասեմ.

«Քաղաքացի Խոխով, լու է, որ դուք ինձ այստեղ պահէք, որովհետեւ չեմ ուզում տիկին Խոխովային նեղութիւն պատճառել...»:

Հերթապան Խոխովը կը բարկանայ.

« Գնանք, զնանք, այստեղ տեղ չկայ: Յետոյ էլ, դու հօ միշտ կընորս հետ չես պառկելու... մի քանի գիշեր միայն, մինչեւ որ բանտում տեղ բացուի »:

Որպէսզի նոյնիսկ մտքով չմտնեմ, Խոխովի հետ մեր գնալիք հասարակարէր կարճ կապեցի:

« Ահա եւ մեր ասանք, — կ'ասի ամբարիշտ Խոխովը եւ կը սկսի դուռը թակել, — Լէնա, Լէնուշկա... »:

« Եկա՛յ, եկա՛յ... », — ներսից կը լսուի մի երիտասարդ կնոջ զբընդուն ու ասք ձայն, եւ քիչ յետոյ դուռը կը բացի վարդազոյն մորթով եւ սլացիկ հասակով մի սիրերուհի, — ներս արի՛, ներս արի՛ »:

« Ո՛չ, Լէնուշկա, չեմ կարող ներս գալ, որովհետեւ շատաւրտ եմ: Բանաբ երեսի վրայ եմ թողել, ես միայն այս սղային բերեցի, որպէսզի մի քանի գիշեր քեզ հետ պառկի, մինչեւ որ բանտում տեղ բացուի... Դե՛հ, եթէ մենք չհողանք մեր կարիքներն, էլ ո՞վ պիտի հողայ, հողահա... Այս սղային լու ուշադրութիւն դարձրու, որպէսզի ամէն բանից զո՞ր մնայ... Դե՛հ, ես գնացի: Բարի գիշեր: Ուրախ մամանակ ունեցէք... », — կ'ասի Հերթապան Խոխովը, եւ արագ քայլերով կը հեռանայ:

Ամուսնու հեռանալուց յետոյ, զեղեցիկ Լէնա Խոխովան ժպտալով ինձ ներս կը հրաւիրէ, ասելով.

6— Գնամբ:

«— Նե՛րս եկէ՛ք, նե՛րս եկէ՛ք, դուք սառնցիկ ցրտու՛մ» :
 Ես ներս կը մտնեմ միջանցքն եւ այստեղ, առաջին անգամ լինելով,
 տիկին Պոլիովայի հետ երես երեսի կը զանք եւ նա ինձ կը հաւանի (ըստ իմ
 անուրջներէ, չէր կարող չհաւանել) :

«— Փաղաքացու՛նի Պոլիովա, — նորից նազ կ'անեմ ես, — խնդրում
 եմ ինձ ներէ՛ք, որ ես ձեզ նեղութիւն պիտի պատճառեմ...» :

«— Գե՛հ, դե՛հ, — սիրալիբ կը բարկանայ երիտասարդ տիկինը, —
 նախ ինձ հետ այդպէս պաշտօնապէս մի խօսէ՛ք, յետոյ էլ, իմ անունը լէ-
 նա է, այդպէս կանչեցէ՛ք ինձ, Եւ վերջապէս նեղութեան մասին ամենեւին
 մի մտածէ՛ք, ձեզ պէս մի երիտասարդի հիւր սեննալը ուղղակի բախաւա-
 րութիւն է...» :

«— Գու ինձ երես ես տալիս, լէ՛նոչկա...», — մեր երկուսի համար
 հասկանալի կը ժպտամ ես :

«— Ա՛հ, արի, — իր հերթին հաստատական կը ժպտայ նա, եւ ձեռ-
 քիցս բռնած կը տանի ներսի սենեակը, — նստի՛ր, մինչեւ որ քեզ համար
 ընթրիք պատրաստեմ եւ յետոյ...» :

Հենց այդտեղ (հակառակի պէս) զինուորն ինձ խոնգարից եւ թոյլ
 շտուեց, որ ես շարունակէի իմ երազանքը, լէ՛նոչկային թեւազրկւով ընթրի-
 քից յետոյ մեր տնկիքը... :

— Քայլի՛ր, — կողքիցս հրեց զինուորը :
 Զինուորներն իրաւունք սւնէին : Նրանք տեսնելով, որ եթէ ժամերով
 կանգնէին սովորիչը Պոլիովի դիմաց, նա չպիտի վերցնէր եւ ինձ ստաց-
 ման թուղթը չպիտի ստորագրէր, վճռեցին ինձ յանձնել նրա օգնականներէց
 մէկին :

Պոլիովի օգնականներէց մէկը առանց ինձ եւ զինուորների վրայ նա-
 յելու, վերցրեց թուղթը, ստորագրեց, եւ մասը պարզեց դէպի դիմացի
 պատը : Այդ արդէն ինձ էր վերաբերում : Ես պիտի դնայի կանգնէի պատի
 տակ եւ սպասէի, մինչեւ որ յիշէին ինձ եւ ասնէին իմ խուցը :

«Ա՛հ», — անբացի ես եւ զնացի կանգնեցի ցոյց տրուած տեղը :

Ես անցնալի իմ փորձերից զիտէի, որ առանց պատին յենուելու ի-
 րաւունքի, այդանդ պէտք է կանգնէի ժամերով, թերեւս սիրիբեան ամբողջ
 երկար զիշերը եւ թերեւս ամբողջ միւս ցերեկը : Կալանաւորներ են եղել,
 որոնք քննչարանների միջանցքների կամ բանտային հերթապահներէ զգրա-
 սենեակներէ պատերի տակ կանգնած են եղիլ մի քանի զիշեր եւ ցերեկ, մին-
 չեւ որ սովից, յոգնածութիւնից եւ տանջանքներից ուժասպառ գլորուել են
 եւ ընկել յատակին : Այդ բանտերում կալանաւորն իրաւունք չունէր առաջինը
 խօսելու : Նա կարող էր միայն պատասխանել իրեն տրուած հարցումներին :
 Բայց պատերի տակ կանգնածների վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում
 եւ ոչ ոք ոչինչ չէր հարցնում :

«— Ես այստեղ կանգնած կը մնամ երեւի մինչեւ վաղը, մինչեւ Ան-
 նա Մորոզովայի պահանջը : Այն ժամանակ ինձ կը փնտռեն խուցերում, յե-
 տոյ կը զտնեն այստեղ», — մտածեցի ես, եւ հաշտուելով վիճակիս հետ,
 սկսեցի շուրջս նայել :

Այդ ժամանակ էր, որ նոր միայն տեսայ, թէ բանտի գլխաւոր մուտ-
 քի մտի անկիւնում մի խումբ կալանաւորներ կային կանգնած, որոնք այն-
 քան լուռ էին, որքան կարող էին լինել անշունչ առարկաները : Նրանք ո՛չ
 միայն չէին խօսում միմեանց հետ, այլեւ ամէնից փոքր շարժումը չէին կա-
 տարում իրենց կանգնած տեղերում : Եւ նրանք նման էին անատոի հրդեհից

իրենց սերունդները, մատաղ ճիւղերը եւ կեանքը կորցրած ու սեւացած ծառերի բնորին: Այլանպակ, վանաղ եւ անվերջօրէն ախուր:

Անվերջօրէն աւարեկուած էր երեւում կայանաւորների այդ խումբը: Այդ թերեւս այն բանից էր, որ նրանք զիտէին, որ քաղաքական սատիկանու թեան զնդաններում, զիշերուայ այդ ուշ ժամին իրենց խուցերից զուրս են հանում այն կայանաւորներին, որոնց տանում են զնդակահարելու, եւ նրանց կարգադրում խուցից զուրս գալ իրենց գիրերով: Եւ իրապէս այդ կայանաւորներից մի քանիսը իրենց թեւերի տակ պահած ունէին զինուորական Հին ու ազատութեամբներ եւ աշխոյժ կաթսայիկներ կամ ապուրի պնակներ: Որպէսզի զուրացուեն, նրանք երեւի իրենց ծոցի գրպաններում պահած ունէին նաեւ իրենց փայտեայ դպարները: Բանտերում եւ կենտրոնացման ճամբարներում զինուորական վիճակ, կերակրի աման եւ զգալ ունենալը կենսական նշանակութիւն ունեցող սեփականութիւններ ունենալ էր նշանակում:

Եւ թէեւ վերմակ չունէի, բայց անշափ ուրախ էի, որ ունէի իմ կերակրի ամանը, որը պահածոյի թիթեղեայ մի առփ էր, եւ որը աշխարհապարտական գրաւութեան մի դատարան էր ինձ նուիրել: Պահածոյի այդ թիթեղեայ առփը տայլուցում, ծառեր կտրելու օրերին, ես այրել էի կրակի վրայ, սեւացրել եւ ժանդարանուց զերծ դարձրել: Յետոյ, ունէի իմ փայտեայ դպարը, որը, զամակ ունենալու արդեւէք պատճառով, ես պատրաստել էի ատամներոյս ու եղունգներովս եւ ցեմենտի յատակի վրայ քսելով: Այն թէեւ շատ կոպտ էր, բայց մեն նշանակութիւն ունէր ինձ համար:

7

ԵՍ ԿՈՐԵԼ ԷԻ

Պուցերից նոր կայանաւորներ էին բերում եւ միացնում նախկին խմբին: Գրանից մի քանիսը գլխարկ չունենալու պատճառով աշխոյժ իրենց կերակրապնակները շրջել էին իրենց գլխերին, եւ զինուորներ էին յիշեցրել: Զինուորներ, որոնք զերծ էին ընկել, յանձնել էին իրենց զննչերն ու ազատութիւնը, բայց պահել էին իրենց սաղաւարտները, որոնք աւելորդ էին այլեւս: Եկուորները նոյնպէս անվերջօրէն աւարեկուած էին երեւում: Այդ խմբին կարգադրուած էր կանգնել եւ իրար հետ շխտել, եւ նրանք կանգնած էին այնքան անշափ, որ կարծես յատակում խրուած գերաններ լինէին:

Չարմանալի էր ուստի մարդու Պատերազմի դաշտում առիւծի պէս կրուող, քաղաքական սատիկանութեան բանտերում, նա վերածուած է կիսամեռ ճագարի:

Ես ուստի տուրանդաւոր, անվերջօրէն աշխատաւէր, հիւրասէր ու օտարասէր ժողովրդի մասին էի մասծում, երբ յանկարծ դարձայ ամբողջ բանտային վարչութեան որոնումների առարկան:

Այդ սկսուեց, երբ բանտի վարի յարկից մի հսկայ մարդ վեր բարձրացաւ եւ մօտեցաւ ինձ: Ինչպիսիք էր զարաննահային: Այդ հսկան ոչխարի մորթուց, մաշկը կարմիր, մի շատ երկար մուշտակ էր հագել եւ մուշտակի վրայից մէջքը ամբարշել լայն մի գօտիով: Գոտուց կախուած էր նրա ատարանակը եւ կաշեայ մի երկարաւուն պայուսակ: Զեռքում նա ունէր մի քանի թերթանոց մասնահեղքերով աղտոտուած մի ցուցակ:

Փորձից հասկացայ, որ այդ հսկան մի էտապի պես էր, եւ կալանաւորի այդ վախեցած խմբին գնդակահարելու շէին տանում, ինչպէս որ ներսն էին մտածում, այլ փոխադրում էին աշխատանքային մի նամբար կամ էլ մի ուրիշ բանու:

Մուշտակաւոր հսկան եւ Խոխլովը, երեւի, հին ծանօթներ էին, որովհետեւ նա ծօտենալով անկաճեւ զգրասենեակնին, կանգնեց բանտի հերթապահի դիմաց, եւ առանց ձեռնկանութիւնների բարձր ձայնով ասաց.

— Է՛յ, Խոխլով, մէկ շուն կապի վրայ չէ, բացակայում է...

Խոխլովը, որ նորից բարկացած, մէկի հետ խօսում էր հեռախօսով, մէկ աչքը հսկայի վրայ դարձրեց եւ ձախ ձեռքի ափով օդը հրեց նրա վրայ:

— Խոխլով, վերջ տուր հեռախօսային այդ խօսակցութեանը, ինձ տուր իմ կալանաւորին, ես գնամ, հասցնեմ ինձ է սպասում: Այլ կերպ՝ ես ցուցակից դուրս կը հանեմ այդ մէկին, — անհամբեր դարձաւ եւ սպառնաց հսկան:

Խոխլովը ոչ մի ուշադրութիւն չգարձրեց հսկայի ասածների վրայ, մինչեւ որ վերջացրեց հեռախօսային խօսակցութիւնը: Ապա՝ երկու ձեռքով բռնեց գլուխն ու հարցրեց հսկային.

— Ի՞նչ էիր ասում...

— Մէկ կալանաւոր չկայ, — ասաց հսկան:

Խոխլովը ծիծաղեց: Միծաղեց չոր, չար եւ ծայր աստիճան արհամարհական: Սակայն անմիջապէս լրջացաւ, որովհետեւ նա չէր սիրում ծիծաղել:

— Կատակի ժամանակ ես գտնել, երբ ես ժամանակ չունեմ գլուխս ջորելու, — ասաց:

— Ձէ: Լուրջ, — պնդեց հսկան:

Խոխլովը ալ ձեռքը պարզեց եւ ցուցամատը պատի ժամացոյցի ճօճանակի պէս տարաւ-բերաւ հսկայի աչքերի առջեւով.

— Լսիր, Կարնաուխով, իմ բանտում ապրող ասնէտներն անգամ հաշուրած են, եւ հսկողութեան տակ են գանւում: Ո՛ւր է խելքդ...

Կարնաուխովը Խոխլովի մատի տարուբերումից իրեն վատ զգաց երեւի, որովհետեւ յետ-յետ քաշուեց:

— Խելքս իր տեղն է, բայց մէկ շուն չկայ, — ասաց նա:

— Ստուգե՛լ ես բոլոր խուցերը մէկ-մէկ, — հարցրեց Խոխլովը, վախեցած:

— Ստուգել եմ, — ասաց Կարնաուխովը, — հարցրու տղաներին, — եւ նա ցոյց տուեց իր կողքին կանգնած իր երկու զինուորներին:

Խոխլովը երկու ձեռքով բռնեց փորը եւ զէճքին այնպիսի տեսք տուեց, որ թուաց, թէ սրտխառնուք ունեցաւ:

— Ո՛չ, — ասաց Խոխլովը, — մենք մեր բանտում վկաներով չենք աշխատում: Ի՞նչ է այդ շան անունը:

Կարնաուխովը նայեց ցուցակին եւ տուեց իմ անունը:

Ես սարսափեցի: Ես էտապից վախենում էի այնպէս՝ ինչպէս որ մէկը կարող է վախենալ ջուրույից, ժանտախտից, բուսիկ ուտքերով կարմրած սփռուների վրայով քայլելուց: Ես պատրաստ էի տաս տարի մէկ բանտում մընալ, բայց ոչ մէկ ամիս էտապ գնալուց յետոյ ազատուելի:

— Կրաւշուկ, զնա՛ զտիր այդ հսկայի դափնականին, — Խոխլովը հրամայեց իր այն օգնականին, որը զիջ տուաջ ստորագրել էր ինձ ստացման թուղթը:

Կրուչուկը ցուցակէց արտադրեց իմ անունը եւ զնաց ինձ դանկելու բանաբ խուչերում :

Անշուշտ, ես կարող էի նրանց ասել, որ փնտառած կաշանաւորը ես եմ, բայց ինձ չէին փնտառում ազատելու համար, որ ասէի: Յենայ, ես իրաւունք չունէի: Ես կարող էի խօսել միայն այն ժամանակ, երբ ինձ հետ խօսէին: Յենայ էլ, հետոյ չգնալու համար ես ուզում էի, որ ինձ չզանէին: Եւ ամէնից կարեւորն՝ Աննա Մարտոզովան այստեղ էր, եւ ես պինդ-պինդ սիրահարուէի էի նրա վրայ, թէեւ միանգամայն ասանց ապագայ հեռանկարներէ:

Կրուչուկը շատ ուշացաւ, իսկ ես շատ ուշաբի էի, որ նա ինձ չի կարողանում դանկել: Այնպէս որ՝ կարծես թէ նա ինձ կարող էր դանկել խուչերում :

Հտապի պէս Կարնաուխովը յուստիարուած, որ Կրուչուկը չի կարողանում ինձ դանկել, զիմեց Խոխլովին:

— Եկ վազ անցնենք այդ ձրիակեր ասկանքից: Դու նրան յաջորդ էստապով կ'ուղարկես, — առաջարկեց նա:

Ես մեծ համակրութիւն ունեցայ Կարնաուխովի նկատմամբ, նրա այդ առաջարկի համար:

Սակայն խոզ Խոխլովը չընկունեց նրա առաջարկը:

— Իմ բռնաւում, եթէ մէկը նշանակուած է հասոյ գնալ, պիտի գնայ, — ասաց նա, հպարտանալով իր ասածով:

Ղեռք է նա, խո՛ղ, — մտածեցի Խոխլովի մասին, — զեւ նա ինձ ուզում էր ասնել եւ իր կնոջ հետ պտուկեցնել: Մեղք, որ այդ բարի ու զեղեցիկ Լէնուչկան այդ խոզի կիներ է...:

Կրուչուկը յիս եկաւ մեն-մենակ: Պարզ էր, որ նա ինձ չէր կարողացել դանկել:

— Չկայ, — զեկուցեց նա Խոխլովին, վախից աչքերն արագ-արագ թարթելով:

Խոխլովը կատաղեց, եւ սկսեց փողոցային բաւերով հայհոյել իր օգնականներին.

— Ես ձեր... եթէ հենց հիմա չզանէք մեր աշխատաւոր ժողովրդի այդ խարդախ թշնամուն, ես այս գիշեր ամէնքեդ էլ կը դնդակահարեմ, դուք ձրիակերներ...:

— Մածէտ բքիտ պաւսովի վրասխալ(7), — ենթադրեց Կարնաուխովը խորամանկ ժպտալով:

— Չի կարող: Հտապի այս ցուցակը նախապէս է պատրաստուած եղել, — բացատրեց Խոխլովը:

— Ե՛րբ, — հարցրեց Կարնաուխովը:

— Երեք օր առաջ:

— Միանգամայն հնարաւոր է, — սկսեց ծիծաղել Կարնաուխովը, — մարդուն այն աշխարհն էք ուղարկել, յետոյ անունը գրել հտապի ցանկէ վրայ: Մէկ հասալ դէպի երկինք, երկրորդ հտապ՝ հիւսիսային բևեռ...:

Խոխլովը կասկածեց: Գարակից հանեց զնդակահարուածների ցանկերը եւ սկսեց ստուգել:

Ես շատ էի ուզում, որ նա իմ անունը զնդակահարուածներէ ցանկերում դանկեր: Եթէ գտնէր, ինձ հասալ չէին ուղարկի:

— Չկայ, — ասաց Խոխլովը, — սրանք վերջին ցանկերն են:

7.— Տօւնայ դեպքում՝ թերեւ զնդակահարել էի:

— Յանկերը շատ-շատ են, եւ ճրի զնդակահարուածներն էլ շատ-շատ,
— ասաց Կարնաուիտովը եւ սկսեց ուրախ ծիծաղել:

Խոխովը նրան նայեց կատաղած:

— Դադարի՛ր քրջելուց:

Կարնաուիտովը զլուխը դրեց Խոխովի սեղանի եզրին եւ աւելի շատ
սկսեց ծիծաղել:

Խոխովի օգնականները տենդադին փնտառուքի մէջ էին ինձ դանկու
համար:

Մի բանտապահ անցնում էր ծոտովս, հարցրեց.

— Ո՞վ է քեզ պահում այստեղ:

— Մի հերթապահ:

— Ինչո՞ւ:

— Խուց ուղարկելու համար:

— Ի՞նչ է անունդ:

Ես լռեցի: Ես չէի ուզում իմ անունը յայտնել, որովհետեւ չէի ու-
զում հասարակ զնալ:

— Հարցնում եմ, ի՞նչ է անունդ:

Մենք գոտարութեամբ եւ կիտարերան արտասանեցի անունս:

— Արի՛, — ասաց նա ուրախացած:

Խոխովն ինձ տեսաւ եւ հասկացաւ:

— Ո՞ւր դուրս, — հարցրեց նա հերթապահին:

— Այնտեղ, երկու քայլ մեզնից հեռու:

Խոխովի արամաղորութիւնը բացուեց: Նա երեւի շատ էր վախենում,
որ ես կարող էի մի կերպ փախած լինել եւ հենց այդ բանի համար էլ իրեն
զնդակահարէին:

— Քեզ ո՞վ էր կանգնեցրել պատի տակ, — հարցրեց նա:

Ինձ պատի տակ էր կանգնեցրել նրա օգնական Կրաւչուկը, որն այժմ
սարսափահար ու աղերսանքով ինձ էր նայում:

— Մի հերթապահ, — ասացի:

— Դրանցից ո՞ր մէկը, ցոյց տուր, — ասաց նա իմ շորս կողմը հա-
ւաքում իր օգնականներին նայելով:

— Դրանցից ոչ մէկը, — ասացի:

Կրաւչուկն ինձ նայեց շնորհակալ եւ դէմքը շրջեց: Միւսները հառա-
չեցին թեթեւացած: Նրանք երեւի կարծում էին, որ ես կարող էի սխալուել
եւ ցոյց տալ սեւէ մէկին:

— Քեզ սրահով՞ էին բերել, — իր քննութիւնը շարունակեց, իր կը-
նօջ գծով ինձ բաժնեկից Խոխովը:

— Քննութիւնից:

— Հա՞, — մի քիչ կտարուեց նա:

— Այո:

— Ո՞վ էր քեզ քննում:

— Աննա Մորոզովան, — ասացի:

Աննա Մորոզովայի անունն լսելով, Խոխովի եւ իր օգնականների
գէմքերի վրայով սիրային տիրութեան հով անցաւ:

— Ես շատ կը ցանկանայի, որ Աննա Մորոզովան ինձ էլ քննէր, — աս-
աց Խոխովը եւ դառնալով Կարնաուիտովին՝ շարունակեց, — ահա թո ստա-
կելիքը, վերցրու եւ հեռացիր այստեղից:

— Ինձ ո՞ւր էք ուղարկում, — հարցրի նրան:

Նա զարմացաւ: Այնքան զարմացաւ, որ կարկամեց, և շփուէր, թէ ինչ անէր: Երեւի ինչքան որ նա բանտապետ էր կռել, դեռ ոչ մի բանտարկեալ նրան որեւէ հարցում չէր արել: Յետոյ նա կատաղած հրամայեց.

— Հետացրէ՛ք սրան այտտեղից:

8

ՀԱՐՈՒԱԾ

Կարնաւիտի գինուորներից մէկը բռնեց թեւքս և քաշեց դէպի անկիւնում կանգնած կալանաւորների խումբը:

— Սպասէ՛ք, — աօսցի, — ինձ պէտք է իմ խուցը գնալ: Իմ գլխարկը և և կերակրամանն այնտեղ են մնացել:

Ձինուորը նայեց իր պետի երեսին:

— Տա՛ր, թող վերցնի, — կարգադրեց Կարնաւիտիը, և մենք գընացինք:

Հսկիչը բացեց խուցի գուռը և գինուորի հետ կանգնեց շեմքին.

— Շուտ արա:

Պուշում մասախուղի թանձրութեամբ ծանր օդ էր կանգնած: Իրար զրոյ թափուած մօտ հարիւրի հասնող բանտարկեալների մեծ մասը քնած էր: Առատադին կպած ելիկարական աղօտ ու գեղնաւուն լոյսի տակ նրանց դէմքերը է՛լ աւելի գունատ էին երևում: Նրանց փակ աչքերը սեւ ու խոր խոռոչների տպաւորութիւն էին թողնում: Նրանց մազակալած դէմքերն ազատա էին, նիւար և վանողական: Այդ մարդկանց հետ եւ մօտ երեք մօրիս ժամանակ էի վատնել և ամէնքին էլ ճանաչում էի: Իրանք համալսարանական դասախօսներ էին, դրողներ, լրագրողներ, ճարտարագէտներ, ճարտարապետներ, գիտնականներ և ամէն զբաղմունքի տէր մարդիկ:

Հազիւ էի հասել իմ պառկելու տեղին, որը երկու թիզ տարածութիւն էր երկու պառկած կալանաւորների արանքում, երբ դասախօս Գորան քնի մէջ ձեռքերը պարզեց աղաչական և աղաչեց սարսափահար.

— Ն՛ւր րէյտէ մննեա... Պրաշու, նէ րէյտէ մննեա... (8)

Յետոյ նա ընդոտ նստեց տեղում: Վախից նրա դէմքն այլանդակուել էր այնքան, որ թոււում էր, թէ լուացքից քամուած-ուրուած ու մի կողմը դրուած մի շապիկ լինէր: Նրա ճերմակ և ամիսներով չլուացուած մօրուքը ցնցում էր այնպէս, որ կարծես մի անտեսանելի ձեռք բռնել էր նրա շայրից և քաշում էր ու քաշում: Նրա աչքերը թէեւ խուփ էին, բայց կոպերը վեր-վեր էին թռչում:

Ես հասկացայ, որ նա կռչմադ էր սպրում, թեքուեցի, բռնեցի նրա նիւար ուսերից և ցնցեցի մեղմօրէն.

— Պրոֆեսս'ր, ա՛, պրոֆեսս'ր, արթնացի՛ր:

Թէեւ Հսկիչը լուռ մնաց, բայց գինուորը հրամայեց, որ շիտոսեմ, որովհետեւ ես այնեւ նրա հրամանի տակ էի դտնում: Սակայն իմ հոգը չէր, և ես շարունակեցի արթնացնել դասախօսին:

— Պրոֆեսս'ր, պրոֆեսս'ր, արթնացի՛ր:

Վերջապէս նա աչքերը բացեց, մոլոր հայեացքով նայեց ինձ, ձեռքի փեր տարաւ իր իմաստալից դէմքի վրայով, և ճանաչեց ինձ.

8.— Մի՛ ծեծէ՛ք ինձ, խնդրում եմ, մի՛ ծեծէ՛ք ինձ:

— Ա՛յն, էրոս տըի, Սուրբն, սըիճուշիկ... (9)

— Պատկիր, պրոֆեսոր:

— Ինձ ծնծում էին, Սուրբն, ծնծում... Ծնծում անխղճորէն, — ասաց նա ղեռ սարսափից գողացող ձայնով եւ պատկեց:

Սա վերջերի կերակուրի ամանս եւ ղիխարկոս եւ երբ խուցից դուրս էի գալիս, տեղ լլինելու պատճառով դրան անկիւնում նստած—կծկուած մի կալանուոր ելաւ տեղից եւ կտրեց ճանապարհս:

— Եղբայր, ներիք ինձ, որ այդ անում եմ, բայց ես տեսնում եմ... տեսնում եմ, որ քեզ զնդակահարելու են տանում... Ասելս այն է, որ քո կերակրամանն ինձ տաս, այն քեզ այլեւս պէտք չի գայ... Քանի որ ասում են... Ասում են, որ այն աշխարհում... աշխարհում ճաշարանի պէս ամէն ինչ պատրաստ վիճակում են սպասարկում...
Ես ծիծաղեցի, ձեռքս դրի նրա ուսին, եւ ուզում էի բացատրել, երբ ղինուորը նորից հրամայեց:

— Չխոսել, խուցից ղո՛ւրս արի, եւ շո՛ւտ:

Սակայն, ասանց ղինուորի վրայ ուշադրութիւն դարձնելու (նա իրաւունք չունէր խուցը մտնելու) կերակրամանիս աչք դրած բախասկզիտ ասացի, որ ղժբախտաբար ինձ զնդակահարելու չեն տանում, այլ՝ էտապ, այնպէս որ՝ ամանս նրան տալ չեմ կարող, որի համար ներողութիւն եմ խնդրում:

— Բայց, տեղս կարող ես վերցնել, — ասացի նրան, — ղնա՛ վերջրու տեղս եւ պատկիր:

Բանտի միջանցքում, ղինուորը, որ ինձնից յետ էր քայլում, սպասեց, որ ինձ վրայ զանգատուելու է էտապի պետին:

— Այդ ղու կարող ես անել, — ասացի ասանց շրջուելու, — բայց ղիտցիր, որ չկայ մարդկային աւելի ստոր արարք, քան մատնութիւնը:

Նա լսեց, բայց եւ այնպէս, երբ հասանք կալանուորների խճրին, նա իր պետին ղեկուցեց, որ ես իրեն չէի լսում, եւ խուցում խօսում էի կալանուորների հետ:

Հսկայ Կարնաուխովը կատաղեց, ղինուորի ձեռքից խլեց հրացանը, եւ նրա կոթով ուժեղ հարուածեց կրծքիս ձախ մասին: Յաւից շունչս կտրուեց: Մէկ ակնթարթ տատանուեցի անզումս, փորձելով պահել հաւասարակըժութիւնս, բայց հոյն վայրկեանին ինձ այնպէս թուաց, որ մի անյայտ ուժ ճանկեց ուտերս, եւ թէեւ ոտքերս չէին հնազանդում ինձ, դարձեց անզումս մէկ անգամ, երկու անգամ, երեք անգամ, մինչեւ որ քերանքս ի վար փոռուեցի Կարնաուխովի ոտքերի տակ, կարծես երկրպագութեան համար: Ընկնելու ժամանակ ձեռքիցս ընկաւ նաեւ կերակրամանս, որը զրնգոցով բուկրուց ղլորուել ցեմենտի յատակի վրայ: Պահածոյի թիթեղեայ այդ տուփն ինձ համար այն նշանակութիւնն ունէր, ինչ որ մի միլիոնատիրով համար նրա միլիոնները: Այն իմ միակ սեփականութիւնը լինելուց բացի, ինձ համար կենսական նշանակութիւն ունէր: Ասանց նրան եւ չէի կարող ղկերակուրս սասնալ կամ սասնալ արիւնքի պէս իրենց ղլխարկների մէջ: Եթէ ամանս ինձ դաւաճանէր եւ ղէպի կալանուորները ղլորուէր (ինչպէս որ ասում էր), այն մէկ ակնթարթում կ'անհետանար, եւ վերջ:

— Օ՛, ոչ, — անքացի ես, — չեմ տայ...

Ահռելի ուժ գործադրելով վրաս, աչքերս հեացրի Կարնաուխովի

9— Ա՛յն, այդ գա՛ւ ես, Սուրբն, որդեակս:

աղտոտ վալենկաներից, շրջուցի և ինչպէս մէջքը կտորուած մի գազան, փորիս վրայ շարժուելով սկսեցի սողալ դէպի ինձնից հեռացող ամանս։ Ձրկարողանալով սաքի կանգնել, ես ուժ էի տալիս ծնկներին, փորիս եւ ձեռքերին ափերին, և թիզ առ թիզ սողում ու սողում։ Ոչ ոք չէր ուզում ամանս բռնել և ինձ վերադարձնել, ես էլ չէի ուզում, որ նրանք այդ անէին։ Ձէի վստահում։ Վերջապէս ամանս կպաւ մի կայանաւորի ոտքերին, մնաց անշարժ և ձայնը կարեց։ Աչքերս առանց նրանից կարելու ես հասայ նրան, երկու ձեռքով խիցի, դրկեցի և ղէմքս կպեցի յատակին, և յետոյ շրջուելով մէջքիս վրայ, սաքի ելայ։

Երբ աչքերիս մշուշն անցաւ և երբ տեսայ, որ ներկաներն ինձ էին նայում, ամաչեցի ինչքս ինձնից, որն ամենամեծ ամօթն է ինձ համար։

Ամաչեցի մարդ լինելուս համար։ Ամաչեցի կայանաւոր լինելով հանդերձ կեանքին այդպէս կառչած լինելուս համար։ Ամաչեցի այն կայանաւորից, որը խուցում ամանս խնդրեց, իսկ ես մերժեցի նրան։ Ամաչեցի Կարնաուսից ստացած հարուածի համար, և ամանի յետեւից այդպէս փորսող շտապելուս համար։ Ամաչեցի այն զինուորի համար, որը շարժուողից վրաս, բայց որ կարող էր եւ շանել։ Ես հայտնաբերով զինուորին էի փրկուում, երբ տեսայ, որ նա ուրիշներէ պէս ինձ չէր գիտում, այլ սաքերին էր նայում։

Նա զղջացել է իր արածի համար, — մասնեցի, — եթէ իրապէս զղջացել է, սպա այդ բարոյական մեծ յաղթանակ է նրա համարս։

Կարնաուսիովի հողը չէր։ Նա իր ցուցակներին էր նայում և ստուգում էր այնպէս անվրդով, որ կարծես հենց նոր չէր, որ նա հարուածել էր, ստապանքից և սովահարութիւնից նիհար և պաշտպանուելուց զուրկ մի մարդու, որին միայն կարելի էր կորեկցել։

Ես Կարնաուսիովին էի նայում, երբ նրա մոտ տեսայ, այդ հսկայի համաժողովեանքը աչքիս այժմ կարճահասակ թուացող հերթապահ Կրաւչուկին, որն ինձ էր դիտում համակրութեամբ։

Ես ժպտացի նրան։

Եւ երբ այդպէս արեցի, տեսայ, թէ ինչպէս նրա հասա ու շէկ բնիւրն սկսեցին ցնցուել ու ցնցուել։

«Ը՛րբ թէ նա ծիծաղում է ինձ վրայս, — մասնեցի։

Սակայն, Կրաւչուկը իր բնիւրի վեր-վեր թռչելը զպակու համար, ձախ ձեռքով ծածկեց նրանց, իսկ աջ ձեռքի բթմամառը դադանորէն վեր ցնցեց։

Ես նորից ժպտացի նրան։

Կարնաուսիովը վերջացրեց իր ցուցակն աչք անցնելը և դնաց կանդոնեց Խոխլովի ազրասնեակչի առջեւ։

— Էյ, դրուժնի(10), արի այդ տակաւններին հաշուենք։

Խոխլովը շարունակելով հեռախօսային իր խօսակցութիւնը, ձախ ձեռքով օդ հրեց նրա վրայ։

— Խոխլով, ինձ մի ուշացրու, — կէս կատակ, կէս լուրջ անհամբեր դարձաւ Կարնաուսիովը։

Խոխլովը մէկ աչքով նայեց նրա վրայ, բայց շարունակեց հեռախօսային իր խօսակցութիւնը, մինչև որ վերջացրեց։ Ապա՝ նա վերցնելով կայանաւորների ցանկը, դուրս եկաւ իր ազրասնեակչից և բռունցքով հարածեց Կարնաուսիովի մէջքին։

10.— էյ, շքեկամ։

— Կարնաուխով, Կարնաուխով, — առայ նա, — Հարիւրաւոր է-
տապի պետերի հետ դործ եմ ունեցել, բայց զեղ նման անտանելիին դեռ չեմ
հանդիպել:

— Ես էլ նոյնը, Մոխով, ես էլ նոյնը: Հարիւրաւոր բանտապետների
հետ դործ եմ ունեցել, բայց զեղ նման շատախոս բանտապետ դեռ չեմ տե-
սել, — առայ Կարնաուխովը, եւ բարեկամաբար հարուածեց նրա թիկուն-
քին:

Նրանք կատակելով եւ ծիծաղելով հկան կանգնեցին մեր առջեւ, որ
կարծես շատ հաճելի գործ ունէին կատարելիք:

9

ԱՐԵՒԱՓԱՅԼԸ ԼՍՈՒՄ ԷՐ ԿԱՐՆԱՈՒԽՈՎԻՆ

Կարնաուխովը հազայ եւ յայտարարեց, որ այժմ նա պիտի կարդայ
մեր անունները եւ հրամայեց, որ մեզից իւրաքանչիւրը ճայտեղ եմք ա-
մի, ապա՝ խմբից բաժանուելով գնայ կանգնի դրան մօտ:

Ես նկատեցի, որ նա ամէն մի անուն կարդալուց երկարօրէն զննում
էր առեւել անձին, մինչեւ որ կալանաւորը զնում կանգնում էր դրան մօտ:
Երբ իմ անունը կարդաց, ես առանց ճայտեղ եմք ասելու գնացի կանգնեցի
դրան մօտ:

— Էյ տղի, — տեղից կանչեց նա, — տղի օտորոճճօ: Չեստնոյէ ըս-
լովօ, տղի օտորոճճօ: Բուդէյտ պլոխօ... (11)

Սակայն իմ հոգը չէր: Ամենեւին հոգս չէր: Ես գիտէի, որ կայարանի
ճանապարհին նա կարող էր, որեւէ շնչին առիթով կամ առանց առիթի, ինձ
զննակահարել եւ ապա պարզեւատուել, բայց իմ ուզածն էլ այդ էր: Ես
յոզնեի էի, շատ էի յոգնել եւ զգում էի, որ այլեւս շարունակել այդպէս
չէի կարող: Ես մեռնել էի ուզում: Եւ երբեք մահուան ցանկութիւնն այդ-
քան քաղցր չէր թուացել ինձ:

Երբ վճռեցին մեզ դուրս տանել, բացեցին բակը ասանոց դուռը: Անմի-
ջապէս սիրիբեան ահուկի ցրտի մի մեծ հոտանք ներս վազեց եւ սարսուցից
մեզ: Յրտի հետ, դրան առջեւ, մտախուղ առաջացաւ եւ այնքան խիտ, որ
դուռը չէր կարելի տեսնել: Ներսի տաքի եւ դրսի ցրտի ընդհարումից այդ
մտախուղը թշոււտ էր այնպէս, որ կարծես կրակի վրայ ջուր էր թափ-
ւում եւ ներքին ուժից ցնցւում էր ու գոռնում ինքն իր վրայ: Մեզ՝ կալա-
նաւորներին, կանգնեցրին զոյգ-զոյգ եւ վերջին անգամ հաշուելով դուրս
տարան դրան չեմի այդ խիտ ումպի միջով:

Դրսում լուսարայ էր արդէն եւ սիրիբեան այն ծանր ցրտերից, որը
առաջին վայրկեանին թոնրից ելած բոցի նման այրում է գէժձը: Յետոյ սա-
ռում է զթուժը, թոքերումդ եւ բիւրաւոր մասնիկներով թափանցելով ներ-
սըդ, սառեցնում է արիւնդ եւ ամբողջ մարմինդ: Մի քանի բուզէից անդորբ
է իջնում վրադ, ցաւերն անհետանում են եւ դու ուղում ես պտուկել կանգ-
նածդ տեղում, եւ քնել: Քնել անվերջօրէն:

Մեզ կանգնեցրին շորասկան Հօգի: Ինչ-որ տեղից տաք հազնուած շատ
զինուորներ հկան իրենց պահակային շներով եւ Կարնաուխովը մեզ սկսեց
բացատրել էտապի կանոնները:

11.— Էյ դու, գոյջ մեմ: Ազիւ խօտ, գոյջ մեմ, վտա կը լիճի:

Այդ բացատրութիւնները եւ լսել էի նախապէս մի Հազար անգամ եւ Հիմա նորից պիտի լսէի: Կարծաւորովի Հարուածի տեղից ցաւը ցրտից Հարեւարապառակուել էր: Յուրաքանչեւ սողակում էր ներսս: Ոտքերիս եւ մեռքերիս մասնների ծայրերը կարծես ծակծակում էին բիւրուար տեղիներով, բայց եւ նորից պիտի լսէի: Յրտից անպաշտպան կալանաւորները շան լակոտների պէտք վնասում էին եւ ստքերը վեր ու վար անում, ինչպէս կրակի վրայ կանգնածները, բայց Կարծաւորովի խօսում էր ու խօսում: Եւ շատ էր սիրում իր զործը:

— Կալանաւորներ, — գոչեց նա բարձր ու խրոխտ ձայնով, եւ նրա ձայնն աւելի խտացրեց ցուրտը, — դուք Հիմա էտապ էք գնում: Էտապում կալանաւորը մարդ չէ, այլ՝ միայն լսող եւ պահակութեան Հրամանները կատարող առարկայ: Էտապում դուք չէք աննում, չէք խօսում եւ ոչինչ չէք զգում: Այդ ասում եմ, որովհետեւ քիչ յետոյ մենք փողոց պիտի գուրս դանք եւ այնտեղ, ո՞վ դիտի, մեզից մէկնում էլը կարող է տեսնել իր Հարազատին կամ Հարազատներին: Այդպիսինը չպիտի տեսնի նրանց, չպիտի խօսի նրանց հետ, չպիտի գրայ նրանց ներկայութիւնը: Այս Հրամանին շանստողները անդնուանողը կը գնդակահարուեն, իսկ եթէ ըստ պահանջների Հարազատները վազեն սպանուածի գիտկի վրայ, նրանք նոյնպէս կը սպանուեն որպէս պետական սպանութեան զործերին խտուրտողներին: Ծիշդ է, իմ եւ իմ զինուորների մեռքերը զորում են մեզ, հակաշեպտոխական շներիդ, Հենց այստեղ, այս բանի բակում, շանստակ անելու, բայց ասայժմ դուք պէտք է աշխատէք մեր պետութեան Համար, մեր մեծ, անզուգական, հանճարեղ, բարեգութ ու մարդասէր, սմինապէտ ու արեւածանձ սոսա՛նորդի Ծրագրերը իրականացնելու Համար... Արեւափայլի Համար...

Անշուշտ, Կարծաւորովի Արեւափայլի մասին ասածը կարող էր զանց աննել, որովհետեւ մենք ժողովի մէջ չէինք գտնուում, բայց նա երեւի մըղտում էր էտապի պետից էլ աւելի բարձր պաշտոն ստանալ, ենթադրելով, որ Արեւափայլի բացել էր իր ասք պալատի լուսամուտը եւ ուշադրութեամբ նրան էր լսում այդ ցրտին, այդքան Հեռաւորութեան վրայ եւ լուսարացի այդ ժամին:

Մինչ Կարծաւորովի խօսում էր, կալանաւորներից նրանք, որոնք ամառ ժամանակ էին մերթապալուել եւ նրանց վրայի Հազուտները ծխախոտի թղթի պաշտպանութեան շափ նշանակութիւն ունէին այդ ցրտի դիմաց, որտամորժօք մղկատում էին եւ բառացիորէն մեռնում:

Իմ վիճակն էլ շատ ստոսպալից էր: Չնայած նրան, որ եւ Հազել էի ոչխարի մորթ, ներսից բրդապատ մեռնողներ եւ դրանց վրայից էլ աշխատանքային բրդեղնասային թաթմաններ, բայց մասներս այնպէս էին մորժոթում, որ կարծես կրակի վրայ խորովում էին:

— Կալանաւորներ, — շարունակում էր խօսել Կարծաւորովի, — փողոցում դուք պիտի ջայլէք իրար կպած, եւ մեր աչքերը մեր ստքերին յառած: Ուղիղ, կողքի եւ յետ նայելն արգելուած է: Շարքից կէս քայլ մախ կամ ալ անելը կը Համարուի փախուստ եւ յանցաւորը տեղնուտեղը կը գնդակահարուի, կամ էլ՝ շները նրան բզիկ-բզիկ կ'անեն: Ասեմ նաեւ, որ շարքերից յետ մնացողներին Հսկողութեան պարտականութիւնը գրուած է շներին վրայ: Նրանք յետ մնացողներին վազեցնելու Համար կը կրճտեն նրանց սրունքները, աղբերը, յետեւները: Եթէ այդ շօքնի եւ կամ յետ մը-

նացողները ընկնեն, շնորհ կը նստեն նրանց մէջքերին եւ կը սկսեն կրծք-տակ նրանց ծոծրակները, ականքները... ձիւղ է, թէեւ առանձն առում է, թէ շունը լան թաթ չի ծամում, բայց դուք ուրիշ շներ էք, մեր շներն էլ ուրիշ շներ են... Հա՛, հա՛, հա՛...

Թէեւ նրա քրքիլը մենք լսեցինք, բայց ինձ այնպէս թուաց, որ այն տեղից չչարժուեց, այլ սառեց տեղնուտեղը եւ մնաց սգում, մինչեւ երեւի դարուն, երբ արեւը հալեցրեց այն եւ անյայտացրեց:

ԵՍ ԴԷՄ ԵՄ ՄՏԱԿՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Մեզ կայաբանի շէնքը շտաբան, այլ դեռ չհասած, ծռեցին ձախ, ապա վեր, մինչեւ որ հանեցին երկաթուղու կայաբանի ծայրամասը, ուր մի քանի լքուած դժերից մէկի վրայ, լուռ ու մտայն կանգնած էր կայանուորներ փոխադրող ապրանքատար դնացքը, աւելի նիւզ՝ շարժական երկաթաուուն բանտը:

Ես սարսփում էի այդ «գնացքներից»: Ինձ հարիւրից աւելի անգամ այդպիսի գնացքներով բանտից բանա էին տեղափոխել եւ ես դիտէի դրանց ինչ լինելը, եւ ինչ է նշանակում դազանի նման շարժական վանդակներով տեղափոխուելը:

Ես քայլում էի եւ անհուն ցատում կուտակում մէջս իշխանութիւնների նկատմամբ:

«Մարդիկ ստում են մահը, որը շատ անգամ փրկութիւն է, իսկ ես ստում եմ ուժը, որովհետեւ այն մարդկային դիտակցական է, որովհետեւ այն մարմնաւորում է իշխանութիւնը: Իսկ իշխանութիւնն ինքը մարդն է», — մտածում էի ես:

«Մարդը չի կարող իշխանութիւն դառնալ, որովհետեւ նա հազար ու մէկ թիրութիւններ ունի, դեռ չհաշուած այն՝ որ իշխանաւորների մեծ մասը հողեկան հիւանդներ են: Իշխանութիւնն անօրինականութիւն է: Իշխանութիւնը ո՛չ աստուածային պատգամ է, ինչպէս սէբը, բարութիւնը, եւ ոչ էլ բնական անհրաժեշտութիւն, ինչպէս պաշտպանուելու բնադրը: Իշխանութիւնը պարտաւոր ուժ է շարժքի ձեռքին, իրենց անձնական հաշիւների եւ շահերի համար, կեղեքելու համար հասարակ մարդկանց, ըստըկացնելու համար նրանց: Փաստ է, որ իշխանութիւնները խաբում են իրենց հպասակներին, ծաղրում ու հեղնում են նրանց: Իշխանութիւնը օրինականացուած բռնութիւն է:

Եւ քանի դեռ մարդը, ընդհանուր մարդը, ազա՛ է, ընչաքաղց, նիւթապաշտ, վրէժխնդիր, ինքնասէր, իշխանասէր, գոռոզ, սմանդուկ, թայլի նկատմամբ աւիւծ կարող, ուժեղի դիմաց մուկ դարձող, ապուշ, բթամիտ, կեղծաւոր, երկերեսանի, շար ու գոխեմ, իր նմանի տառապանքներով ցըծածացող, անասնական բնազդներով տողորուած, կոշտ, անկիրթ, աննեքազամիտ, բռնի, մահուան դատաւճիռ արձակող, մարդուն իշխանութիւն յանձնելը յանցազորութիւն է, ճիւղ այնպիսի յանցազորութիւն, ինչպէս ուխտարի հօտի վրայ գայլին հովիւ նշանակելը:

Մարդը դեռ կատարեալ չէ իշխանութիւն դառնալու համար, ինչ սառեթ տակ էլ այդ իշխանութիւնները ներկայացուելու լինեն...»:

ԿԱԼԱՆԱՒՈՐՆԵՐԻ ՍԱՌԱՍ ԱՐԵՒԸ

«Գնացք՝ին գեա շողեկառքը չէր միացուած եւ այդ ինձ մի զիչ յոյր ներշնչեց, որ թերեաւ մեր զմեկնուժըս կ'ուշանայ, ինչպէս որ սովորաբար ուշանում է օրերով, եւ Աննա Մորազովան ինձ հանել կը այս էտապից։

Երբ հասանք զնացքին, սիրերեան պաղ, սառցակալած արեւը գուրս եկաւ եւ իր նօսը ու զեղին շողերը տարածեց մեր վրայ, աւելի բացորոշ դարձրնելով մեր սղորմելիութիւնը։ Բայց այն նորից արեւ էր եւ մեզաւոր չէր, որ աշխարհի, զեղեցիկ աշխարհի, այդ սառցակալած մասում նրա ճառագայթները նոյնպէս սառել էին եւ աշնան անբեւեռի պէս զեղնել։ Վերջ է վերջոյ եւ զժոխբում, սպիտակ զժոխբում էի գտնուած եւ զժոխբի արեւն այդքան հաղի լինէր։

«Այլ երկրներում, — մտածում էի ես, — այն երեւի մարդկանց ազօթքներով, թաշուկներու երզով, անասունների բառայով, քնից նոր արթնացող բնութեան ներդաշնակ ու երաժշտական հոնդիւնով է ողջունւում, իսկ այստեղ միւս է, սառած ջրի թանձրութեամբ ցուրտ, կեանքից հրժարուող կալանաւորներ։ Գալանաւորների արեւը հաղի այդքան լինին։

Երբ ձեզ սկսեցին բաժանել վազոնների վրայ, նոր անասն, որ զունները մի քանի օր բացուած շիխնով, ներսի առջի եւ դրսի ցրտի հետեւանքով սառցակալել էին եւ չէին բացուած։ Գարնաուխովը կարգադրեց կացին բերել, որով եւ ջարդեցին սառույցները եւ մի քանի պահակներ ուժով կողքի չրեցին սառլին դուռը։ Սկզբում, վազոնի ներսում մութ երեւաց, բայց անմիջապէս աշտակից սկսեց թանձր ու դարձահոտ գոլորչի գուրս ժայթքել։ Գոլորչու հետ էլ մահամերձ մարդկանց ձայներ լսուեցին։

— Խլերա պրիմեայի՛... Խլերա պրիմեայի՛... (12)

Գարնաուխովը կատաղեց։

— Հացի փոխարէն ես ձեզ համար քոյերա եմ բերել, որ լափէք, ամէնքըդ մէկ անգամից սաստկէք... Դուք սրանց տեսէք, այդ ծոյլ, անպիտան ու անիծուած արարածներին... Ամիտներով ոչինչ չեն արել, ցարական իշխանների պէս պատկել են եւ հիմա էլ հաց են ուզում... Ես ձեք...

Հաց ուզող մահամերձները արամարանական գտնելով Գարնաուխովի պատասխանը, լռեցին։

— Տաս հոգու խցկեցէք այս վազոնում, — պահակներին կարգադրեց Գարնաուխովը։

Գալանաւորներից տաս հոգի մօտեցան վազոնի դրանը, բայց որովհետեւ վազոնը բարձր էր, աստիճան չկար եւ իրենք էլ ուժասպառ էին, չկարողացան բարձրանալ։

Գարնաուխովը նորից սկսեց հայհոյել։

— Ես ձեք... Հոռո՛թ պա՛պն էք դարձել իմ գլխին, ի՛նչ է... Ուզում էք, որ ձեզ պատգարակի վրայ դնենք եւ մեր ուսերի վրայ բանտից բա՛նա տեղափոխենք... Թո՛ւհ, անիծուած հակայեղափոխական ճրիակներն... Ես ձեք... Ամէն տեղ նո՛յնը, նո՛յնը...

12.— Հաց բերեցի՛՛, հաց բերեցի՛՛...

Նա հասալից յովնարեկ եւ գինուորներին կարգադրեց մէկ-մէկ վեր-
ցընել կալանաւորներին եւ ներս նետել :

— Վանիա՛, Վասիա՛, դուստր...

Երկու հուսկու գինուորներ զժկամութեամբ իրենց հրացանները յանձ-
նեցին իրենց ընկերներին, մօտեցան վագոնի դրանը, բռնեցին առաջին կա-
լանաւորի կողքերից, կարգադրեցին ստեղծը ծախել, եւ վեր բարձրացնելով,
որպէս մի իր նետեցին վագոնի ներսը, թըրք՛մփ...

Ներսից յուսահատ եւ ուժասուգա բողբոներ լսուեցին, եւ ապա՝ առ-
տիճանաբար ժարեցին .

— Տիխօ՛... (13)

— Տիխօ՛...

— Տիխօ՛...

Երբ բոլոր առա հողին ներս նետուեցին, գինուորները մեծ դժուարու-
թեամբ գուռը քաշեցին իր նախկին տեղը, եւ կալանաւորների մեր սիւնը մօ-
տեցաւ երկրորդ վագոնի դրանը : Այստեղ էլ նոյնը : Դուռը բացուեց մեծ դժ-
ւարութեամբ : Բացուելուց յետոյ գարշահոտութեամբ յագեցուած ըզգի
ժայթքեց, շոգու հետ կիսամեռ ժարդկանց ճնշոց բերեցի՛ն, հաց բերեցի՛ն :
բացազանչիւնները, ապա՝ Կարնաուխովի հայհոյանք- բացատրութիւնը : Յե-
տոյ, առա հողու ներս նետեցին եւ ինչպէս առաջին վագոնում, ներսեցիները
պահակներին բարկերթութեան հրաւէր կարգադրին .

— Տիխօ՛...

— Տիխօ...

— Նետու միտու... (14)

Եւ այդպէս շարունակ :

Գնացքի կէսի մօտերը, Հերթը հասաւ ինձ :

— Ես ինքս կը բարձրանամ, — ասացի գինուորներին, երբ նրանք
բռնեցին կողքերիցս, վեր թոցնելու համար : Սակայն նրանք ուշադրութիւն
չդարձրին, եւ ինձ վեր հանելով՝ արագ նետեցին վագոնի ներսը :

Ես ընկալ յատակում խիտ շարքերով պառկած կալանաւորների վրայ,
որոնք խլրտացին եւ դանդաղուեցին .

— Վա՛յ, գլուխս...

— Վա՛յ, փորս...

Ես ուզեցի նրանց բացատրել, որ ես մեղաւոր չեմ, բայց նոյն վայր-
կեանին դրսից, ինձ վրայ ընկաւ մի կալանաւոր, ապա երկրորդը, երրոր-
դը... Նախկին փորձերից խրատուած՝ ես հասկացայ, որ ինձ ընկածս տե-
ղում մնալ չի կարելի եւ առանց ուշադրութիւն դարձնելու յատակին պատ-
կած կալանաւորների իրաւացի բողբոներին, դանդաղներին, նրանց վրայով
մութի եւ շոգու միջով սողացի վագոնի բաց դրան հանդիպակաց դուռը, ս-
րը պոց էր, անշուշտ : Այդտեղ մի կերպ ստեղծիս համար տեղ արեցի պտու-
կածներէ արանքում եւ փայտեայ պատը ճանկուանելով՝ վեր ելայ զժուարու-
թեամբ, շրջուեցի, մէջքս յինեցի պատին եւ մնացի կանգնած :

Վագոնում աղմուկ էր : Ներս նետուածները տեղ չուենէին եւ դեռ յա-
տակին պատկածներէ վրայ էին գտնուում : Նրանց տակը գտնուածները բողբո-
քում էին եւ պահանջում, որ նրանք հեռանան...

13.— Կամաց :

14.— Տեղ չկայ...

ՄՈՌԱՑԻՐ, ՄՈՌԱՑԻՐ, ՄՈՌԱՑԻՐ...

Յոյս նորից Աննա Մորողովայի վրայ էր: Եթէ ժեր պնայքն ուշա-
նար, Աննան կարող էր ինձ հանել առ ի հասպից: Բայց յանկարծ պնայքը
մեծ զզրոցով յե—յեա զնայց եւ կանգնեց:

«Շոգեկատըր միացրին, — մասնեցի ես, — Աննայից յոյս չկայ
այլևս»:

Գնացրի զզրոցից սոյի առան կալանաւորներն սկսեցին նուալ.

— Դայտէ խլերա՛...
— Դայտէ վոդրի...
— Դայտէ վոդրախա՛...:

Գնացը նորից զզրոց աւ յե—յեա զնայց, բայց յանկարծ մէկ անգա-
մից ուժով ձիգ առեց եւ սկսեց զգուշութեամբ շարժուիլ:

«Մենք անցնում ենք կայարանը», — մասնեցի:

Կայարանից դուրս զնայցն արագացրեց իր քայլը եւ սկսեց այլևս
համալսփ ընթացքով առաջ սլանալ...

Պատուհան չունենալու պատճառով՝ վազանի ներսում համառորտ
մուկ էր: Կալանաւորները անքում էին, հասաչում, արանջում, շաց լի-
նում եւ նում:

Ես կպիլ էի պտաին աւ մտածում, թէ ինչ է կալանաւորի օրը: Եթէ
այդ մտքին, ես չգիտէի, թէ ինչ էր ինձ սպասում, երբ գիշերն ինձ քննու-
թեան կանչեց շքեաղ Աննա Մորողովան, իսկ հիմա արդէն ինձ տանում են
մի անյայտ ուղղութեամբ:

Յիշելով Աննա Մորողովային, սիրտս կծկուեց:

— Իսկապէս, իսկ Աննա՞ն, — հարցրի:

Եւ ես լսեցի զնայցի անիւնների պատասխանը.

«Մոռացի՛ր, մոռացի՛ր, մոռացի՛ր...»:

«Ինչո՞ւ», — հարցրի:

«Այդպէ՛ս է, այդպէ՛ս է, այդպէ՛ս է...»:

«Որո՞ւ իրաւունքով», — հարցրի:

«Իշխանութեա՞ն, իշխանութեա՞ն, իշխանութեա՞ն...»:

«Իսկ մարդկային իմ իրաւո՞ւնքը», — հարցրի:

«Միծաղելի՛ է, ծիծաղելի՛ է, ծիծաղելի՛ է...»:

— Իրաւո՞ւնքս, հարցնում եմ, — աղաղակեցի ես եւ «թափուեցի
խենթանալուց»:

Մեր զնայքը զնում էր աւ զնում: Երբ այն մտնում էր կայարան-
ների, զնո հետուից սուլում էր ջղային-թարկացոտ եւ զգուշական եւ ապա
թափով անցնում էր կայարանները:

Կալանաւորների զնայքները կայարաններում չէին կանգնում:

(Շար. 2 եւ վերջ)

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆՃԱՆ

Ա. Գ Ա Ր Ա Լ Է Գ Ե Ա Ն

ՎԵՐԱԳԱՐՁԻ ԵՐԳ

Անկաշկանգ մայրերու մշուշու մեղհերէն
Արշալոյսներ հաւաքած՝
Աշխարհսի եւ կու գամ:

Կու գամ՝
Ընդդէմ օրէնքի, քանդակուած չափի,
Միայնագային ճանճրոյթէն յոգնած:

Օ՛, բնութիւն անհորիզան,
Յարափոփոխ աշխարհ ծով խորհուրդներուն
Դարձայ եւ գիրի,
Ու բարձ քննուկ՝
Անբացատրելի մարդու, անվիճելի Աստուծոյ,
Կրճառ օրէնքներու եւ վիճելի ժամանակի:

Անա փորճի նետրոյնուս ողջ տարերբով
Պարարտ հոգի երգմնալից յանրժացման
Ու ցանեցի տարածքներու սնանկութեան
Իմ երկնագմբէք լեռներէս բուս մը սերմեր,
Որոնց ծլարձակման հանգէսիմ՝
Պիտի հասունմայ
Վազուամ յարածուփ խենթին հարսնացումը բուրեան:

Ա. Գ.

ՄՈՎՍԷՍ ՊԶԱԲՃԵԱՆ

Կ Ա Տ Ո Ւ Ն . . .

1

Շարաթ երկկոյ էր :
 Շիշ մը գինի ձեռքին՝ ժազ կ'անա-
 պորէր : Երբ չէնքի դարպասին հասաւ,
 սանդուխները մութի մէջ էին դարձեալ :
 Ինքնաշխատ լոյսը դարձեալ աւրուած էր
 ու ժազ հայհոյանք մը արձակելով չէն-
 քի տիրոջ հասցէին, սկսաւ բարձրանալ :
 Պատուներու հետ անմիջական հանդի-
 պումէ խուսափելու համար՝ «փրստ,
 փրստ» գոչելով ու խարխափելով հասաւ
 սանդխամատի վերջին հանգրուանին, երբ
 վերէն լսուեցաւ կնոջական ձայն մը .

— Միտու՛, միտու՛, ձեռք կատուն»
 քեզի կը սպասէ . . .

«Մեծ կատուն» Սիւլվան էր : Ան ա-
 նապարանքով մը կանխած էր գինք ու
 նստած վերջին աստիճանին, ծունկիկը
 դէպի վեր անկած ու ոտքերը քաշած ի-
 րեն : Աղջկան այդ դիրքով գինք սպասելը
 քիչ մըն ալ խթանեց անոր հետ ունենա-
 լիք ամէնէն մտերիմ հանդիպումին կա-
 րօրը : Ժազ յաճախ մտածած էր, որ աշ-
 խարհի դեղեցկազոյն քալլոն աղջիկ մըն
 էր, ճիշդ այդ դիրքին մէջ, իսկ աշխար-
 հի անդուդական ու շարժուն դեղեցկու-
 թիւնը բարձեւ աղջկայ մը դանդաղ

վազքէ էր, երբ կոնքը, կուրծքերը եւ
 վարտերը խելացնոր կշռոյթով մը կը ցը-
 ցուին, կը խնթացնեն արունները, ստեղ-
 ծելով բնութեան մեծագոյն գլուխգոր-
 ծոցը . . . :

— Ինչո՞ւ ուշացար . . .

Իբրեւ պատասխան՝ ժազ խելայեղօ-
 րէն զրկեց աղջիկը ու անհարակորէն պե-
 տին ձգեց գինիի շիւք : Սիւլվայի գիրկին
 մէջ պահուած պահարանն ալ ինկաւ գե-
 տին : Շիւք ջարդուփուշը եղաւ, իսկ գե-
 տին իջաւ աստիճաններն ի վար, ծածկե-
 լով նսեւ Սիւլվայի ձեռքէն ինկած պահա-
 րանը : Ատանց կարեւորութիւն ընծայե-
 լու ջարդուածին, ժազ համբուրեց, համ-
 բուրեց, համբուրեց, մինչև որ հեւա-
 պտու եղան երկուքով :

Պատասխան վայրկեաններուն յա-
 շորդեց զգաստութեան կարճ զազար մը :

— Պատու, հա՛, մե՛ծ կատու ան
 ալ . . . :

Դարձեալ բան մը կտարեցաւ . . . :

Տարօրինակ էր : Ամէն անգամ, որ
 հանդիպէին, բան մը պիտի կտարէր ան-
 պայման : Բան մը պէտք էր ջարդուփը-
 շուք ըլլար : Սուրճի կամ գինիի դուաթ
 մը, պնակ մը, օր մը նոյնիկ մահճակա-
 լին քանի մը զսպանակները չէին գիժա-
 ցած ժազի ու Սիւլվայի բունկումին եւ

փճացած էին՝ գոհունակ ճոխն էլ արձա-
կելով...

— Տխա՛ մը բերած էի քեզի:

Երբ Միլվա ծոնցաւ ու փորձեց գինե-
թաթախ պահարանը վերցնել, ուրախու-
թեան ճիչ էր արձակեց...

— Ձէ կուտրած... չէ կուտրած...

— Բախտաւոր ես...

— Բայց քեզի համար բերած էի...

— Միա՛ յն...

— Նաեւ ինծի համար...

— Գարապ բաներ կը բօսինք:

Գինիի կաթիլներն ու կուտրած շիշը
ձեռքով իրենց վիճակին, առն ժառան:

— Լոյսը մի վտակ...

— Արդէն պիտի շվտակէ...

Ժառ անգամ մըն ալ իր թեւերուն մէջ
առաւ Միլվան:

Բայց Ժառը չէ, որ իր թեւերուն մէջ
կ'առնէր Միլվան, ոչ ալ Միլվան՝ Ժառը:
Անոնք կը փարէին իրարու հաւասար ժը-
ղումով, հաւասար ուժգնութեամբ, հա-
ւասար կիրքով, հաւասար սիրով: Միլ-
վային հեա Ժառ կը նմանէր այն մար-
դուն, որ բախտախաղի սեղանին նստած՝
կը շահէր, կը շահէր անդադար, կուտու-
կելով անպարագիծ երանութիւն:

Թէեւ առաջին անգամ չէր, որ Միլ-
վան իր սենեակը կու գար, բայց իւրա-
քանչիւր անգամ Ժառ կ'ապրէր բոլոր-
ովին նոր խաղի մը: Իւրաքանչիւր հան-
դիպումի՛ աղուն կը թուէր, որ առաջին
անգամ ըլլալով անոնք երկուքի կը բաժ-
նեն աշխարհը: Իր սենեակը մէկ կողմ ու
մնացեալը, ամբողջ մնացեալը միւս
կողմ...

— Բայց կատուներէն ինչո՞ւ այս-
քան կը վախնաս...

— Ոչ թէ կը վախնամ, այլ կը զըժ-
ւիմ:

— Բայց ինչո՞ւ:

— Գիտե՞ս, որ կատուն ինծի համար
ամէնէն անբարոյական, ամէնէն անը-
կարունք, ամէնէն զգուշի կենդանին է:
Անոր նազկանճիմ քայլածքն ու պոռնի-
կի նայուածքը ահուկիտէն կը ջղազը-
զրուն գիս...

— Ձէի գիտեր, որ կենդանիներն ալ
անկարունք ու անբարոյական կրնան ըլ-
լալ կամ պոռնիկի նայուածք կ'ունե-
նան...

Գիչ հոք անոնք արդէն կ'ապրէին
ժահնակալի վայելքը: Յանկարծ աղջի-
կը մտաւ Ժառի կուրծքի թաւուտին մէջ
ու երկա՛ր, երկա՛ր ժամանակ կորսուե-
ցաւ: Երբ վերադարձաւ, համբոյրներով
ողողեց Ժառի դէմքը, վերջ: Երկար ժը-
նաց ականջի բլթակին վրայ: Երբ Ժառ
փակ աչքերով աւելի կը խորանար երա-
նութեան ծոզուն մէջ, յանկարծ իր միտ-
քին մէջ աղջիկը զուգորդուեցաւ կատուին
հեա եւ աղուն թուեցաւ, որ բազմահա-
զար կատուներ կը լիզեն իր մարմինը:
կը ճանկեն ձեռքերէն: Ժառ սարսուռց:

Երբ աչքերը բացաւ, անդրադարձաւ,
որ մէկ ժամէն կիրակին պիտի սկսէր:

— Այս գիշեր քովդ պիտի մնամ...
Ժառին կը մտար խենթանալ...

2

Շարաթ: Յեամիջրէ:

Մինչ ամբողջ աշխարհ կը պատրաս-
առէի միլիոնաւոր համբոյրներ փոխանա-
կելու, միլիոնաւոր բաժակներ պարպե-
լու, միլիոնաւոր ցաւեր առժամուպէս
մտածալու, մինչ Միւրան կը հանդիպի
Միլվային, Թոպերթ՝ Անիթային, Կոզէ՛
Մարիային, Սամիր՝ Սուլէյմային, Ժառ
անցած է իր նախընտրած մեքենային դի-
մաց ու պահանջուած գումարը մօտեկէ
հոք յանն առած է գոյն: Մեքենան զըթ-
թոյ աչքեր ունի, գանգեր, տրամաբա-
նութիւն շինելու եւ քանդելու համահա-
ւասար պատրաստակամութիւն: Ու ինչ-
պէս ամէն խաղ, այս մէկն ալ ունի իր
որէնքները: Ան ենթակային պատեհու-
թիւն կու սայ օգտուելու, շարանալու,
հրճուելու, արտմելու, միշտ արդար բա-
ժին մը հանելով լծայքին, դիպուածին,
բախտին:

«Այս մեքենային ենթակայ գնդակ-
ները կը նմանին կեանքին մարդ հակին
չնորհած պատեհութիւններուն: Մէկ դըն-

զակը հրաշքներ կը գործէ, ժիւղձ՝ ազէտներ: Մէկը՝ ենթակային արտապետութեան տակ՝ կը բարձրացնէ գինք հաճոյքի ու նուաճումի գագաթները, ժիւղը կը գլորէ անանկութեան խորխորատը...

Գնդակին հետ այս մտածումներն ալ կը գլորին ու կը զարնուին ժադի արդիւնի պատերուն ու ան կ'անդրադառնայ, որ հարցերը լրջացնելու արտօմակը համաժողովներ կը ստանայ: Ի՞նչ կապ այս մեքենային ու կեանքին միջև: Կը ծիծաղի ինքն իր մտածումին վրայ: Միկարէթին ծուխը կը զաչէ թոքերուն մէջ ու կը զիտէ շուրջը: Մեքենաները շարժած են քով քովի, նոյնանման ժպտաներով, քաւ-քաներով, լոյսերով: Բարաքանչիւրը ունի իր անունը եւ ծիծաղի եղանակը: Պահ մը այդ մեքենաները կը նմանցնէ մեծ քաղաքներու մայրաքաղաքներուն, որոնք քով քովի շարժուած, իւրապատուկ գրաւութեամբ կը ժպտին շարժուակ, գին կ'որոշին ու յօժարակամ կը գոհացնեն խնդրարկուն պահանջուած դուժարի մը փոխարէն:

Շնայց այս մեքենաները աւելի պարկեշտ են, չէ՞...: Ի՞նչ գիւտ...: Անշուշտ որ աւելի պարկեշտ են...: Սակայն համեմատութեան ի՞նչ եզր: Անմաստ մտածում մը եւս: Անպարկեշտութիւնը կը վերաբերի մարդ արարածին միայն...: Հապա կատունե՞րը...:

Ժազ դարձեալ կ'անդրադառնայ, որ յիմարութիւններու յորձանապտոյտին մէջ ինկած է մտածումներու շղթան: Ան քանի մը խազ ետ կը խաղայ, կանգ կ'առնէ, ու դարձեալ շուրջը կը դիտէ: Բոլոր մեքենաները ունեցած են իրենց յաճախորդները: Կարգ մը մեքենաներ ունեցած են նոյնիսկ երկու կամ չորս յաճախորդ...: Ի՞նչ հեղանք...: Կը յիշէ այն օրերը, երբ քանի մը ընկերներով կը գոհանային նոյն պոռնիկէն...: Երաժշտութիւնը կ'ամբողջացնէ մեքենաներուն ջրքիջը: Ահուլի աղմուկ է: Բոլոր մեքենաներն ալ անցած են գործի: Ձախի՛ն՝ մանչուկ մը կը շարժարէ մեքե-

նան անփորձ սիրարանողի մը ծման, ալի՛ն՝ աղլիկ մը անտարբերօրէն կը խաղայ ժամանակ սպաննելու ակներեւ անհոգութեամբ, զրեթէ առանց կարեւորութիւն տալու արձանագրուած արդիւնքին: Անդին՝ ծերուկ մը կը փորձէ զբողոքել մեքենային արտօմակը, իսկ զիջ մը հետան, զոյգ մը ժիւղին կը խաղան: Նոյն մեքենան տարբեր բան է այդ աղլիկան ու աղուն համար: Մինչ ինք իր մեքենային տուած է իր ընկերուհին փոխարինողի պաշտօնը, անոնք վերածած են զայն միջոցի մը, միջնորդի մը, անոր տալով պարզապէս կատար պարտականութիւն մը...:

Վէ՛, վերջապէս ամէն բան, ամէն բան յարաբերական է կեանքին մէջը, կը մտածէ ժազ, կը վերադառնայ իր մեքենային ու կը գրկէ զայն ամբերով: Կը ըսկըսի յարաբերութիւնը: Պարզ:

Ժազ կը հարուածէ ու բախտախաղի թուղթերը ներկայացնող կանգուն ստեղծները կը սկսին ինչալ մեառադայ փայլուն զնդակի հարուածներէն:

Կը կորսնցնէ տառլին զնդակը: Տապալած են արդէն թիւ սեղը, եօթը, տասը, վալէն, փափաղը: Երկրորդ զնդակը ոչ մէկ առաւելութիւն կ'ապահովէ:

Երրորդը՝ նոյնպէս:

Ժազ կը ջղայնանայ: Կը հայհոյէ...:

Չորրորդ զնդակը աւելի փայլուն խաղարկութիւն մը կը ցուցաբերէ, կը հարուածէ անխնայօրէն, կը տապալէ մնացած ստեղծները, կը վերադառնայ՝ ժազի մը դուժով դարձեալ դէպի վեր ուղղուելու համար: Թիւերը կ'արձանագրուին իւրաքանչիւր հարուածին, իւրաքանչիւր ստեղծի տապալումին: Ժազ կը ցնցէ մեքենան: Բոլոր քարթիւրը ինկած են, բացի մէկէն: Հոն, վերը, կեդրոնը, տապալած վալէին ու փափաղին միջև անպատկառ ճաղիկը՝ կը մնայ կանգուն...:

Հինգերորդ ու վերջին զնդակն է: Վերջին պատեհութիւնը:

Գնդակը կը սկսի երթնելու, զարնելիլ ճաղիկան՝ երկու կողմերուն, կը վերադառնայ, յիմար շարժումներ կ'ընէ,

անխնայ փոխանցումներու կ'ենթարկէ ինքզինք, զանգերը կը կատարեն, թիւերը կը շարունակեն արժանազորութիւլ, բայց շաղկիկը կը շարունակէ մնալ կանգուն: Ժառ կը ջղայնանայ: Գէպի նուաճում միակ արգելքն է ան: Հայհոյանքով սարսամ ուժեղ ցնցում մը ու մեքենան կը խրաչի, լոյսեր կը մարին, զանգերը կը գաղբին զօղանջիւղէ, ու արտութիւն մը կ'իջնէ մեքենային ու ժառին վրայ:

— Վա՛յ պոռնիկ, — կը զուէ գրեթէ բարձրաձայն:

Բայց չէ՛ր գիտեր, որ պէտք է քնքշուրէն վարուէր մեքենային հետ: Չէ՛ր գիտեր, որ կարելի է միայն որոշ շափով ցնցել մեքենան, այլապէս...

Գիտէր:

Բայց ինչո՞ւ նոյն մեքենան երկու ասրերի անձերու արամադրութեան տակ նոյն կեցուածքը չ'ունենար: Երբ Սերոբն է ցնցողը շատ աւելի ուժգնորէն, բան ինք, մեքենան հնազանդորէն կը շարունակէ արժանազորիլ թիւերը, զնդզնուլ, քրքրուլ, անդադար աչքերը թթթիւով:

— Պէտք է ցնցել գիտնալ, ինչպէ՛ս որ պէտք է լոյսի գիտնալ...

«Il faut savoir, il faut»: Ազնուարեան «Il faut» մը...

«Օ՛ր, Սերոբը այնքան կը շարժարէ այս մեքենան, բոլոր մեքենաները, բայց կարծես անսօք աւելի հանոյք կ'առնեն այդ տառիզմէն ու կը կատարեն...»:

«Նոյնը չէ՞ պարագան աղջիկներու հետ: Աղջիկ մը համաձիտ է ազայէ մը վարկարեկուելու, ապաստուելու, անարգելու, բայց զարձեւալ իր շնորհները շղթանալու նոյն ազուն, երբ այդ կը պահանջուի. մինչ ուրիշ մը նոյնիսկ հասարակութիւնը կը խրաչնցնէ նոյն աղջիկը...: Բայց, բայց, բայց ասիկա մեքենայ է, միւսը շնչող էակ...: Ինչո՞ւ չ'ո՞րհի երկուքը իրարու հետ»:

Բայց ինչո՞ւ շարունակ աղջկան մասին կը մտածէ, նմանութիւններու ուրիշ կերպ գոյութիւն չ'ունի՞ն: Եկած է հոս՝ հետանալու համար, մտանալու համար է՛ր: Իսկ հիմա այս մեքենային հետ կը

փորձէ ժողով միտի պահանջը, էդի պահանջը, Սիւլվայի պահանջը...:

Ու յանկարծ սրահին մէջ յորդող երամշտութեան ու երգերուն շարքէն երգի մը բառերը կը ցնցեն զինք.

Impossible to live with you,

But I know I could never live without you...

Ժառ զլուիք կը շարձէ հեղանքով: Այս երգին բառերը, իրրու սեփական սարսամի արտայայտութիւն, առաջին անգամ լսած էր Սիւլվային: Այս այն ձայնապնակն է, որ որ մը ինկած էր Սիւլվային ձեռքէն ու թաթխուած ժառի գիւնիին մէջ: Գան՛/ անգամներ Սիւլվա կրկնած էր այդ երգին բառերը, ըսած էր, թէ ամէն նոր որ թիչ մը աւելի կը սիրէ զինք, բայց ժամանակ մը ետք, անժամանակորէն, կը ստանար «Քեզ այնու շեմ սիրեր» մը նոյն աղջիկէն...:

Ժառ յանկարծ ինքզինք այնքան յորձած կը զգայ: Մտակայ ինքնաշխատ մեքենային զուտի մը սուրհ կ'առնէ, սիկարէթ մը կը վառէ ու կը գիտէ լուրջը: Հետուի զոյգը մեկնած է՝ «նախերգանքէն» ետք մանկու համար «Ինքի» մէջ: Ձախի մանուկը զրպանները կը խոսնէ՝ նոր գրամանիլ գտնելու յուսահատ ճիգերով: Իսկ այն աղջիկը կը շարունակէ մնալ այն, սակայն խաղէն աւելի իրմով հետաքրքրի:

«Գանի մը խաղ եւս խաղած ու երթում այնու: Նախ՛ կրնամ թիչ մը նովեղերը երթալ, յետո՛յ՝ աւել, կը մտածէ ժառ: Սուրհին մնացեալը մէկ ուժգով վերջացնելով կը մարէ սպասած սիրարէթը, նոր գրամանիլ մը կը մտածէ ու կը սկսի նոյն արարողութիւնը:

Բայց՝ ո՛չ: Երբ զնդակը կ'արձակէ գէպի ստեղծերը, մեքենան յանկարծ արբամազրութեան փոփոխութիւն մը կ'ունենայ: Ան ազուն ենթարկուելու ախորժակ մը կը յայտնարիէ:

Տրամադրուած հինգ զնդակներէն առաջինն է սակաւին ու բազմաթիւ քարթիւն հետ ինկած է նաև այդ պոռնիկը: Այս անգամ առանց զիմազրութեան:

Ժազ կը շարունակէ հարուածել: Գնդակը աղուն տիրապետութեան ասկ ինքզինք կը գերազանցէ, կը պարէ, կը վազէ հոս ու հնո, կը ցտակուտէ: Այդ երկաթեայ ծանր դունաք ճապուկ շարժումներով կ'երթնակէ, սիւնը եզերող պարանին պարունոց յաղթական ու շրժացած կոխամարտիկին նման, ու վերջուպէս կը նուաճէ բոլոր քարթերը, պարտադրելով, որ մեքենային բոլոր լոյսերը վառին: Առաջին զնդակն է ասկաին, ու քանի մը թիւ ալ արձանագրելով՝ առաջին յաղթանակին արձանագրութեան ձայնը ուղարկութիւնը կը դրուէ նաև աջին կանգնած աղջկան, որ իր մեքենան ձգած կը ժպտի՝ Ժազին շարժումներուն հետևելով: Թէև խաղը կեղբոնացում կը պահանջէ, բայց աղուն նայուածքը ակամայ կը բարձրանայ ու ան կը ժպտի աղջկան: Նայուածքները կը բախին իրարու, բայց շարժումները կ'ըլլան: Ժազի սիրտին մէջ կուտակուած գառնութիւնը Սիլվային եւ իր սեռին հանդէպ կը զգուշացնէ զինք:

Երկրորդ զնդակն է, ու յաղթանակի վեց կէտեր արձանագրուած են սեռի փոքրիկ պատուհանին մէջ: Գնդակը աւելի կը կատարի: Մեքենան աւելի բարձրագակ կը զբժլայ, կը հասնի հանոյքի իր գազաթնակէտին ու լոյսերը ամառական օրերու փայլք կը ստանան:

— Հրաշալի է, պուստ'...

Քոմը կեցող աղջիկն է:

Կարեւորութիւն չի դարձներ: Կը լաբունակէ խաղալ ու խոյանալ նուաճումէ նուաճում: Իսկ երբ կը կորսուի հինգերորդ ու վերջին զնդակը, Ժազ ձրի խաղալու տասը իրաւունք ձեռք ձգած է արդէն: Տասը խաղ կրնայ խաղալ առանց վճարումի: Կը շտկէ կոնսակը, սիկարէթ մը կը վառէ ու կը նայի շուրջը...

— Պուստ', հրաշալի է...

Ժազ չի պատասխաներ:

Կը սկսի ձրի խաղերուն: Ձրի խաղ... Տղան կ'անդրադառնայ, որ խաղալու ցանկութիւնը նոյնը չէ այլևս, իսկ մեքենան կը նմանի իր մարմինը ձրիօրէն առաջարկող պերճագիծին: Ձրի խաղը չի

յաջողի լարուած պահել զինք: Նուաճումն րան մը դարձնալ նուաճելու կրակը հազիւ կը պլպլայ մէջը: Կը խաղայ յուրօրէն, անարբերութեամբ, առանց նիզի: Իսկ զնդակները կը կորսուին առանց զրգուելու Ժազը:

Սաղը կործնուցած է իր կշռոյթը ու ճապագած, իսկ ջովը կեցող աղջկան ջերմութիւնը կը ճնշէ վրան: Դէմքը կը դարձնէ անոր կողմը: Բայց ի՞նչ կ'ուզէ ան... Ինչո՞ւ կը ժպտի: Ինչ հոս եկած է, որպէսզի խուսափի աղջիկներէն ու խաղայ մեքենային հետ, խօսի մեքենային հետ, կուտի ու սիրաբունի մեքենային հետ...

Բայց յանկարծ բառերը ակամայ գուրս կը սպրդին բերնէն.

— Հրամայեցէք, խաղացէք...

Ակամայ... Արդէն սկարացա՞ւ: Ահագին աքնած էր, գրամանիչ մուծած՝ այդ արդիւնքը ձեռք ձգելու ու վայելելու, հրմա այնքա՞ն գոռաւ ձեռք ձրուած այդ յաջողութիւնը, ձրի խաղալու իրաւունքը այնքա՞ն անմտօրէն կը զիջէր անծանօթ աղջկայ մը...

— Շնորհակալ եմ:

Ժազ կը զղջայ, բայց այս անգամ նայուածքը կը դաւաճանէ իր որոշումին, ու ակամայ կ'երթայ աղջկան նուրբ կուրծքերուն, կ'իջնէ մէջքին, սրունքներուն, ապա կը բարձրանայ դէպի վեր՝ Ժազին մէջ խրտացնելով զսպուած ցանկութիւնը: Մէջը կը սկսի անիւ կարօտը...

— Այդպէս մի ցնցեր, Հանգարտ խաղա՛, — կ'ըսէ Ժազ ու ձեռքը, գարձեալ ակամայ, կը Հանգի աղջկան ձեռքին վրայ, մեքենան կը ցնցուի ուժգնօրէն ու լոյսերը կը մարին...

— Դո՛ւն էիր յանցաւորը, — կը զճանկուտէն անծանօթ աղջիկը:

Քանի մը վայրկեանի մէջ ան արդէն վատնած է քանի մը խաղ: Բայց Ժազ ինչո՞ւ կը դաւաճանէ ինքնիրեն... Այդքան սկա՞ր է: Առաջին փորձութիւնն է այս ու ան կը զգայ, որ սոյթաբուսի ախորժակը կը ծաւալի հոգիին մէջ...

Մտածումները թնճուկի կը վերածուին :

«Քեզ այլեւս չեմ սիրեր...»

Սիրվալի այս բառերը նուազեցնելու շափ յուզած էին զինք, դառնացուցած ու լլկած իր ետը: Իր սիրուհիին հետ ունեցած կապը՝ ունենալէ ետք պնդութիւնը շոգնանալը քարափին կապող եւ զայն զսպող պարանին տոկունութեան, ապա կարճ շրջան մըն ալ վերածուելէ ետք աղջիկներու մէջէն յուշորէն պըլլաող դատիկ մը մեղկութեան, վերածուած էր անձնասպանութեան համար զործածուած, առատադէն ամբարշտած պարանին, որմէ երեքացած էր Սիրվալի սէրը...:

«Քեզ այլեւս չեմ սիրեր...»

Ժազ չէր կրցած հաւատալ, որ նըման անեղ սէր մը կրնայ անակնաւալ: Ու եթէ պէտք է սպրէր առանց Սիրվալին, ուրեմն պէտք է սպրէր հեռու բոլորէն, բոլոր աղջիկներէն, բոլոր կիներէն:

Տարօրինակ էր: Ամէն անգամ, որ հանդիպէին, բան մը պիտի կտարէր: Բան մը պէտք էր վարդուփշուր ըլլար: Սուրճի կամ գինիի գուտաթ մը, պնակ մը ու, վերջապէս, կտորած էր ժազի սիրտը...:

Իսկ քանի մը շարաթէ ի վեր այս մեքենան էր իր ընկերուհին: Մոզն էր իր ընկերուհին: Գիրքը: Ծառաբուր: Բայց ահաւասիկ ուրիշ աղջիկ մը...:

«Ո՛ր, ուրիշ աղջիկ չկայ...: Պէտք չէ՛ սկստանամ...»:

Ու առանց բառի, առանց նոյնիսկ աղջկան անունը իմանալու՝ զաշտազոյի դուրս կու գայ այդ խաղաբանէն:

«Ապուշ, պառօ, սպուշ, պառօ, սպուշ, սպուշ...»:

Սակայն միտը արթնցած է, իսկ բանականութիւնը կը նահանջէ: Ժազ կը մտնէ արճարան մը ու այդ գիշեր պարպուելիք միլիոնաւոր գաւաթներէն եր-

կուքը ինք կը պարպէ...: Երկրորդ ուրեքիին դերը վճռական է: Ուրիշ կ'ելլէ, արագօրէն կը վճարէ, փութկոտ քայլերով, զրեթէ վազելով կը վերադառնայ այդ զրօսարանը, իր մեքենային առջեւ անծանօթ աղջիկը վերագտնելու...:

Սակայն դուրս կու գայ յուսախար:

«Ճառ որ հոն չէր», կը մտածէ Ժազ կեղծ մխիթարանքով մը, մինչ կ'երբը միահեծան կ'իյնէ արամարանութեան վրայ:

«Եթէ պէտք է սպրիմ առանց Սիրվալին, ուրեմն պէտք է սպրիմ հեռու բոլորէն, բոլոր աղջիկներէն, բոլոր կիներէն...»:

Պէտք է... պէտք է... պէտք է...

Կը սկսի քալել, իսկ հողիին մէջ կը տողանցեն միլիոնաւոր կատուներ: Կը շարունակէ քալել ու քիչ մը շատ ուշ կ'անդրադառնայ, որ ոտքերը դիմաց ակամայ կ'առանջնորդեն մզկիթին դիմաց շարունակ սպասող այն կաւասին, որ կին կը հայթայթէր իրեն եւ ընկերներուն, երբ կենց միտին պահանջը զգային:

Ու անպարանջին մէջ, յանկարծ կը յիշէ տարիներ առաջ կարդացած մէկ հարցումը, թէ «Նորգեհի ենթարկուած ասան մը մէջէն ո՛րը պէտք է փրկել, երբ ընտրութիւն մը անհրաժեշտ է. Ռամպրանթի դուրսագործոց կտա՞ւ մը, թէ ողջ կատուն», ու անգամ մը եւս համամիտ կ'ըլլայ տրուած պատասխանին. «ԿԱՏՈՒՆ»:

«Ո՛ր թէ Ռամպրանթ, այլ... այլ... այլ...», կը մըմնջէ Ժազ մունչելու պէս, ու կ'անապարտէ...:

Քիչ ետք, պտտիկի մը անկողնին մէջ, երբ Ժազ աչքերը կը փակէ, իրեն այնպէս կը թուի, որ կատու մըն է իր մարմնին մերկութիւնը լիզողը...:

Կը յիշէ Սիրվալին, «մեծ կատուն» ու կը սարսուռայ...:

ՄՈՎՍԷՄ ՊԶԱՔՃԵԱՆ

ԿՈՐԻԻՆ ՇԱՀԻՆԵԱՆ

ԱԳԱՄԱՄՈՒԹԻՆ



Ապրումի շիրմափուն և անսովորի նախանշանը ժա-
նադ այս երկամարդը, Կորին Շահինեան, Հալեպի շրջան
Եփեսոս ճեմարանի նարաւորաներէն է և և՛ իւր սուղարուի առա-
ջին անգամ:

Մեր սրամազրութեան առկ ունինք իրմէ փունջ մը գերթ-
ւաններ, զորս պիտի ներկայանանք պարբերաբար:



Ազամամութիւն
Երբ երազները ամենաբարձր ջերմաստիճանը կը մատնանշեն
Երբ քունն ամենէն շատ ցանկայի է
անդիմադրելի
Երբ մանուկները իրենց քունին մէջ կը յիշեցնեն
հրեշտակներ միայն
Երբ աստղերը
Մթնշաղի լոյս ու մուշ արգանդին մէջ կը վերածուին
լուսէ ցօղերու
Յօդերն այս
Լուսաբիրնդ ցօղերը ջինջ
Կը գարշարեն ծաղիկներու առուտեան համերգն անձայն

Ազամամութիւն
Երբ քաշումները տերեւներուն հետ կը համերգեն
դաշն ու շնորհայի
Երբ ստուերները կրկին կը մերկանան
իրենց սգաւոր պատմութեաններէն
Երբ հողը հրաջրովէժ իր արիւնով փափկաթելու
կրկին-կրկին իր արգանդին
խայտանքներով կ'երգանկանայ
Երկիրը
Գործարաններու ծուխը շնչած քոֆալիս երկիրը
Յիշողութիւնը կարսնցուցած ծերուկի ցէտ
Կը մանկանայ-կը մկրտուի տապանին մէջ բնութեան
Իմաստութեամբ ու ջինջութեամբ իր արարման Եփեսոսը Օրին

Վ Ա Խ Ս

Այդ ե՞րբ էր ես սկսայ
Վախնայ նուս իմ շուքէս :

.

Իմ մանկութիւնքս արդէն
Արագօրէն
Ինձմէ՛ հեռու, ինձի շատ մօտ՝
Բռնապետեալ սրտիս մէջ
Լուս, աներագ մաքրայի պէս կը մնըէր :

Այդ ե՞րբ էր ես սկսայ
Ծնունդքս իսկ չյիշել :
Իմ մանկութեան շուրջ բոլոր
Պատմութիւն մը պղտոր
Անգոյն ուստայն էր կապեր :

Այդ ե՞րբ էր ես սկսայ
Սրբութիւնները խաչել,
Նոր աստուածները ծախել :

Մանկութեան կը մնայ
Շուքն իմ անբիծ՝
Իրբեւ միակ յիշատակ,
Իրբեւ միակ չափանիշ :
Ու կը վախնամ ես հիմա
Ձափանիշէն այս միակ,
Որուն արմտան ամբօրէն
Մէջքս, մէջքս է խրած :

Այդ ինչպէ՞ս ես չգտացի,
Թէ ինձի բան չմնաց :
Այս ինչպէ՞ս ես գտայի...
Երբ գտցում չունէի :

Ոչնչութիւնն իմ ինչպէ՞ս
Ձափանիշով այդ չափեմ.
Երբ կը վախնամ իմ վախէս՝
Իմ այսօրուան միա՛կ, միա՛կ
գգացումէս...

ԿՈՐԻՆՆ ՇԱՀԻՆՅԱՆ

4. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

ՀՈՐԻԶՈՆԵ ՀՈՐԻԶՈՆ

ԺԲ.

Մեր Լեոնաշխարհը արեւի խաւարում շատ է տեսած...

Այսպէս, իրարու յաջորդող անշափելի վերելքներն ու վայրէջքները տեղի ունեցան երեք տարիներու ընթացքին: Մեզի համար երեք դարերու կեանքի ծանրութիւնն ու հպարտանքը կայ արձանագրուած այդ օրերու ժայռակերտ յուշարձանին վրայ... Յուշարձան՝ որ կերտուեցաւ հերոսներու արեան եւ սկզբներուն շողախով:

Այսօր, երբ հայեացքս կը դարձնեմ այդ հին հորիզոններուն, վիշտով կը լեցուի սիրտս:

Բայց դերաւոյն մխիթարանքը սիրտս կը սփոփէ:

Հայաստանը մնաց...

Հայաստանը կերտող այդ սերունդը արդէն պատմութեան անցած է: Յիշատակներ միայն մնացած են, բայց ժայռակերտ Հայաստանը կը մնայ իբրեւ յուշարձան անոնց, ու անոնք կը մնան անմահ՝ ժայռէ արձանին նըման:

Այս ապրումները աւելի ըմբռնելի պիտի ըլլան դաւիթ սերունդներուն:

Այդ հին օրերուն զործող որբա՛ն սիրելի ընկերներ կորսնցուցի, մէկը՝ դինակից, միւսը՝ նուիրեալ գործակից, ոմանք՝ անուանի ղեկավար, Հայաստանը կերտող զինուորական եւ մտաւորական առաջնորդներ:

Այն օրերուն, թէեւ տարիքով փոքր էի, բայց գործակից էի անուանի ղեկավարներուն, որոնք, իրենց պարտականութիւնը լրել կատարած՝ հպարտութեամբ կը հեռանային մեր արիւնտա աշխարհէն:

Ու հղան ղեկավարներ, որոնք մեզի հետ բունցին դաղթաշխարհի ճանապարհը: Ռուբէն, Գիւլիսանդանեան, Ս. Վրացեան, Խատիսեան, Շ. Մխարհեան, Յովհաննէս Տէգլենեան (Արմէն Սեւան), Ս. Արարատեան, Վ. Նաւասարդեան եւ դեր կատարած ուրիշ գործիչներ նետուեցան արտասահմանի

տարածքին, երկրէ երկիր, իրարմէ հեռու, ու երբեմն ալ համախմբուած այս ու այն կեդրոններուն մէջ,

Մարմնով ստար աշխարհի մէջ, բայց սիրտով՝ միշտ Հայաստանի հողին վրայ...



Այս թռիչքով անցայ այն օրերու բազմակողմանի կեանքին վրայէն: Վասնզն ու յաղթանակները իրարու յաջորդեցին, օրը տարիի վերածելով: Գործիչ, նահանգապետ, խորհրդարանի անդամ, նախարար: Պաշտօններ չէին, որ կը ստանձնէինք մենք: Գործ ու մասհոգութիւն. դիշուք թէ ցերեկ: Ետար զրի շտանուիք: Ինծի կը մնայ անցնել այդ իրադարձութիւններուն մօտէն, որոնց պատմութիւնը եւ վկայութեան արժանի արարքները զրի առնուած են իմ հրատարակած հատարներուն մէջ, Բայց հոգեկան իրողութիւնները թաղուած մնացին հողիս նաչքերուն մէջ:

Կարծես վիշտէ մը քունուած՝ կը կրկնեմ այս տպւումներս: Այժմ աստե՛ն է, որ այդ տպւումներուն գաղանթքը յայտնեմ ընթերցողին, որպէսզի լուսարանուին այս երկրումներս: Գուշ ընէ՞՞ առաջամտներս:

Պատերազմի ամբողջ շրջանին եւ Հայաստանի անկախութեան երկու տարիներուն յուշեր զրի կ'անտէի: Յուշեր՝ եւ ոչ թէ պատմութիւն: Ամէն անհատ ներքին աշխարհ մը ունի, ու ներքին այդ աչքերով կը տեսնէ իր սիրտին ու միտքին հոգի երեւոյթները:

Յուշերս տպւումներ էին: Մարդկային կեանքի ինքնայատուկ երեւոյթներու տպւումներ: Ու այդ տարիներուն տեսած ու ապրած մեր կեանքը իրողութիւններու եւ տպւումներու ամէնօրեայ ծովացում մըն էր: Ես խառնած պատկերով ու հոգեկան ծաւալներով զրի աստե՛ն էի յուշերս: Տասներկու տետրակներս լեցուն էին այդ տպւումներով: Ամբողջ հինգ տարի միտ կրնայ այդ տետրակները, զորս խորհրդներու մէջ կը պահէի...

Ու պատահեցաւ երկրաշարժը, հրաբուխն ալ հեար...

Երբ համայնազարները մտան Երևան, եւ լեռները ապոստամեցայ: Մեր տունը պիտի խուզարկէին: Տիկին Սասունին այդ դրուածքները ծրարելով, ասն քակին մէկ փորուածքի մէջ կը պահէ, գիտնալով, որ որքա՞ն զուրգուրանք կը տածէի անոնց հանդէպ:

Ու պայթեցաւ Փետրուարեան ապստամբութիւնը:

Մենք մեր հայրենիքի անկախութիւնը վերականգնեցինք: Չորս ամիս կռուեցանք Հրախնէն եկած սառնամանիքներուն դէմ: Ու մէկ միլիոն հայը պարտուեցաւ երկու հարիւր միլիոն սուտին:

Լեռնային ճամբաներէ ելանք դէպի Չանդեղուր: Անկէ տեցանք Պարսկաստան: Ու յուշատետրերը մնացին թաղուած հողին ասկ, ու հող դարձան:

Արեկա եկաւ իմ մին վիշտերէս մէկը: Աւելի՛ն. պատճառ դարձաւ, որ ա՛յ յուշ ու տպւում զրի շտանեմ:

Այս հիւանդութեան շրամուեցայ անցած յիսունըհինգ տարիներու ընթացքին:

Հիմա, երբ տարեքին կատարէն այս քանի մը հորիզոնները կը լսուիմ ցատկուածներով, ընթերցողը թող ըմբռնէ, թէ որքա՞ն քան կորսնցուցած եմ այդ տետրակներուն հետ:



Մարդ կայ, որ կրնայ վերաբաղ ընել:
 Եւ սասունցի չոր գլուխ լինեականը մնացի եւ այլեւս յուշ չգրեցի...
 Պատմութիւն եւ վկայութիւններ գրեցի:
 Քաղաքական եւ ազգային կեանք մը ապրած եւ զեկավարի գերեր ըստանձնած մէկու մը համար գրելը պարտաւորիչ է, եթէ գրել գիտէ...
 Բայց յուշը տարրեր զուեւորում մը ունի իմ հոգիիս մէջ: Ապրում մըն է, ինքնայատուկ ձեւեր պահանջող: Մրժուել մը, որ հոգիի խորքէն կու գայ: Կեանքիս ընթացքին, մեծ ու պզտիկ արարքներ շատ տեսած եմ, սակայն հոգիիս յուշմատեանին մէջ արձանագրուած են երեւոյթներ, որոնք հոգեկան ծաւրերը կը թրթռացնեն...
 Այս պարումներով դրած էի յուշերս: Թուզթերը կորուսեցան եւ ապրումները մնացին ու սակաւին կը մրժնջեն:
 Ո՛վ կրնայ սուզուիլ մարդկային հոգիին խորքերը եւ անցնիլ բուրբ ծաւրերէն...
 Այսպէս եղաւ իմ պարումներու յիշատակարանին բախար: Ան կորուսեցաւ հոգիին տակ, իսկ անձեւ ապրումներս ալ, ինծի հետ հոգիին տակ պիտի անցնին ու հոգ դառնան...
 ❀

Ուրեմն, թողունք փառքի օրերը, նաեւ վիշտերն ու մասհոգութիւնները եւ փորձենք հորիզոնները կարեւրանցնիլ, որպէսզի տեղ հասնինք: Իր փորձառութեամբ՝ ճամբորդը գիտէ, թէ կրնայ պատահիլ անկում մը, որ անչարժութեան կը մտանէ մարդս:

Մնաք բարոյն է, որ կը կրկնեմ այս անգամ Մասիին եւ Արագածին, Լեւոնհայտասանի յիշներուն եւ ձորերուն: Երեք տարի առաջ՝ մնաւ բարով ըսի Մովսէսարին եւ Սիփանին: Սիրտերինս կոտոր, ապաւինեցանք Մասիսին եւ Արագածին: Հիմա այն հարազատներն ալ մեր ձեռքէն առին: Թուրքը՝ հարաւէն. Թուրք՝ հիւսիսէն:

Իշխանութիւնն առին, բայց հողը մնաց, հայութիւնը մնաց, հայրենիքը մնաց: Միտքարանքը այն հոգիներուն, որոնք իրենց արիւնով շաղախեցին այդ հայրենիքը:

Հիմա Արաքսի ափին եմ:

Ալեկոծ Արաքսի ափին. սաքերս հաստատուն կեցուածքով, զինուորականի ամուր կամքով, Հայաստանի տէրը կը զգամ ինքզինքս:

Հայրենի հոգին ուժը անլափելի է: Միայն թէ՛ թող թիզ մը տարածութիւն ունենայ անիկա: Այդպէս կը զգայի: Այդ նայուածքը ունէի ինծի հետեւողներուն նայած պահուս:

... Ու անցանք Արաքսը:

Պարսկական հող. ջերմ ընդունելութիւն:

Բայց մենք դարձանք տարազիր: Ու մեր քայլերը՝ կրկրուն: Յոյսեր շատ, բայց տարազրի թախիծը մեր դէմքին, մեր աչքին ու մեր ժպիտին վրայ կը մնար տարածուն:

Վերակազմուեցանք ու գործեցինք վճռական կամքով: Սակայն հողը միշտ փխրուն էր ու կը մնար մեր ոտքերուն տակ: Աներբէ էր կամքը, եւ հզոր՝ գործելու նուանդը: Բայց ամէնուն հայեացքը դամուած կը մնար հայրենի բարձունքներուն:

Սրկուք ու կէս տարուան անկախութեան եւ ազատութեան վայելքը ան-
ջնջելի կը մնար տարադիրներուն դէմքին:

Կորուստին հաւատացող չկար:

Ձուա Հայաստան մը կար, ու սիրտի մնար... Ինչպէ՞ս հաւատայինք
մեայունի կորուստին:

Հայաստանը ՄԱԿԵՈՒՆ էր: Իսկ զնայունը սիրտի դար ու երթար...:

Հայր մնաց տառապանքով, բայց երջանիկ այն ապրումներով, որ
Հայաստանը իրն էր: Այս ապրումը ցոյցերով չէր, որ կը դրսևորէր: Հո-
գեկան ապրումն էր: Կորուստներուն համար մղկտաց, մնացածով մխիթար-
ւեցաւ: Իր արիւնը կար այդ հողին մէջ: Իր հայրը կամ եղբայրը նահատակ-
ւած էին այդ հողին վրայ: Հին նահատակներուն արիւնը հող դարձած էր:
Իսկ իրենց արիւնը տակաւին հոտուն, մաքրուած հայրենիքը կ'ոռոգէր,
զայն ծաղկուն դարձնելու համար:

Յիսուն տարի ետք, երբ մեր հայեացքը դարձնենք դէպի վերապրող
Հայաստանը, այդ ծաղիկներուն բուրժուները կ'աննենք, այդ ծաղիկներէն
կաշմուած ու աճած պտուղներու համն ու հոտը կը վայելենք:

Ու իրաւացիօրէն կրնանք բսել ու կրկնել:

Հայ ժողովուրդը կայ եւ պիտի մնայ...:

Տարազիր եմ Թաւրիզի պարսկական մթնոլորտին մէջ: Ո՛չ միայն տա-
րազիր, այլեւ որբ...:

Երբ ընկերներս Հայաստանի լեռներուն վրայ չեմ կրնար շարժման մէջ
դնել, որբութենէն դատ ի՞նչ կը մնայ ինծի:

Հայաստանը ոտքերուս տակ չէ, ու հիմա կը դգամ, որ կող տարազիր
մըն եմ: Մինչդեռ, Հայաստանի բարձունքներուն վրայ եղած մէլեցիս՝ ո՛չ
միայն կաղուտիւնս չէի դգար, այլեւ կը կարծէի, թէ երկաթէ ոտքեր ունիմ
եւ ձիուս վրայ ծուփ կու տամ ժայռոտ բարձունքներէն:

Որբ եմ:

Հակառակ այն իրողութեան, որ մենք Արաքսը կտրեցինք-անցանք
տասներկու հազար հաշուող զանուածով: Գրագէտ ու բանաստեղծ, զօրա-
վար ու զօրակահներ, նախարարներ եւ խորհրդարանի անդամներ, հին Փե-
տայիններ եւ խմբապետներ խոճուեցանք պարսկական Թաւրիզի մէջ: Կարծես
Հայաստանը դաւարկեցինք...:

Դատարկութիւնը զգացին իրենք ալ, բոլշևիկները, երբ մտան Երե-
ւան...:

Այդ դատարկութիւնն էր, որ որբի զգացումը առաջացուց հողիս մէջ:
Ու վրայ հասաւ անհասական որբութիւնը: Նահանգապետի որդին,
մէկ տարեկան Սուրէնը գերի կը մնար Երևան ժամող հիւսիսային սառցա-
կոյտին: Մեծ մայրիկը զայն գրկին մէջ պահեց, որ շուտի: Հայաստանի ան-
կախութեան հետ կը կորսնցնէի անկախութեան ինծի նուիրած պտուղը, տը-
զաս, որ անհասական մխիթարանքս էր: Հայաստանի լեռները երեւի դգացած
էին լեռնականի վիշտս ու կաղնիէ կուտ մը նետած էին մեր մարմնին մէջ:
Հոն, Թաւրիզ մեր հասնելէն վեց ամիս ետք, լոյս իջաւ վրաս... Լէօ-
ւան ինծի կը նուիրէր երկրորդ սղան, Վիդէնս:

Բայց կար մայրական զգացումը: Լէօւան, ամէն վտանգ աչքն առած՝

ճամբայ ելաւ զէպի Երեւան, ժնծ մայրիկն ու սրբիներս Պոլիս անգափոխելու, կամ անոնց հետ մեռնելու:

Ընտանեկան սրբութիւնն ալ բարդուեցաւ կեանքիս վրայ:

Այս հոգեվիճակը ունէի, երբ հուսակցութեան վերակազմութեան անհրաժեշտութիւնը երկար ճամբաներու հորիզոններ բացաւ իմ առջևս:

Ստիպուած էի հասնիլ Պուլիպարիս կամ Թումանիս:

Աչքս հայրենի հորիզոններուն վրայ կը մտար գամուած, բայց ճանապարհներս դարձան անհաշուելի, երկրէ երկիր, ծովէ ծով, բայց ոչ մէկ կայան:

1922ին, այս հոգեբանութեամբ ճամբայ կ'ելլէի Թուրքիզէն:



Ճամբորդի առաջառնէք, երբ հորիզոնները տնորոշ են: Հանգրուանները՝ անյայտ:

Բայց հորիզոններն կարել-անցնելու կամքս վճռական է: Կեանքի ու պատասխանատու մարդու պարտաւորութիւնները զիս կը նետեն բազմաթիւ ճամբաներու վրայ:

Գնա՛, որքան կրնաս: Մասնագուէ՛ վտա երկույթներով: Մխիթարուէ՛ լաւ միջավայրէ՛ մը, սփոփուէ՛ լաւ նկարագրի տէր մարդու մը հանդիպումէն: Ետրունակէ՛ ճամբող՝ ս'ըբան կրնաս:

Բայց հիմա այլևս չես կրնար սպրումներդ յուշագրել: Անհաշիւ են անոնք, ա՛յնքան՝ որքան անհաշուելի եղան ճանապարհներն ու հորիզոնները, երկիրներն ու ժողովուրդները: Տարբեր աշխարհներ, տարբեր ընոյթով, տարբեր լեզուով, մա՛նուտեղ՝ տարբեր նկարագրով:

Ու հոգեթունդ երկույթներ, երբ հանդիպումը կը սեղաւորուի հայ բնկորներու ու հայ հաւաքականութեան մէջ:


Հայրենիքը մնաց այնպէզ, իսկ հայ բնկորները տարածուած են աւաղի պէս:

Ամէնօրեայ հոգ ու փոթորիկ, վայրէ վայր, ու երբեմն ալ հոգեկան մխիթարանք բնկորի մը լուստեստութեան: Լաւատեստութիւն՝ հայուն տնականութեան հաշւոյն:

Նոր ճանապարհները մէջս կորսաւ մը չին արթնցներ: Ի՞մ երջանկութիւնը, զգացական աշխարհիս մէջ կը սկսի Մովսսարէն ու կր տարածուի զէպի Բիւրական, կ'անցնի Միփանէն Մասիս, Մասիսէն՝ Արագածի բարձունքները, ու կ'երկարի մինչեւ Լեւոնահայաստան: Լեւոնային հորիզոններ, աչքս միշտ բարձունքներուն: Ու երբեմն ալ դաշտավայրերու գրդուանքին: Դաշտավայրեր, որոնք դունաւոր դոզնոցներու նման հայկական լեռներու քղանցքները կը ծաղկազարդեն:

Հիմա, զրկուած այդ պատկերներէն՝ ճամբայ կ'ելլեմ Թուրքիզէն զէպի հարաւ:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ



«ՆԱՀԱՆՋ»Ը ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ԱՊՐԱՆՔ

Je hais le mouvement qui deplace les lignes.
Charles Baudelaire

Տաղանդաւոր վիպագիր, վերլուծող միտք եւ յանդուգն հրապարակու-
ղիք Շահան Շահնուր, Երեսնական թուականներէն մինչեւ Համալսարան-
ին Երկրորդ պատերազմին սկիզբը՝ ամէնէն աւելի կարգացուած գրողնե-
րէն մէկը եղաւ մեր մէջ, ազդեցութիւններ ունեցաւ գրական երիտասարդու-
թեան մէկ մասին վրայ եւ բուն հակազդեցութիւններու մղեց միւս մասը,
Հայութեան եւ Հայ գրականութեան կապակցութեամբ մզելով միտք պահ-
ւող փորձառութիւններու, Հաստատումներու եւ ուրացումներու զգալի մը-
թերք մը:

Այդ ասանմանակին (1931-1939) գրուած Շահնուրի ըննադատական եւ
հրապարակադարական նկրտիք ունեցող գրութիւնները, ինչպէս դիտել կու
տայ ինք՝ 1954ին կազմած «Թերթիս կիլակնօրեայ թիւը» առուն իր ժողո-
վածունին մէջ, «արտատպուած են Սփիւռքի մամուլին կողմէ, մէկէ աւելի
անգամներ, եւ մինչեւ այսօր չեն թուիր մտցուած ըլլալ»:

Այս Հաստատումը ամբողջովին ճիշդ է:
Ուրիշներու պէս՝ մենք եւս ծանօթ ենք այդ յօդուածներուն եւ մէկէ
աւելի անգամներ կարդացած ենք գրականութեան անդրադարձողները ու
կատարած որոշ ընդգծումներ: Խոստովանութեան դժով աւելցնենք, որ այդ
յօդուածներէն մէկուն, «Վէպիմ շուրջ» գրուածին մէջ առաջին անգամ Հան-
դիպած ենք ու սիրած երկի մը հարտարտապետական կատոյցին մասին իր ու-
նեցած ըմբռնումը հիմնաւորելու համար վկայակոչուած Պոլլէրի վերոյիշ-
եալ տողը:—

«Ամէն արուեստի երկ, որով նաեւ ամէն վէպ, անպայման պիտի ըլլայ
կառուցուած: Կեանքը իմքնին իմաստ չունի: Գրագէտն է, որ իմաստ պիտի
տայ, գրագէտն է, որ իմաստ մը պիտի հանէ, պիտի ձգտի ներգաշնակու-
թիւն մը ստեղծել, կեցնել շարժումը:

«Պատկեր կ'ըսէ՝

«Կ'ասում շարժումը, որ գիծերը կը տեղափոխէ»:

Շահուր, ցաւօք, իր վէպին երեւանեան ապագրութեան առիթով՝ ո՛չ իր բանալայտանքը պայման համարող ձայն մը բարձրացուց եւ ոչ ալ տնոր, իր վէպին ճարտարապետութիւնը խախտող «չարժումներուն» հանդէպ պատշաճ փորձառութիւններ յիշեցնող սրեւէ փորձ ըրաւ:

Անչլազունայէ առաջ սակայն այդ երեւոյթին, քանի մը առգ ընթացիկները յարմար թիւին մէջ արտագրուած Շահուրի այն յօդուածին մասին, որ պատահաւ զարժաւ այս յօդուածին:

Շահուրի «Լեւոնացի» առակը երգիս վէպին զլիւն պատահած պատահաւոր ի հարկէ նոր չէ որ կը տեղեկանանանք մենք, որին գիտէինք առկան քան, թիշ տեղին պարզուած բոյր մանրամասնութիւններով, բայց ունին ըսինք այդ մասին, սպասեցինք հեղինակին խօսքին, որ չէր կրնար չըսուիլ, անո՛ր համար մանուսեղ, որ մեր մասնաւորին մէջ Շահուր յարմար ըրողական խոստումներ տէր զրազէտ չէր, Կոստան Ջարեան մը չէր, չէր գտնուեր նաեւ Ջարեանի պայմաններուն մէջ, կրնար հետեւարար ճշալ, պոսալ, բարձրանալ «Լեւոնացի» ին մէջ սարքուած երեւանեան նախնիքին զմ, երեւանի մէջ բնակապայթի ենթարկուած «Լեւոնացի» կարեւոր հաստատմաններուն համար, ընդհանուր ազնաւորին զմ: Սպասեցինք, բայց մեր ակնկալութիւնը շարդարացաւ: Անցաւ ամբողջ տասնամեակ մը, եւ խոցուած հեղինակէ մը ակնկալիք ազգակից փոխարէն լսեցինք նման ազնուհարտ առջեւ համակերպող մարդու մը խոնարհ ձայնը, 4 Փետրուար 1973 թուակեր ընթացի մէջ Շահուր ստորագրեց «Լեւոնացի» իր ճեղ իմաստով խորագրուած յօդուած մը, զոր նոյն ամսին կրկին հրատարակեց, բայց այս անգամ գիրքի մը մէջ՝ «Կրակը կողմիս», ու փոխուած խորագրի մը առկ՝ «Ետրտակուած մասնակատութիւն»:

«Բնագիծի» նախորդ թիւին մէջ արտագրուած խնդրոյ առարկայ այդ գրութիւնը, ինչպէս արդէն նկատեց ընթերցողը, իրեն շարժառիթ ունի Վ. Յարութիւնեանի եւ Շ. Տասուրեանի կողմէ հրատարակուած «Վանքաւ թէ-հեանի» մասնակցները: Շահուր կը յուզէ բանաստեղծի մը մտերիմ նամակները հրատարակելու կամ չհրատարակելու փափուկ հարցը, կը մասնանշէ յիշեալ երկու մատարակներուն մեկնաբանութեան մէջ թէ՛ գէտանի նամակներուն բուն նիւթը շրջանցելով լուսանցքային արժէք ներկայացնող հարցերուն աւագ կարեւորութիւն տրուած բլլալու մոլորութիւնը, կը խօսի հայրենի գրադատութեան արժանաւոր կողմերուն եւ թերութիւններուն մասին, կ'անդադառանայ ին կատուցուող նոր աշխարհին համար նաեւ գրականութիւնը ծառայութեան կանչելու կաշկանդիչ համոզումին եւ կը ճշդէ արեւմտահայ գրականութեան հանդէպ անոնց վերաբերումը՝ անճշդի իր հետեւեալ հաստատման մէջ:

«Փալով արեւմտահայ գրականութեան, երբ պատահի, որ ան մերժէ նպատակիլ ծառայութեան կարկարամտներում, Երեւան կը «տրբագրէ» գայն, այսինքն թէ գայն կը մղէ ծառայութեան հասանքիմ մէջ: Ազնուագոյն եւ վսեմ միգ, որում համար էիլ իսկ է գրական երկի մը ծամամակաւոր ձեւափոխումը, եւ բոլորովիմ անհեթեթ՝ անոր յարուցած վէճերը մման այն վէճին, որ ծագեցաւ տարիներ առաջ Կոստան Ջարեանի «Լեւոնացի» առթիւ: Վէպիմ փոփոխակը կը պատասխամէր մերքիմ պահանջի մը, առանց բնատուրը եղծանելու: Ան կը մնար մերքիմ սպառման տարմէ»:

Ընթերցողը անդրադարձաւ հարկաւ, որ որոշակի սկզբունքներ թելազրոյ փնտազատի մը խօսքերուն փոխարէն, կը գտնուինք անհեթեթի գրականութեան մէկ հերոսին շփոթահար արտայայտութիւններուն դէմ յանդիման: Վերի հատուածին մէջ, իրապէս, Շահնուր Նոյն վայրկեանին ե՛ւ կը Վերմէ հպատակի ծառայութեան հարկադրամքներուն, ե՛ւ կ'ընդունի սրբազրուելով մտնել զճառայութեան հասցիին մէջ: Կ'արդարացնէ զգրական երկի մը ժամանակաւոր ձեւափոխումը եւ Նոյն ատեն շ'ուզեր ըմբռնել, որ ձեւափոխումը կ'եղծանէ բնատիպը: Կը մեղադրէ Զարեանի ճեպար պարանքի վերածողներուն դէմ ծառայողները, հաստատելով միաժամանակ, թէ ան կը մնայ գնորդին սպասման սպասմէջ:

Շահնուրի գրչին տակ քիչ մը տարօրինակ է այս ճշիւ երկրնորանքը, ու լատ աւելի անըմբռնելի՝ գրական խաթարումներու առջեւ իր ենթակայութիւնը:

Բայց ի վերջոյ ի՛նչ կը նշանակէ գրական երկի մը ժամանակաւոր ձեւափոխումը, եւ ինչպէ՞ս կարելի է գրական երկ մը հաշտեցնել ժամանակաւոր բաներու հետ:

Եւ յետոյ՝ Զարեանի պարագային եղածը ձեւափոխում էր արդեօք, թէ է՞սփոխում:

Կը թուի, թէ Զարեանի ճեպարուն առիթով ստեղծուած վէճի՛ն միայն ծանօթ է Շահնուր, վիճարկուած բուն հարցին տեղեակ չէ:

Այլապէս, ո՛չ գրականութիւնը ձեւափոխող պղծութեան կը հանդուրժէր եւ ոչ ալ սիրտ կը մնար իրեն ձեւափոխուածը որեւէ աղբիւ նպատակի պատշանցեցնելու:

Անգամ մը եւս մատնանչեք Զարեանի ճեպարուն մէկ հատուածին երկու տարբերակները, արտասահմանեան բնատիպը եւ երեւանեան անոր «ժամանակաւոր ձեւափոխումը», ապա հարցնելու համար Շահնուրին, թէ ինչպէ՞ս կարելի է նման որեւէնը գեղեցկութիւնները բնաճիւղիով նպատակի վերականգման զազնուագոյն ու վսե՛մ ճիգներու:

— ... Ես էգ մասին շատ անգամ մտածել եմ... Հարցը նրանումն է, որ հայ գիւղացու մէջ, նրա արտաքին կոչութեամ ետեւ, նրա անգիտակցական խորքում, արձանագրուած են մարդկային մտքի եւ բարձրագոյն հոգեկան թռիչքների բոլոր կարողութիւնները... Դի՛ր նրան ուրիշ, աւելի բնականոն պայմաններում՝ եւ նա կը մտնի Քախեան եւ բոլոր մեծերի բարդ աշխարհից ներս, ինչպէս իր սեփական տունը... (Ա. Տպագրութիւն, էջ 339):

Այս առջերուն եւ ատենց յաջորդող թիւով ուրիշներու փոխարէն ճեպարը լինում վրայ» վէպի երեւանեան հրատարակութեան մէջ պահուած է միայն մէկ տող, ատենց յաջորդներուն բոլորովին անորոշ առաջիներ՝ — ... Ես էդ մասին շատ անգամ մտածել եմ...» (էջ 360):

Այս եւ նման հարիւրաւոր ուրիշ հատուածներու ջախջախէ, որ «ժամանակաւոր ձեւափոխում» կը համարէ Շահնուր եւ եղածը քիչ իսկ կը գտնէ ծառայութեան զազնուագոյն եւ վսե՛մ ճիգին համար:

Եթէ գրականութիւնը մարդոց զգացումներուն, սպրումներուն, ջիգներուն ու մտածողութեան վրայ որոշիչ գեր մը ունի եւ յօգուտ վերականգման կրնայ ազդու ազդակ մը ըլլալ, ծառայել զազնուագոյն ու վսե՛մ ճիգներու՝ հայրենիքին համար ու հաստան Զարեանի պարագային ո՞ր մէկը աւելի նշանակալիցարժան կ'ըլլար արդեօք, մեծերու բարդ աշխարհէն ներս մտնելու:

ընդունակ եւ հոգեկան բարձրագոյն թռչոյթներու տէր հայ գրագիրին ընդ-
 թաղիրը պայծառացեալ վերի հասունածին գոյութիւնը թէ չգոյութիւնը :
 Նոյն վիպին մէջ, այլ քիչ ժը աւելի առաջ եւ քիչ ժը աւելի տեղին՝ ամբողջի
 հողերը ցորենի դաշտի, ծայրը՝ շէնքի, ամապատը՝ ամտառի՝ վերածող,
 բայց երեւանեան ազգայութեան մէջ դա՛րձեալ յազաւուած հայ մարդուն
 հիմնական արժանիքներո՞վ աւելի կրնանք մասնակցել զազնուագոյն ու վսե՛մ
 ճիշդին, թէ այդ արժանիքները ցայտեցնելով, ս'ը մէկով, որ Շահնուր այդ-
 քան գիւրութեամբ փորձ կ'ընէ արդարացեալ զվէպին փոփոխելը :

Ջարեանի ճշմարտ խորակած մարդոց հանդէպ ծայրագոյն ա՛յտ
 բարեացակամութեամբ կը վարուի Շահնուր, բայց չի ներքեր զՎ. Թէհէնանի
 նամակները՝ մեկնաբանող մարդոց, որոնց ստիժով կը կասարէ սա ընդհան-
 րացումները :

«Երբ բախտաւարութիւնը ունինք տիրաճալու մարդկային երկի մը,
 եայրենի գրագէտները գայն կ'իջեցնեն հասարակ խմբագրակազմի մը մակար-
 դակին» :

«Անոնք կը նմանին այն մարդուն, որ կը կտարէ ու կը բարդէ տարաշ-
 խարհիկ (exotique) ու գեղատեսիլ ծառ մը, վառելիքի ք ունենալու ծամար,
 երբ իր առջեւ զիզուած կայ գիւրավառ ատաղձը :

«Մեր գարմամալի գրագետները կը փորձեն մեզի հաւատացնել, քէ
 հաւկիթը, գոր պարպած են իր մերձին պարունակութենէն, կը շարունակէ
 մնալ կենդանի ամբողջութիւն մը» :

Վ. Յարութիւնեանի եւ Շ. Տասուրեանի մեկնաբանութիւնը, ինչպէս
 նաեւ անոր զէմ բանձնուած Շահնուրի գծագրութիւնները ըստ էութեան
 զուրս կ'իջան այս գրութեան ծրիքն, միայն թէ՛ Շահնուրին այնքան մա-
 հողութիւն պատաստած անոնց մեկնաբանութիւնները այնքան ալ մասհողիչ
 չեն : Ի վերջոյ մեկնաբանութիւն ժը տեսակէտի, հասկացողութեան ու ճշակի
 ինչպէր է ու ազիտալի չէ, երբ պահուած է մեկնաբանուածին հարազատու-
 թիւնը, յապաւումներով ու մեւափոխումներով չէ կըծանուած բնախիւր :
 Այդ պարագային, լուսանցքային արժէք միայն տեսնող Յարութիւնեանի եւ
 Տասուրեանի զէմ՝ վաղը ուրիշ Յարութիւնեաններ, ուրիշ Տասուրեանները,
 կամ այսօր Շահնուր հրապարակ կու գան եւ ձայն բարձրացնելով ճշմարտու-
 թիւնը կը հաստատեն ծանրութեան կեդրոնին վրայ :

Ինչպէս կ'երեւի, Շահնուր շատ ծանրացուցած է մեկնիչներուն ճեղքը,
 եւ շատ թեթեւացած՝ մկրատիչներուն սեփրը : Աւրիչ խօսքով, Թէհէնանի
 նամակներին (հաւկիթը) իր ներքին պարունակութենէն պարպած մարդոց
 հանդէպ գտնուած է շատ խիստ, եւ շատ բարեացակամ՝ Ջարեանի ճշմարտ
 (հաւկիթը) ամբողջութեամբ տեղէն խախտած խաթարիչներուն նկատմամբ :

Ու ճիշդ հո՛ս է, որ մեր մտքին մէջ մնունը կ'առնէ կասկածը : Ար-
 դարեւ, Ջարեանի պաշտպանութիւնը ստանձնելու այս կատակը ինքնապաշտ-
 պանութեան լռելիայն փորձ ժը չէ՞ արդեօք : Ո՞վ գիտէ...

Հետեւինք սակայն փաստերուն :



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 4

... Դերասանուհին վարագոյրը մէկդի ընկլով իրենց միացաւ, մետաքսին հետեւ իր սարսափաֆ ծիծերով:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 130

... Դերասանուհիմ, վարագոյրը մէկդի ընկլով, իրենց միացաւ:



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 42

... Վախնալով, որ զինքը չըջապատող անուշահոտութիւնը կը թոցնէ:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 160

... Վախնալով, որ զինքը շրջապատող անուշաքիւնը կը թոցնէ:



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 48

... Աչքերը զոցեց ու ամբողջ ուժովը ծծեց գայն, զիչ մը լորձունք միտարին:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 165

... Աչքերը զոցեց ու ամբողջ ուժովը ծծեց գայն:



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 49

.. Ու անոր ալ զուգորուն վրայ զրտիկի կաթիլներ կը փայլէին:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 165

.. Ու անոր ալ զուգորուն վրայ զրտիկի կաթիլներ կային:



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 124

Շատ սխալ կ'ընէ, պիտի զղջայ որ մը:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 221

Շա'տ սխալ կ'ընէ. պիտի զգայ որ մը:



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 136

Հոն թէ հոս, յաղթականը միշտ նոյնը մնաց:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 229

Հոն թէ հոս, յաղթանակը միշտ նոյնը մնաց:

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, ԷՋ 138

Դուն ալ կատարեալ մարմնացումն ես հայութեան, Հայը ունի լաւ նկարչիներ, բայց ոչ նկարչութիւն. Հայը ունի լաւ գերաստեղծներ՝ բայց ոչ թասերգութիւն. յոգնիլ չգիտցող ճամբորդներ՝ բնաւ նաւապետ: Հայը ունի զմայլելի բանաստեղծներ, բայց ոչ գրականութիւն. Աստուածներ՝ ոչ զիցարանութիւն. ինկելի յեզոփոխականներ՝ բայց ոչ յեզոփոխութիւն. Հայը ունեցած է ազատութիւններ, երբեք՝ անկախութիւն:

Յետոյ գինիի գաւաթը մէկ ուժգով պարզելով շարունակեց արագօրէն, առանց լրթունքները շարժելու:

— Հայը աժուլ է, սնծիկ, անպառազ: Հայը գատարկ է, փուռ, ունայն, սնտի:

«Ապրելու իրաւունք չունի ան, քանի որ չէ նսած»:

«Բէ՛ժ՛, որ մը թերեւ ծնի, եւ մեր յուսացածէն ասրբեր գոյնով մը. կարժիբ, դեղին կամ թէ սև: Սակայն մենք, հայութեան այս թիւը, դատապարտուած ենք կորստեան»:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, ԷՋ 231

... Դուն ալ կատարեալ մարմնացումն ես հայութեան:

Սակայն մենք՝ հայութեան այս թիւը, դատապարտուած ենք կարգստեմն:

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, ԷՋ 141

«Հայրենիքի մը գաղափարը շատ անգամ աւանդովէպ մըն է»:

«Այդ մեծ սուտին տեղ մենք դրեր ենք կեղծիքը — Մեր ամբողջ գաւաթիւնը ազացոյց»:

«Հերոսին տեղ դրեր ենք մշակներ — Մեր պարագ եզունդները ազացոյց»:

«Հաւաքական ճիգին տեղ դրեր ենք հայուկներ — Մեր բոլոր վանքերը ազացոյց»:

«Աղիքներու ճիգին տեղ դրեր ենք արցունքներ — Մեր բոլոր բանաստեղծները ազացոյց»:

«Աստուածային կիրքին տեղ դրեր ենք հարսեր — Մեր բոլոր արաղչիները ազացոյց»:

«Ծաղափարականին տեղ դրեր ենք կազապարներ — Մեր բոլոր գիւրքերը ազացոյց»:

«Պայքարին տեղ...»

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, ԷՋ 233

«Հայրենիքի մը գաղափարը շատ անգամ աւանդովէպ մըն է»:

«Հաւաքական ճիգին տեղ դրեր ենք հայուկներ — մեր բոլոր վանքերը ազացոյց»:

«Աղիքներու ճիգին տեղ դրեր ենք արցունքներ — մեր բոլոր բանաստեղծները ազացոյց»:

«Աստուածային կիրքին տեղ դրեր ենք հարսեր — մեր բոլոր արաղչիները ազացոյց»:

«Պայքարին տեղ...»

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 142

«Որքան որ մտածումս ետեւ տանիմ, Հայերը կը տեսնեմ միշտ այնպէս, ինչպէս որ են այսօր: Պղտիկ, գանձակ, տիեզիմ: Իւրաքանչիւրը անդիմադրելի պաշտամունքը ունի ի՛ր կաշիին, ի՛ր մարմին: Եսամուլ...»

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 234

«Որքան որ մտածումս ետեւ տանիմ, հայերը կը տեսնեմ միշտ այնպէս, ինչպէս որ են այսօր: Եսամուլ...»

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 143

«Հոն ուր ահազին հարստութիւն կայ, հոն ծայրայեղ քշուառութիւն կայ: «Այն երկիրը ուր խոր քշուառութիւն կայ, հոն ազատութիւն կու գայ: Եւ եզաւ ազա՛ւ, եւ եզաւ ազա՛ւ: «Մեր այն թագաւորը...»

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 234

«Հոն, ուր ահազին հարստութիւն կայ, հոն ծայրայեղ քշուառութիւն կայ: «Մեր այն թագաւորը...»

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 145

«Այլ միայն, բայց միայն... Boy, Boy
«... Դո՛ւն, Հայո՛ւ լազոս, գուն մտնէն շուտը կը փոխուին անասունի, եթէ որ մը իսկ մաս առանց վիշտի: —
« ... Boy, Boy, cocktail!...
Պոկուսի երկար...»

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 236

«Այլ միայն, բայց միայն... Boy, boy!...
Խոկումի երկար...»

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 150

«...Ապանուածներու վրայէ նէնէթի պատկերներ, ծածկուած եւ արիւնոտ նէնէթներ...»

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՋ 240

«...Ապանուածներու վրայէ նէնէթի պատկերներ, ծածկուած եւ արիւնոտ նէնէթներ...»

●

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 166

Կը մեծնար, փոթորիկի մը պէս հողկանքը կը մեծնար երիտասարդին մէջ: Ան կը նմանէր բողանոցէ մը գուրս հլու պատանիի մը, որ կը թքնէ, անվերջանալիօրէն կը թքնէ: Անշուշտ Փիէր...:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 252

Կը մեծնար, փոթորիկի մը պէս նոզկանքը կը մեծնար երիտասարդիմ մէջ: Անշուշտ Պիեր...:

●

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 216

Ինչպէ՞ս կրնան այսքան վիշտ տանել:

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 235

...Ինչպէ՞ս կրնան այսքան վիշտ տեսնել:

●

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 217

Վերջապէս պոռնիկը հաւանեցաւ եւ ժամագրութիւնը որոշեցինք:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 286

Վերջապէս պոռնիկը հետացաւ եւ ժամագրութիւնը որոշեցինք:

●

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 217

Նախ Նէնէթ իր ջղայնութեամբ անկարող կը մնար կեղծելու, անտարբեր, ինքնավստահ ու զուարթ մեւանալու:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 286

Նախ Նէնէթ իր ջղայնութեամբ անկարող կը մնար մեւանալու:

●

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 235

Իբրեւ թէ մեռելատուն մտնելով անտէր ննջեցեալի մը բերնէն ոսկի ակունները գողցեր է...

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էՁ 299

Իբրեւ է քէ մեռելատուն մտնելով ամուր անջեցեալի մը բերնէն ոսկի ակունները գողցեր է...



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 243

...Փիէն ակնարկը հաւաքեց, խոնարհեցուց եւ ուշով նայեցաւ ձեռքերուն, մարմնին, ուտերուն: Յետոյ նայեցաւ շուրջը...

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 306

...Պիեր ակնարկը հաւաքեց, խոնարհեցուց եւ ուշով նայեցաւ շուրջը...



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 248

Մարդ էակը կարող է ոչ միայն իրարմէ զանազանել գեղեցիկ մարմին մը ազդեցէն...

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 308

Մարդ էակը կարող է ոչ միայն իրարմէ զանազանել մարմին մը սգեղէն...



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 248

«Տէ՛րը բլաւ հոգիին, պատահ՛լ միսը, ճեղքել նեղ պատեանը, մարմինը գերանցել, Ֆիզիքականին...

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 309

«Տէ՛րը բլաւ հոգիին, պատահ՛լ միսը, ճեղքել նեղ պատեանը, մարմինը գերանցել, ֆիզիքականին...



ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 252

Յանկարծ յիշեց Սուրէնին խօսքը.
— «Նարեկը հայոց ամէնէն աւելի պէշ, սխալ, վատաւորը եւ անբարոյական գիւրջն է»:
Փիէն պատասխանեց բարձրաձայն, գլուխը երկբցեցելով.
Սուրէնին պատկերը...

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 312

Յանկարծ յիշեց Սուրէնին խօսքը:
Սուրէնին պատկերը...



Պահ մը շուշ առնենք հաս, յիշեցնելու համար, որ Շահնուրի վէպին մէջ խաղցուած արդէն ձեզի ծանօթ վերի խաղերուն քովն ի վեր կան եւ ուրիշներ, շարժումի, աղմուկի, գոյնի եւ ժամանակի զգայնութիւններ վերաւորող շարք մը խախառմաներ, որոնց բնօր աւելորդ է բարդել կատարուած միջամտութիւնները ըստ բաւականին լուսաւորող այս մէջբերումներուն վըրայ:

Այդ մը եւս նետեցէք երկու տպագրութիւններուն վրայ ու եթէ կրնաք հաշտեցուցէք երեւանեան տարբերութիւնը գրական բարոյական ըսուածին հետ: Ուրիշներու տոբթով եւ ուրիշներու պէս՝ Շահնուրի հրատարակչօրրագրիչնէ՛րը եւս չեն բաւարարուած գաղափարական պատշաճեցումներով, ու իրենց տպաութեան ու անճաշակութեան հետ հարկ տեսած են տիրացուական մտայնութիւն մըն ալ ցուցադրել Վեհաճեցիի դիմաց: Իրապէ՛ս ապշեցուցիչ է այս մպրնութիւնը ու դիւրին չէ պատկերը կազմել այնպիսի մարդոց, որոնք առհասարակ կը սարսափին զարսափած ծիծերաչն ու սարսափահար մոլեղնութեամբ մը կը շտապեն անգամահատել զարսափած ծիծերօք (130): Առանին նոյն մտահոգութեան տուրք տալով՝ Շնջած են նաեւ լորձուները (165), չեն ուզած տեսնել բողանոցը (252) եւ, աւելի զարմանալին, բոլորովին անճարակ զարձուցած են իրենց երիտասարդութեամբ փարիզի աղջիկները հրոյ ճարակ ըրած Շահնուրի հերոսները, որոնք երեւանեան տպագրութեան մէջ (286) այնքան անհեթեթ կ'ըլլան, որ պոռնիկին հետ ժամագրութիւն ճշդելու համար կը սպասեն անոր հետացումին:

Եւ յետոյ՝ որքան բութ պէտք է ըլլայ խմբագրի մը գրական զգայարանքը, որ զՊարզը զրկէ իր կողմնորոշող նրբերանգէն եւ անոր տեղը պահէ տարտամ զգալը (134), չգտայ անուշահոտութիւնը ու գունահայ անուշութեամբ (160), հրտիմբի փայլող կաթիլներուն տեղ տեսնէ միայն քրտինքին բառարանային շորութիւնը (165), յաղթակամը շփոթէ յաղթանակին (229) հետ, ծակծկուածը՝ ծածկուածին (240), իբրեւ քէ խնդրականը՝ իրաւ է թէ (229) հաստատականին, գերանցմիլը՝ դիրացնելուն (309) հետ, եւայլն, եւայլն:

Հեղ մը նորէն կարդացէք սա վերջին բառը. տպագրութիւնը՝ առաջին մեղք, ազնկութիւնը՝ անճաշակութեան երկրորդ փաստ, լեզուական խաթարումը՝ երրորդ թափթփածութիւն, — դիրացնել, Շահնուրի շրթներուն, ուր գրուած է տակաւին զխախեցաւ՝ մըն ալ եւ արեւելահայերէնի յատուկ ուրիշ ձեւեր:

ՎՄարդ, — պիտի ըսէր նման տոբթով մը Վեհաճեցի հեղինակը, — պէտք է բոլորովին գուրկ ըլլայ բանաստեղծական զգայնութեան, չըմբռնելու համար, քէ մեղացուցիչ բան է բանաստեղծը անցատել իր լեզուէն, որսն ենս նայացած է՝ միս ու ոսկորս:

Մինչեւ հոս կատարուած ցուցադրութիւնները զուցէ զայնթակողութիւն չհամարուին, բայց արդէն հասանք ահաւորին:

Կարդացէք Վեհաճեցի առաջին տպագրութեանէն առնուած հետագայ ընդարձակ հատուածը եւ ապա դիտեցէք ահաւորը, մեր 48րդ էջին վրայ մասնանշուած երեւանեան անոր ահաւոր երեւոյթը...

ԱՍԽԱՏԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ, էՁ 168

Այսպէս է որ ուրիշներ կը խոնարհին, խաշելութեան մը դիմաց :

Ձեռքերը դիրք մը ունին : Անոնց ամենազէշը, զգուշիք, ամենախալը, վատառողջը, եւ ամէնէն տուելի անբարոյական գիրքն է ան — Նարեկը Կամբաստանէն զայն իբրեւ ամենամեծ թշնամին հայութեան, Կամբաստանէն այն թշուառականը, որ անոր առդերը թքու : Եւ ըսել թէ որքան փառահեղ նահատադիր մը ունեցաւ այդ թուաւորիչ հասարակ : Հայերը զայն ընդունեցին, իւրացուցին, ընդգրկեցին : Ոչ մէկ սերունդ չխորհեցաւ զայն ջնջել, որովհետեւ անոր շնորհակալ եւ բանաստեղծական ինչ ինչ յատկութիւններէն խարուելով ծածկուած թոյնը շնչմարեց : Ընդհակառակն, փոխանցեցին որդիէ որդի, արեւելէ արեւել, ու ան եկաւ մինչեւ մեզ : Թուաւորուեցանք, ազգովին թուաւորուեցանք : Ահա թէ ինչու պարտուածներ ենք : Պարտուածներ ենք, որովհետեւ այն վանականին հայմանդամ հոգիին պէս արամարհեցինք եւ անգիտացանք գոյութիւնը մեր ետին, մեր ուժին, կամքին, անհատականութեան : — չկուուեցանք, չխածինք, չմաքանցանք : Քրիստոնէական վարդապետութեան անոր սխալ ու թերի մեկնութիւնը ընդունելով եղանք անմտօրէն կրաւորական, համակերպող, աղերսարկու, անգիտակից : Անք մեր անմէն գուր շիւնք, լուսնեցանք նպատակ, խմբովին չաւացանք դէպի կարեւորութիւնը անկարելիին եւ մեն իտէլ մը մեզ բուրս իր ճանկերուն մէջ չլաղուեց : Կամբաստանէն այն թշուառականը, որ... :

Պոռնկազրութեան վրայ խօսած ատեն, որ մը Սուրէն այսպէս կ'արտայայտուէր Փիլիսին :

Եւ խորհրդածութիւններու այս զստիթափին վրայ նետուած պահուն ըրած իր այս առաջին բոժքիւնէն յետոյ, ձայնին կրակը մեղմելով կը շարունակէր՝ իմացականութեան պայծառութիւնն ու խաղաղութիւնը վերբացարտին դուտ :

— Որքան ալ սարդինակ թուի ազգի մը տկարութեան պատճառները բացատրելու այս եղանակս, պէտք չէ ուրանալ հոն ծածկուած ճշմարտութիւնը : Նարեկացին սկզբնապատճառ նկատուի թէ ոչ, իրողութիւն է որ շատ մը բաներ կու գան լիովին կ'արդարացնեն իմ յախուն ժաւածումս, որ իր ազգասէրի աստապանքին մէջ կ'ուզէ անպայման մէկը նետել ամբաստանալի արձույն վրայ : Ամէն ազգ, ամէն դարու, ամէն ժամանակաշրջանի, գիւղացի, անտաշ եւ անգրագէտ ամբոխէն գառ ունեցած է պղտիկ մարդեր, ճշմարտեայն եւ կերպարայական, յուսահատական համեմատութիւն կը ստանայ : Ահա թէ ինչու, ե՛ս, Սուրէ՛ն, կ'ուզեմ անգիտանալ փոքր խումբը բացառութիւններու, եւ ամբողջ հայութիւնը կը նկատեմ Նարեկով թուաւորուածներ, հայմանդամներ : Եւ սակայն այժ՛, կը բաւէ որ գիտնանք մեր շուրջը նայել, հայմանդամներ : Եւ սակայն այժ՛, կը բաւէ որ գիտնանք մեր շուրջը նայել, կը բաւէ որ նայինք ապրող սերունդին եւ անոր մէջ պիտի հանդիպինք տկարելի մը, որուն համարձակօրէն պիտի կարենանք պոռալ : — անհուատ :

Հաւատքը չունի ան. Հաւատքը՝ կիրքին կարմիր մուկնութեամբը գրուած, Հաւատքը՝ որ մեծ հոգիները կը կերտէ, որ բարձրագոյնին տենչանքը ունեցող ազգերէն կը ծնի: Այս Հայր բան մը իր իտէլար շրջներ եւ չի պայքարի անոր Համար: Հոգւով մարմնով չի նուիրուիր գաղափարի մը իրազորման, աւելին առաւել շատոյն մէջ ինքզինքէն զուրս չ'ելլիւր խնկութեամբ եւ իր էութիւնը յարասեւ բարձրացումի մը չի հպասակիր: Աստուածային կիրքը բացակայ է իր մտածումներէն եւ զգացումներէն, որոնք անկերջունալի միտքնակութեան մը մէջ կը մրափեն: Սելացի, ուշիմ եւ զործունեայ ցեղի մը զաւակը ըլլալուն հակառակ, այդ յատկութիւնները ի սպաս կը դնէ միայն ի՛ր կաշիին շահերուն: Հաւաքականութեան հանդէպ պահած իր անտարբերութիւնը թանձր ու անթափանց կեղեւի մը պէս կու գայ իր հոգիէն կը չէզոքացնէ, կը բթացնէ: Ի՛նչ անհանգուստեղի նեխութիւն, երբ մանաւանդ զարգացում մըն է ստացած. զպրոցէն հետանալուն պէս զաւարանի ու փողոցին կեանքերը բաժնող մեծ անդունդը կը տեսնէ եւ իր առաջին հար կ'ըլլայ մոռնալ ինչ որ սորված էր, իրրեւ անտեղի, աւելորդ, անհնար: Եթէ կրցաւ մոռնալ, անոր տեղ բան մը չի գներ բնաւ. միայն կը ջանայ իր պարագութիւնը ոսկեզօծել: Թողէք զայն, ոսկերիչ պիտի ըլլայ: Եթէ չմոռցաւ, դեռ պիտի շարունակէ կարդալ, հետաքրքրուիլ, առանց սակայն իր չէզոքի գերէն հրաժարելու: Թողէք այս ալ. նորէն խարդախ ոսկերիչ՝ ա՛յս անգամ բառի:

«Վհատ, թոյլ եւ ողորումէն առաջ իսկ կղզիացած սա հոգին, ամբողջ Հայութիւնը հիմնովին սարսոզ գէպքերէ վերջ երկու գիծով միայն կը տարբերի նախորդ սերունդներէն: Աւելի քիչ կը Հաւատայ անկախութեան, եւ նուազ կ'ատէ Թուրքը: Նուազ կ'ատէ, որովհետեւ կը ճանչնայ անոր յառաւորի մտքը, ինչպէս որ կը ճանչնայ մարդկային մտքին բոլոր կարեւոր արտայայտութիւնները, զանոնք միշտ զատելով իր մեկուսացած պղտկութեանէն, առանց ճիշի, առանց գիրկընդխառնումի, առանց ճակատազրական մեկնումի: Ինք կը ճանչնայ բոլոր իմաստասէրները եւ բոլոր վարդապետութիւնները. մէկ քանին կարդացած է: Սակայն անոնցմէ ոչ մէկուն առջեւ չէ ըսած. «Հաւատէ՛ս, ահա այսպէ՛ս»: Գիտէ թէ Աստուած եւ կրօնք ըմբռնումներ են, երբեք սփոփարար ուժեր են որոնք մարդկութեան հետ պիտի մեռնին: Գիտէ թէ Հայրենիքը ներկայ օրերու միջազգայնական գաղափարներուն առջեւ գէշ արդելք մըն է, իսկ ի՛ր Հայրենիքը՝ գորդեան հանգոյց մը անլուծելի: Գիտէ թէ բարի, շար, ազնիւ, զեղեցիկ, բարոյական, անբարոյական բոլորն ալ յարաբերական բաներ են, թէ արունասը միայն մեծ ազգերու առանձնաշնորհն է, քանի որ բարձր միջովայրի եւ երկար մամանակի կը կարօտի: Վերջապէս գիտէ նաեւ թէ սէրը փորձանք մըն է, կիներ դրամ է, իսկ դրամը ամէն ինչ է: Հիացում եւ առատ ներբող ունի օտարին բոլոր արժէքներուն, արժանիքներուն, մեծութիւններուն: Շատ անգամ կուրօրէն կը փառաբանէ զանոնք. սակայն երբոր հաճի ակնարկը դարձնել իր ազգին, անմիջապէս տարակոյսով եւ թերահաւատութեամբ լեցուն քննադատի մը կը ձեւափոխուի: Կը խորշի, կը սոսկայ հպատակութեան գաղափարէն. պղտկութիւն կը համարէ ուրիշի մը մտածումը բաժնելով միտքանիւ, ու զործակցել անոր, երբոր հրամայողը ինք չէ: Ինք ինք է եւ ինք բան մը չէ:

«Ի՛նչ պէտք է, ի՛նչ պէտք սակայն ըսել այս բոլորը որ արդէն իսկ այնքան անգամներ կրկնուած ըլլալու տեղունութիւնը ունի: Ի՛նչ պէտք մանաւանդ դրաղիլ պարագաներով, որոնց լաւագոյն դարձանը բառերուն եւ խօս-

գիրուն ուժը չի կրնար կազմել բնաւ Այր՝, այս ախարը պատահական չէ, միայն ժամանակի մը ծնունդը չէ. սակայն մինչդեռ անցեալի մէջ կարելի էր ժառանգը զինքը անտեսել, իր վատասողի մեղկացումը չէզոքացնել, թողլով որ ազգին թիւը բազմապատկելու իր միակ դէպը կատարէ, հիմա անկարելի կը դառնայ իրեն հանդէպ անտարբեր մնալ: Այլ թէ որովհետեւ այժմ պատերազմ կայ ու կռիւ: Այլ թէ որովհետեւ...

ՆԻՆԵԱՆԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, էջ 253

Այսպէս է, որ արիշներ կը խոնարհին խաչելութեան մը դիմաց:



Պտճկագրութեան վրայ խօսած տեսնմ, որ մը, Աուրէն այսպէս կ'արտայայտուէր Պիերին:

Եւ խորհրդածութիւններու այս գառիքափին վրայ մտնուած պահուն ըրած իր այս առաջին բովանդակումը յետոյ, ձայնին կրակը մեղմելով կը շարունակէր՝ իմացակամութեան պայծառութիւնը վերստին գտած:

Ե՛րձ պէտք, ի՛նչ պէտք օսկայն ըսել այս բոլորը, որ արդէն իսկ այնքան անզամներ կրկնուած ըլլալու սոցալմութիւնը ունի: Ի՛նչ պէտք մանուսանալ գրագիլ պարագաներով, որոնց լուստոյն դարմանը բռտերուն եւ խօսքերուն ուժը չի կրնար կազմել բնաւ: Այլ թէ որովհետեւ...



92 անգ հաշուող վերի տաք, ջնցող, համով պոթկումին տեղ երեւանեան ապագրութեան ընթերցողներուն ահաւանդիկ կը արուի տասը տուրնոց անորոշ, որով նաեւ հիւթէ պարպուած ու բոլորովին գորշ բան մը, որուն մէջ ո՛չ Շահուար մնացած է եւ ոչ ալ զրական որեւէ շնորհ մասնող դիմ:

Ի հարկէ, յապաւուած այս հաստատմին ու ասոր նախորդներուն (133, 141) ու յաջորդներուն մէջ մեր գրական գէճքերուն, հայ մարդուն անցեալին, ներկային ու ապագային մասին Շահուարի հերոսներուն յայտնած կարծիքները բաժնելու եւ պաշտպանելու հարցը ընտելեան նիւթ չէ հոս, կ'ուզէինք պարզապէս ըսել, որ ընթերցողին սեփականութիւնը գարձած ու վերհրատարակութիւններու դժով ծաւալած գրական գործի մը մէջ ո՛չ մէկ մեւսով եւ որեւէ պարագայի իրաւունք ունինք միջամտութիւններ կատարելու: Թերեւս նոյնիսկ հեղինակ մը իրաւունք չունի հիմնական վերամշակումի հնթարկելու հեղ մը հրատարակ հանուած իր երկերը: Արդէն ճշմարիտ արեւտագէտը չի վերագառնար իր նախկին գործերուն, կը զբէ նորը: Նոյնը պատահած է նաեւ Շահուարի հետ: Եթիտեմ քէ, — կ'ըսէ ան «Վազը» խորագրուած իր մէկ գրութեան առաջին մասին մէջ, — կամ սիգանեմ գրագետներ, որ իրենց գիրքերը կը կրնն մման շքանշաններու, եւ դեր կան արիշներ, աւելի գորովուս եւ աւելի մտերիմ, որ իրենց ստեղծագործութիւններուն վրայ կը հակին որպէս հոգեհատորներու: Ես՝ երբե՛ք: Մտածումն իսկ քէ պէտք է դիմեմ գիրքերու մէկուն ճշդումի մը ի խնդիր, ինձի կը պատճառէ մերքին ընկրկում մը: Ուրացումը տեղ չունի այս ընկրկումին մէջ

և ոչ ալ անխորհրդ համեստութիւնը: Կը մամլմամ լաւը, որ երբեմն իմա ե-
զաւ: Եւ եթէ ունիմ յստակ մանաշումը այն ամէն իմշիմ, որ գրչիս տակ գը-
տաւ իր մշգրիտ արտայայտութիւնը, ծախիմ թանկ յոռի միտումը գրութեա-
նըս թերիմնրը տեսնելու եւ անոնց թողած աները մայրընտրաբար մեծցնելու:
Ներքին ընկրկումը իր բացատրութիւնը կը գտնէ իրմէ գուրսս:

Այսպէս եղած են ճշմարիտ բոլոր արուեստագէտները, Հրատարակ-
ւած դործի մը երբեք չեն վերադարձած, երբեքեք չեն շլացած յայտնարե-
ւած ճշմարտութիւններով կամ մասնած թերիմնր սրբազրիւտ մասին: Նը-
ման փորձառութիւնները անոնք օգտակարած են նոր մասշտապումներու
կենսագործման ասնէ: Քաջ մը կարմիր տետրակը գրգռչիին գրականու-
թեան անդին եւ այլուր խորագրուած ուրիշ յորումի մը մէջ՝ Շահուր
Համարեա՛ նոյն վերաբերումը ջուշարեան է դարձեալ եւ այս անգամ նոյ-
նինքն Վահանգչիին մասին, չէ փորձուած վերասին ձեռք ասնէլ Վահան-
ըն, զգալով ու հաստատելով հանդերձ, որ՝

«Ճիշդ է, թէ հոն կան լեզուական թերութիւններ, կառուցման պար-
զարանութիւն (չեմթիզմ), չրտ գզայնութիւն (սանթիմանթալիթէ) եւ ան-
կատար ծանօթութիւն՝ մեր ազգային պատմութեան: Ասանք կը բացատրը-
ւին, ասանց արդարամալու: Երկը հեղինակին մայրաքաղաքն էր, եւ իր շըր-
ջանին, ազատ չէր Հայոց պատմութեան դասաւանդութիւնը Պալոսյ վարժա-
րաններուն մէջ: (Միթէ Հայոց ազգային պատմութիւնը իսկապէս ի պատ-
ւի՞ է միջազգայնական Հայաստանի մէջ):»

Կարեւորը Վահանգչիին ունեցած գրական ակարութիւններուն մաս-
նանշումը չէ հոս, ոչ ալ ակարութիւններուն արդարացուցիչ պատճառներուն
գոյութեան փաստը, այլ ա՛յն՝ որ հեղինակը չի փորձուիր սրբազրութիւններ
ընկրու մտքով մանել վէպէն ներս, անոր դիմաց կը պահէ ճշմարիտ արուես-
տագէտի իր միւս սպարումը: Վստածումն իսկ, թէ պէտք է դիմել գիրքերու
մէկուն մշտումի մը ի խնդիր, ինծի կը պատմաւէ մերքին ընկրկում մը: Այս-
պէս կը վարուի ան, առաջնորդուելով անշուշտ միշտ այն մղումէն, որ գրու-
թիւն մը պէտք է սպրի իր սաւաթին ձեւաւորման հետ կազմուած ճակատա-
դիրը: Հեղինակ, Հրատարակիչ, քննադատ թէ ընթերցող, բոլորն ալ, գո-
նէ՛ հայ գրականութեան պարագային, յայտնարեան են նոյն վերաբերումը:
Երբ գրութեան մը մէջ իրենց ուղղութեան, հասկացողութեան կամ ճաշ-
կին հետ անհաշտ բաներ տեսած են, Վահանգչի վրայ յարգաբանքներ չեն
կատարած, այլ տարբեր տեղ յայտնած են իրենց կարծիքը, գրական ասու-
լիաներու ընթացքին, գիրքերով, թերթերու սիւնակներուն:

Գրականութեան պատմութիւնը ընթացած է այս ուղիով, ոգիով, օ-
րէնքով, գրական պարկէշտութիւն կոչուած ա՛յն սրբութեամբ, որուն յար-
դը անփառունակ աստեճանի մը իջնուցին անհայրենիք սկզբունքներու ծա-
ռայող հայրենի պատասխանատուները:

Այնքան շատ եղաւ տիրող անպատասխանատուութեան հետեւանքով
առաջացած իշխալ աները, որ մարդ յաճախ կը ստիպուի սովորական բաներ
իջնուցնել, ըսել, օրինակ, որ գրականութիւնը աստուածաշնչական իմաստ
մը ունի եւ զոր ինչ գրեցի՞՞ գրեցի՞ն շա՛մ մերձ անյղի օրէնք մը, որ չի
կրնար քմահաճ փոփոխութիւններու ենթարկուիլ: Գրութեան մը մէջ միւ-
շեւ անգամ մէ՛կ բառը վճռական նշանակութիւն ունի, նախ՝ իր ամբողջա-
կանութեանը համար, եւ սպա՛ մարդոց հոգիներուն անկէ երկարող արժա-
նանքին առողջութեան տեսակէտէն: Այդ սկզբունքին թելադրանքով էր հար-

կաւ, որ աւագին գրականութիւն մը ժշկութեցաւ Գուրեանի «Տրտուեցէ՛քին
է՛հ, մնա՛ք բարով, Աստուած եւ արեւ» տողին «Աստուածը իր դատուն տե-
ղաւորելու համար, ինչպէս նաեւ Զարեանի «Ես իմ տնուշ Հայաստանի արե-
ւածամ բառը բա՛ն պահելու եւ քարին հետ շփոթելու օգտին»:

Հասանարար այս ճշմարտութեան հրամայականէն, գրութեան մը
ճարտարապետական կառոյցէն եւ ժարոց նորնկան կառոյցին վրայ ունեցած
անոր ճակատագրական անգրագարձէն մեկնելով էր, որ Շահնուր իր մէկ
գրութեան մէջ ընթերցողին կը յիշեցնէր Գօալէրի հոյակապ տողը՝

«Կ'ատնմ շարժումը, որ գիծերը կը տեղափոխէ»

Սւ ուրիշ գրութեամբ մը կը հաստատէր, թէ՛

«Որքան ասեմ, որ մարդ գործ ունի գիր ըստածին հետ, չի կրնար
նուրբ չըլլալ»:

Շահնուրի երեւանեան Հրատարակիչները թէ՛ զիծեր տեղափոխող ա-
տելի շարժումներ կատարած են եւ թէ նուրբ չեն եղած, սրբազրած ու ան-
վերջ սրբազրած են «Լեռնանցը», յայտնած են անկէ հակահ նշանակութիւն
ունեցող քմբողջ հաստատման, Թէ՛քէնանի նամակներուն մեկնաբանութեան
տոբթով Շահնուրի ընդգծած ախտանշանաւորմանը հարիւրապատիկ անգամ
աւելի ծանրակէիտ սխտեք երեւան բերելով «Լեռնանցին» դիմաց, որ իր այս
վիճակին մէջ մեծ տոկոսով մը գրկուած է իր պայթուցիկ նկարագրէն, Շահ-
նուր սխտի ըսէր՝ վերածուած է իր կենդանի ամբողջութենէն պարպուած
հակիթի մը, ստեղծի մը զամանկանեմ ճրբագործ հրացանի, ուր փաւ-
փուշտ չկայ»: Միով բանիւ՝ եղած է

«Ներքին սպառման ապրանք»:

Յաւելին այն է, որ հրացանները փամփուշտէ գրկող, հակիթ հա-
նող, պարբող հայրենի զեկավարութեան այս սրբաբերուն ու ստեղծած
կացութեան հետ Շահնուր ինչ եւս հաշտ է, իր «Լեռնանցին» տոբթով՝ լու-
թեամբ, նման խորասկումի մը ենթարկուած Զարեանի «ԼՄԱՅուն պարագա-
յին» համարձակմանն բարբառով: Չմտնալ պարական երկի մը մամանակուր
մեկնաբանութեան ընդունող իր սարթիմակ փիլիսոփայութիւնը, ներքին պա-
հանջներու պատասխանող փոփոխակներ հանդուրժելու փոփոխամտութիւնը,
ու այն կամակորութիւնը, որ «ժողովրդական հոսանքին մէջ» մղուած գոր-
ծերը հանդուրժելու հպատակութեան կը արամադրէ զինք:

Շահնուր կ'ըսէ եւ ուրիշներ կրեան իւրացնել ըսուածը, թէ այս բոլոր
զիջումները կը կատարուին յանուն Հայրենասիրութեան, յանուն վերականգ-
ման հակայ ճիգին՝ «ազնուագոյն եւ վսեմ ճիգ, որուն համար էիլ իսկ է»,
եւայլն:

Բայց մէկ սրբութեան խորասկումով չէ, որ կը կենսագործուի միւս
սրբութիւնը, ստոր նսեմացումը անհրաժեշտ չէ անոր վսեմութեան, երկուքը
սարբեր բաներ են եւ երկուքն ալ անհրաժեշտ Հայրենիքին: Մնաց որ, Շահ-
նուր միայն հո՛ւ, իր «Լեռնանցին» դաշունահար մարմինին եւ Կ. Զարեանի
«ԼՄԱՅուն» փչրանքներուն առջեւ միայն մեր որչեզրած համազումներէն սար-
բեր համազումներ առաջ կը թէ՛, հասանարար ինքնապաշտպանութեան հար-
կագրանքէ մը մղուած, իր լուծիւնը արգարացնելու համար անպայման,
այլապէս, եթէ զազնուագոյն ճիգին հանդէպ այդքան բուխ ըլլար իր աբ-
բամագրութիւնը՝ նոյն յոգուածին մէջ չէր յիշեցնէր «ազգասիրութիւնը
մեր գրականութեան մէջէր կտորեց» վարուածեան ախտանշանաւորմը եւ
Թէ՛քէնանը սխտի մեկնաբանելով «ժողովրդական հոսանքին մէջ» մղողներուն

դէժ այդքան ուժգեօրէն չէր պոսար, մասնանիւ չէր ընկր գրեկան գործ ժը
տակնուգրայ ընող սա արտադրին երեսոյթը.

«Աննասկացոզուքիւնը կօպիտ է: Գիրք մը, որ սրտառուչ ոգրերգու-
քիւն է մեզի համար, որ գիծէ դուրս ոգր մըն է ամնախընթաց, որ երաշէկ
երկաթ է եւ պայքուցիկ եւ տնաւեր, հայրենի գրագէտներու գրիչիմ տակ
կ'ըլլայ, իմացակամ գերագոյն մոլորամեով (aberration) երկ մը՝ համրա-
մատչելի, օրինակելի եւ շինարար»:

Ձեռնուած Գ. Ջարեանի «Նաւասեւ եւ «Նահանգչի գիմաց իր հաւուի
շառած «Էրմացական գերագոյն ժուրանքով» անցի ունեցած գրական նախ-
նիքը, Շահան Շահուր միւս դէժ հգած է «Էրմացական գերագոյն ժուրան-
քով» գրուած ու «Նահանգչի, օրինակելի եւ շինարար» նկարագրի
պարզող գիրքերուն:

Գ. Ջարեանի «Նաւար գահրամատչելի, օրինակելի եւ շինարար» գոր-
ծուցած եւ «Նահանգչի անմատչելի, ապօրինի ու աներիչ մասերը բթացնե-
լով միայն հայրենիքի մէջ անոր տեղ բացած ժուրանքներուն եւ երկու այդ
պարագաներուն ի՛ր կարգին ժուրան (գաղտնագոյն ճի՛ղ») Շահուրին յի-
շեցնենք ասկէ շուրջ քառասուն տարիներ առաջ Շահուրի բանմեւած գը-
րական հետեւեալ տեսակէտը.

«Նայրենիքիմ լաւ կը ծառայէ այն գրագէտը, որ ապրող երկ մը կը
քոչու հտիմ, այդ երկը իր ազգակիցներուն համար նպաստաւոր ըլլայ, ք՛
աննպաստ»:

Անտարկելի է Շահուրի մեակերպած այն փորձառութիւնը: Գրա-
կան էջի մը մէջ էականք արուեստն է միւս եւ ոչ թէ օգտակար ըլլալու թէ-
կող ապիւ. մղումը: Մայրագոյն որբութեան ուղղուած հայհոյանքն անգամ
արժէքի կը վերանուի գրականութեան մէջ, եթէ արարչագործ շունչով ժը
օժտուած ըլլայ անկատ: Յիշենք զարձեալ Գուրանը եւ Գուրանին հետ այն
անգամ վարուեանը: Առաջինը անհասական արտունջով ժը խրեցաւ «Սիրիմ»
Աստուծոյ կողը, երկրորդը՝ հաւաքական ասուպանքէ ժը խոցուած հար-
հոյց Անոր, բայց թէ՛ «Տրտուեցէ՛ք եւ թէ՛ «Նայրենիք» աղօթքի մը գո-
րութեամբ կը հնչեն մեր ականջներուն: Այդ բանաստեղծութիւններուն
պատճառով Աստուած իր գահէն վար չ'իջնէր, բայց կարգացողին մէջ բան
մը վեր կը բարձրանայ անպայման, տարբեր մակարդակի մը վրայ կը փո-
խադրուի ենթական: Կը պատահի արուեստին հրաշքը:

Գարգան տարբեր չէր նաեւ Նարեկացի եւ առհասարակ հայ ժո-
ղովուրդը ամբաստանող «Նահանգչի» հերասներուն գրուած էջին: Այդ պոթ-
կումին մէջ հետապնդուած հիմնական միտքը Նարեկացիին ոչնչացումը չէ
տողին վարկածային ներկայութիւնը եւ երբեք չժողնալ մէջբերումին շարու-
նակութիւնը՝ «չախուռն մտածուես, որ ազգասէրի իր տառապանքիմ մէջ
կ'ուզէ անպայման մէկը նետել ամբաստանելի աքսոսիմ վրայ»:

Իուն խնդիրը այդ է, «ազգասէրի ասուպանքը», քօան-երեսեական
թուականներուն տարադիր մեր երիտասարդութեան հասարակաց ա՛յն հո-
գեվիճակը, որ խորունկէն եկող ազգակներու, ցաւառիթ գառանցանքներու
եւ ուժղին հայհոյանքներու քառսի մը վերածեց իւրաքանչիւրին հոգին եւ
իւրաքանչիւրը մղեց «անպայման մէկը նետել ամբաստանելի աքսոսիմ վը-
րայ»: Շահուր բռնեց Նարեկացիի օձիքը:

Ի դէպ, իբրև յղացում գուտ շանուրեան կնիք մը չի կրեր գրական Հակոյ մը ամբաստանելու այս ձևեր: Անդիտանալով Հնադրոյն փաստերը, ըսենք, որ ընտանեացիին ձեռնարկումէն անմիջապէս առաջ, այսինքն՝ գերի-
 րապաշտ շարժումին բուսն օրերուն, ասրից կամ մեռած գրագէտները ամ-
 րաստանելու յանդուգն ձեռնարկները բնականաբար իրողութիւններ էին
 արդէն: Գրականութեանց պատմութեան հետեւողներուն ծանօթ է, օրինակ,
 գերիբազալա շարժումի երիտասարդ ժողովրդուն ստորագրութեամբ Այս
 տեսած Վիլիամը անուն գրքոյից, ուր փորձ եղած էր դիակի վերածնել Անա-
 թոյ Ծրանսը: Շարժումին ռազմական, Անտրէ Պրոթոն, Վեպուսը արգիլ-
 ւած խորագրով յոգուածի մը մէջ կը գրէր. «Ֆրանսի մահով՝ մարդկային
 ստրկամտութենէն բաց մը կ'անհետանայ: Բոզ տօն մը ըլլայ մեզի համար
 այդ օրը. երբ կը քաղեն խորամանկութիւնը. աստղապաշտութիւնը, հայ-
 բնասիրութիւնը, պատեհապաշտութիւնը, սկստիկութիւնն ու քարաբա-
 րութիւնը: Իր դիակը զննելու համար քոզ պարպեն եթէ կ'ուզեն քարափիմ եզեր-
 քը շարուած հին գիրքերու սնունդ մը եւ յայտը նետնն Անն գետը: Պետք չէ
 որ այս մեռած մարդը փաշի գառնայ: Ապա անոնք ձեռք առին Փօլ Քլոստը,
 Անտրէ Ժիւսը (եթէ մտրդ երկու վայրկեան ժխտ կարգայ՝ բերանը կը հո-
 տին):

Պատերազմի բնթացքին հոգի եւ սկզբը կազմած եւ պատերազմի Հե-
 տեանքները դեռ իր կաշիին վրայ կրող ամբողջ աշխարհի երիտասարդու-
 թեան հոգեվիճակը դրսևորող երեսոյթ էր ատիկա, պատրանաթափութեան-
 ներու իրական կամ խնդրական պատմական ժողով, ամբաստանութիւններով,
 արտաբաններով Հարուստ չըլտն մը, ուր ակնի՛ք քան ուրիշ տեւէ ազգի երի-
 տասարդութիւն՝ մէր երիտասարդութիւնը իրաւունք ունէր արեւելու, հը-
 շալու, ամբաստանելու, գառափետելու, ու Շահուր եղաւ այդ վերաբեր
 երիտասարդներէն մէկը, որ տառապալին իր ապրումներուն եւ ուղեղը շար-
 շարող մասնամեծներուն մեծ մասը յանձնեց վերի ետեւեփող սողորուն, արոնց
 մէջ արուած խնդրական պատմականներուն ջոփն ի վեր ճշմարտապէս բնութա-
 գրուած են իրական ու ոչնչական գործօնները, Հաւատքէ պարպուած, Հա-
 տապաշտութեան Հանդէպ անասրբեր, համոռ, լահամոռ, ստարամոռ արտ-
 բանները, ազգային մարգերը, պատիկ պարոնները, կէս մատուրական կիտ-
 կատարները, արոնց մասին եղած սեւագրութիւնները եւ սեւագրութիւննե-
 րուն ջոփն ի վեր Հակոբարար շողացող գեղեցկութիւնները յապաւելլ՝ կը
 ճշմանակէ մէկ կողմէն լուսնայն Հովանաւորել ժողովուրդը կրծող, մաշե-
 ցնող մակարոյծներու ջոյիքը, եւ միւս կողմէ՝ զրկել ընթերցողը զարձեռ-
 Հակագրութեան օրէնքով ստացուած ըմբե սիմ, մեր ուժիմ, կամքիմ, ան-
 հատակամտութեանց գոյգէնն ու հասեւ զկուսելու, խածնելու, մտքառելու ա-
 ոողջարար կողմն:

Յապաւելլներու ետին, անուշտ, դժուար չէ կուսել ընտանեացի ե-
 րեւաններ Հրատարակիչներուն Հետապնդած միտքը, անոնք պարզապէս կը
 սարսափին մարդկային արժանապատուութեամբ շնչող այդ ախպարէն եւ ճիզ
 կ'ընեն, որ Հայրենի ընթերցողները շարունակեն մեալ զանմտօրէն կրաւորա-
 կառ, համակերպող, ազիրաւրլու, անգիտակից: Դժուարը այս բոլորին առ-
 ջեւ Շահուրի լուսնեան շարժառիթը կուսելն է, Հայրենի ընթերցողներուն
 գինք գեղջուած, այլասերած, թեթեւցուած կերպարանքներով ներկայացող-
 ներուն Հանդէպ իր լուս Համակերպութիւնը:

Գրական գործի մը ծանրութեան կեղտոնը տեղափոխող ելոյթներուն

զէ՛մ պոռալու սովոր Շահուրի այս նոր կեցուածքը, իր հարազատ վէպին մէջ կատարուած սեղափոխութիւններուն ու ընդարձակ սեղատուութիւններուն հանդէպ ընտրած իր լուսթիւնը այնքան զարժանալի պիտի չըլլար առկաւին, եթէ չՆանահնգի երեւանեան ազգայութիւնը անծանօթ մնացած ըլլար իրեն: Շահուր մինչև սեղամ խոսած է իր հրատարակիչներուն ենթագրելի գրգռողաճանաչներուն մասին: «Եթէ, — կ'ըսէ «Գրականութեան» անդին եւ այլուր» անուն իր յօդուածին մէջ, — այսօր Երևան կը բաճայ իր քնւերը «Նահանջ»ի առջև, պատճառը այն է, կը խորհիմ, որ այդ գիրքը նուիրական թան մը կը պաշտպանէ իր սահմաններուն մէջ»:

Ուրեմն Շահուր ա՛յլ միայն ծանօթ էր իր վէպին երեւանեան ազգայութեան, այլև կը գուշակէր (զի՛ր խորհիմ) անոր թէ քաղաք Երևանի պատճառը, «որ այդ գիրքը նուիրական թան մը կը պաշտպանէ իր սահմաններուն վրայ»:

Գիրք մը, ի հարկէ՛ կրնայ նուիրական բաներ պաշտպանել, բայց երբ զէրբը զէրբ է, զէրբ մնացած է, Շահուրի նախկին ուսմանքին համաձայն, երբ այլոցած է իրբև գրականութիւն»:

Ըստ երևույթին, Շահուր, գոնէ՛ Զարեանի «Նաւաս»-ն եւ իր «Նանահնգ»ին դիմաց, բուրոսովին հրատարած կը թուի գրական իր խոստովանութիւնն եւ «Ճանաչութեան հասանքին մէջ» նետուելու հեշտանքը կը գերադասէ իր ստեղծագործութիւնը որբայիղծներուն զի՛մ պաշտպանելու աըղաճարդկային ստուապանքին:

Ահա՛ս՛... .

Նման առիթներու միշտ յիշած ենք եւ չենք կրնար հոգեկան նոյն բեկումով կրկին շիշել Շահուրէն սասը անգամ աւելի սոսկալի կացութեան մը ենթարկուած, իր ու Շահուրի, բուր՛ Շահուրներուն կրած կերպարանափոխութիւններուն գառաստանը իր «Մարտիկներուն» շատ առաջ, ազատութեան մէջ շիշած սրերուն կատարած Զարեանի հետեւեալ վճիռը.

«Սոսկալին այն է, որ մարդիկ այնքան հեշտ կերպով հրատարուում են իրենց մտքի պակներին»:

Բ. Ե Ղ Ի Ա Յ Ե Ա Ն

Ժողովրդային հոգեբանութիւնը

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ԻՆՏԵՎՅՈՒՄԻ ԱՄԷՋ

Ը.— ԲԱՆՏԻՆ ԱՊԱՒԻՆՆԵԼՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԸ

«Քաջ Նազար» Հեքիաթը, սակայն, կը մտածէ, թէ բախտի ճամբան շատ վըտանդաւոր ճամբայ է: Անդունդի եզերքէն քայլուան կը նմանի: Միշտ ներկայ է Հաւանականութիւնը, թէ Ծանրութիւնը կրնայ յանկարծ միւս կողմը հակել ու կործանել բախտախնդիրը: Քաջին յաջողութիւնը միշտ բարեկ թելի մը կապւած կը մնայ, որ կրնայ յանկարծ փըրթիլ:

Օրինակ, Հարսանեկան Հաւաքոյթին մէջ կան մէկ-երկու արթնածիտ երիտասարդ Հիւրեր, որոնք արդար կասկածանքով կը դիտեն Քաջ Նազարը: Մէկը Հարց կու տայ, թէ Հապա եթէ անուանի քաջ է, ո՞ր է Ծառաներու իր շքախումբը... Միւսը կ'առարկէ. եթէ մէկ Հարուածով Հազար ջարդող է, ո՞ր է Հապա իր սուրբ, փոխան սա ժանգոտ երկաթի կտորին, զոր կապեր է մէջքին... Քննարկու միաքով մարդիկ կան միշտ, բայց ստուրգ «Հիւր» են բազմութեան մէջ, եւ այնքան զիչ են, որ անմիջապէս կը լռեցունին միւս պարծենկոտ ամենադէտններու շատախումբեամբ: Քննադատ մարդիկ կը լռեն,

կը Համակերպին ընդհանրացած կարծիքներու:

Վասնզ մը եւս դամոկլեան սուրի նման կախուած կը մնայ կեղծ քաջի ուսին վերեւ: Կրնար պատահել, որ իր գիւղէն Ծառոթ մէկը դար, եւ կամ իր իսկ կինը Համբաւը լսելով դար դինք դունէր եւ գոչէր մարդոց երեսին. — Հէ՛յ, սա մեր վախկոտ Նազարը առեր դա՛ն էք նըստեցուցեր... (Ու Նազարին դաճաւով՝ յանդիմանէր:

— Ի՞նչ, անպիտան, ես առեմք դե՛մ...

Կայ նաեւ մեծ վտանգը, թէ Հերոսի քաջութիւնէն շատ բան կ'ակնկալէ ժողովուրդը: Ան պէտք է Հրապարակու ապացոյց տայ իր փառքին: Ահա անասորի վազը կը մոռնէ. ո՞վ պիտի ելլէ դէմը. անուշտ թէ քաջերու քաջ Հիւրը: Հապա՞ եթէ բախտը ուշանար օգնելու: Ի՞նչ մեծ վտանգ էր դադանին դէմ ելլելը: Նոյնպէս, Հարեան երկրի թագաւորը պատերազմի կու գայ հսկաներու քըրով վէճով: Մ՛վ պիտի էլլէ դէմը. անշուշտ թէ այդ գեղուհին իրեն նշանած ընդունող քաջը: Վա՛յ էր, եթէ դիպուածը պայն Հոն ալ յաղթանակով չպտակէր:

Ուշադրութեամբ դիտել ասնք, սակայն, թէ բուն յաղթանակները ասնողը

Քաջ Նազար ինքը չէ, այլ՝ ժողովրդային միացեալ ուժը: Վազրը սպաննողը ժողովուրդն է, որ հասա-հուսա գոչելով՝ շմորած գազանին վրան կը խուժէ: Թշնամի բանակը ջարդողը գարձեալ ժողովուրդն է: Տարօրինակ է, որ Քաջ Նազարէն առաջ ալ կար ժողովրդային այդ ուժը, բայց ինչո՞ւ չէր կատարած այդ յաղթական գործերը: Որովհետեւ այդ ուժը պէտք ունի զինք հրահրող առաջնորդութեան, կամ՝ սուր պատրանքը առող մէկ այլ օրինակի: Անգամ մը, որ Հերոսին սխալ արտքը նպատակաւ ի մաստով մեկնաբանեց, սիրա առաւ եւ յարձակեցաւ, ժողովուրդը ի վիճակէ է իր յաղթանակը առնիլ: Պէտք ունի միայն այդ ներշնչումի կայծին — թող ըլլայ իսկ կեղծ տիպոսէ մը հրահրուած: Անա թէ ինչով կը բացատրուի յաղթանակը, հակառակ նոյնիսկ իր ուղիկար առաջնորդին:

Բայց ի վերջոյ, կայ ուժ մը, որ կը մերժէ կեղծ փառախիւսը: Ատիկա բնագոյնին խորունկ մղումով առաջնորդուող եւ անկող զգացումով արարած մըն է: Աժողով շքազ Նազարն Հեքիաթին մէջ ոչ ոք կայ, ոչ մէկ մարդ ողջ աշխարհի մէջ, որ համարձակ կեղծիքը մերկացրնելու, թէ՛

— Հէ՛յ, խնօքներ, ի՞նչ մէջտեղ ինչ կեր կ'երկրպագէք. ոտ սո՛ւա Հերոս է...

Հեքիաթին մէջ բացակայ է Հերոսի կրնն ալ: Նազարը անարգական ձեւով հրապարակ քշելէն ետք՝ երբեք չի մասնակցիր անոր յաղթանակներուն: Գիւղի տէրտէրն իսկ, որ կը ծիծաղի անոր ապիկարութեան վրայ, լուռ է սակայն: Գայ միայն մէկ արարած, որ չի հպատակիր կեղծիքին, ան ալ անտուն մըն է, ազնւազարմ այդ ճծոյզը, որուն վրայ կը նստեցնեն Հերոսը: Միւս, ճորի բնունատար ձին կորսնցուցած է իր բնազային ըմբռնութիւնը ու կը հնազանդի իրեն նոր տիրացոյցին: Բայց ազգավարտ երկվարը արարեր է: Հեքիաթը կ'ըսէ. — Երբ նժոյզը զդաց, թէ իր կոնսակին հեծած մարդը ի՞նչ ապիկար անպիտան մէկն է,

զլուիքը չյանձնեց անոր, թուա ու մտաւ ո՛չ թէ Հերոսին ուզած փախուստի համբան, այլ թշնամի բանակին ճի՛շդ մէջտեղը, վասնզնեքու հուրին... Մարդիկ չճանչցան, միայն անասուն մը ճանչցաւ կեղծիքը. եւ ի՞նչ կարողութեամբ — իր անեղծանելի բնազայնը:

Անա ատիկա է կեղծը երեւան բերելու հարազատ ուժը. անասունին մէջ՝ բընազգը, մարդուն մէջ՝ ներքին իմբիւսիւ զգայութիւնը: Եւ այս պայմանաւորութիւնը ունին աւելի շատ ա՛յն արարածներ, որոնց մէջ բնութիւնը գեւ անաչարտ պահուած է: Օրինակ, մանուկները, որոնք իրողութիւնները պարզ լոյսով զիտող աչքեր ունին, որոնց զգացումները եւ մտածումը գեւ կաշառուած չեն բազարուրթութեան շարքերով, բնազգօրէն գիտեն, թէ իրենց մտեցող անձը բարի՞ մտադրութիւն ունի, թէ չար:

Յիշենք Հանո Անտերքնի այն Հեքիաթը, ուր երեք թափառաշրջիկներ կու գան թագաւորին կը խոստանան չինել այնպիսի նուրբ մետաքսեայ զգեստ մը, զոր կարող պիտի ըլլան տեսնել միայն ամէնէն իմաստունները: Եւ ահագին դրամ կը կորզեն, մեքենաներ կը լարեն, շարժումներ կ'ընեն, իբրեւ թէ հիւսելու վըրայ են հասարակ աչքերու անտեսանելի, բայց իմաստուններուն տեսանելի մետաքսեայ զգեստը... Թագաւոր ու պաշտականներ ատեն-ատեն կ'այցելեն գերմանիներու աշխատանոցը, ու թէեւ որ չինչ կը տեսնեն, բայց միւս կը զովեն, թէ հիւսնալի բան հիւսուելու վրայ է այնտեղ: Որովհետեւ կը վախնան, որ եթէ ըսեն, թէ իրենք բան չեն տեսներ, ատիկա պիտի մասնէ իրենց անմտութիւնը եւ պիտի ըլլան անարժաններ զաւուսն ու պաշտօնին: Վերջապէս, օր մը կը յայտարարուի, թէ լրացած է նրբահիւս ըդգեստը: Թագաւորը կը մերկացուի իր սովորական զգեստներէն եւ հանդիսաւորապէս կը հազուեսցուի հրաշահիւս մետաքսազգեստը: Զի կը նստեցնեն զայն ու մայրաքաղաքի փողոցներէն երգով թափօրով կը տանին... Ամէն ոք իր իրական

աչքերով կը տեսնէ, թէ թագաւորը վըրան հագած զգեստ չունի. բայց ամէն ոք իր երեսակայութեան մէջ կը տեսնէ անոր հրաշահէա զգեստը... Բայց ահա մարդկային մէկ տիպարը կը ծանուցանէ կեղծիքը — մանուկնորս խումբ մը, թափօրը անցնելու պահուն, իրենց խաղը կը զարդեցնեն, յանկարծ կը պոռան.

— Հէ՛՛յ, թագաւորը մերկ է...
Հո՛՛ւյ, թագաւորը առանց զգեստի մի է նստեր...

Ու մանուկներու բացազանչութեամբ, իրարմէ քաջալերուած՝ բոլոր թափօրականները կը գոչեն, թէ թագաւորը իրապէս մերկամարմին կը շքէ... Ու խոյտառակ կ'ըլլան թագաւոր ու պալատականներ, եւ անշուշտ այդ կեղծ ու գրածաշարք զերմակները, որոնք իրենց ծրարները հաւաքած՝ արդէն անցեր են երկրին սահմանը...

Այսպէս ալ, մարդկային կեղծիքները քողարկածողը բնածին կարողութիւն է: Ներքին զգացումներու բարոյական մաքրութիւն, հոգեկան յասակառեսութիւն, իրականութիւնները առանց ճշուշի զիտելու յատկութիւն. արժանիքներ են ասանք, որոնք կը գտնուին՝

- Բնազգով միայն աշխարհը ճանչցող կենդանիին մէջ,
- Իր զգացումները անշար յայտնել սիրող մանուկին մէջ,
- Անկեղծ ճշմարտութեամբ խանդավառ երիտասարդութեան մէջ,
- Եւ արուեստագէտ յասակառես հոգիներուն մէջ:

Այս է պատճառը, որ արուեստագէտ հոգին երեսոյթներու խորքը կը թափանցէ, շարժումներու ուժը կը կշռէ ու ճշմարտութիւնը կը մեկնարանէ իր իրական հանգամանքին մէջ: Մարդուն կը ճանչցնէ իր աշխարհը եւ ինքզինք: Գրական գործերու միջոցով կը մերկացնէ շարունակ ու նայնութիւններ եւ կը բարձրացնէ համեստութեան մէջ անտեսուած մեծութիւնները:

Արդ՝ հարկ է Քաջ Նազարը եւս դիտել իր բախտապաշտութեան կեղծիքը մերկացնող արուեստի գործ մը:

Թ. — «ՔԱՋ ՆԱԶԱՐ» ԼԵՒԻՍԹՐԸ
ԲԱՆՏԱՊԱՇՏՏՈՒԹՅԱՆ
ԾԱՂԱՆՔՆ Է

«Քաջ Նազար» Հեքիաթով հասած ենք ուրեմն ժողովրդային հոգեբանութեան գլխաւոր մէկ հարցին:

Ի՞նչ նպատակով ստեղծուած է ժողովրդային ծիծաղատաւ այս Հեքիաթը:

Արուեստի ամէն ստեղծագործութիւն հիմնական մէկ յաղթանակի կը ձգտի:

Արդ՝ մարդկային ի՞նչ արժէք կայ Քաջ Նազարի մէջ:

Անշուշտ շատ հասարակ մտեցում մը պիտի ըլլար ըսել, թէ զուարճացնող Հեքիաթ մըն է ստիկա, գրական վայելքի էջ մը: Ամէնքս ալ ասելին պիտի փնտռէինք անոր մէջ: Սակայն նոյնքան հասարակ մեկնարանութիւն մըն է սովորական այն իմաստը, որ արուեստ է այս Հեքիաթին, թէ ան մէկ գտնադուլալիւնը ըլլայ բախտալիրութեան... Գծախառնար, զայն այդ մեկնարանութեամբ ընդունած կը թուի նաեւ ժողովուրդը... Կարծէք, Քաջ Նազարը ծիծաղելի դարձնելու տեղ, աշխարհը կը ծաղրուի:

Բայց այդ բախտալիրութեան ջատագովութիւնը արամազծօրէն հակասական է հայ ժողովուրդի բուն հոգեբանութեան: Բախտի ուզատող այդ մտայնութիւնը կրակորակածութեան եւ անճիգ ապրուստի պիտի հրաւիրէր ժողովուրդ մը: Մինչդեռ, հայը ճանչցուած է ու զովուած իր բեւ իրատես, աշխատասէր, շարքալ, միշտ յուսալից ու զահարեող ժողովուրդ: Ուստի՝ բոլորովին անճիշդ պիտի ըլլար հաշտեցնել հայու հոգեբանութեան հետ այդ բախտալիրութիւնը եւ ասանց աշխատանքի արդիւնք վայելող նրկարագիրը, որ կը ներկայանայ «Քաջ Նազար»ի մէջ: Այդ մեղկ նկարագիրը կը յարմարի միայն այն ցեղերուն, որոնք՝ ստեղծագործ ուժէ զուրկ՝ կ'ապրին ուրիշներու արտադրոյթովը:

Արդ՝ մեր մեկնարանութեամբ, «Քաջ Նազար» Հեքիաթը ժողովրդային սկզբնական ստեղծագործութեան մեծին մէջ բախտի ո՛չ թէ մէկ ջատագովու-

թիւնն է, այլ՝ բախտի մէկ հսկայ ու հիանալի ծագրանքը... Բայց կը թուի, թէ սերունդէ սերունդ պատմողներու բերին մէջ կորուսած է ժողովրդային սանդագործութեան բնատուր այդ նըկարագիրը, այնինքն՝ բախտի դէմ ծագրանքի մտքիւր, ու վերածուած բախտասիրութեան մը: Սակայն, այս վիճակին մէջ իսկ, Հեքիաթին մէջ վերադարձը են ստիպելին փափուկ կարգ մը ատրիբ, որոնք կ'օգնեն մեզի վերականգնելու իր բնատուրը՝ հիւսքը՝ իրեն սփռուող մը բախտասիրութեան դէմ:

Նախ՝ Հեքիաթը մեզի կու գայ միջին դարերու խոնարհութիւն ժամանակներէն: Եստեան, թաթար, թիւրքմէն, իրոխըզ եւ ապաւլ արշաւախումբերու եւ իրարու դէմ կուտող հարեան ձորպետութեանց ժամանակներն են: Աշխարհի մէջ հաստատուն կարգ-կանոն չկայ, օրէնք եւ սովորոյթ պահող ուժ չկայ, Հեղինակուոր վասակելի իշխանութիւն չկայ: Բարին՝ շարէն, իրուր՝ կեղծէն վանագանելու իմաստութիւն չըկայ մարդոց մէջ: Հանդիպողը կը գործեն, կը յափշտակէ ինչ որ կրնայ. էշ ու ձի գտած սեղէն կը թաշէ ու կ'երթայ: Մարդու կեանքը օրը օրին ապրումի մը վերածուած է: Թափառականին ուրկէ գալն ու ուր երթալը հարցնող-ստուգող չկայ:

Այսպիսի խորքի մը վրայ, եւ այսպիսի կացութեան մէջ է միայն, որ արկածախնդրութիւնն ու բախտասիրութիւնը օրէնք կը դառնան: Եւ ահա այդ աշխարհին մէջ շատ կան զիրքի, հարըստութեան, իշխանութեան աէր մարդիկ, որոնք ո՛չ թէ արժանիքով եւ աշխատանքով, այլ՝ բախտով եւ հանգամանքներու պատահականութեամբ տիրացած են այդպիսի հարստութեան, զիրքի եւ իշխանութեան: Հեքիաթը ըսել կ'ուզէ. — Ո՛վ ժողովուրդ, տեսէ որքա՛ն ծիծաղելի են բախտով հուշկուած մեզ շըրջապատող մարդիկը. կեղծ են անոնք. զգո՛յշ եղէք անոնց արժանիքները ծափահարելու մէջ. դուք ալ մի՛ ինձք սուս

համբաւները տարածողներու խայտառակ գիրքին մէջ:

Բախտասիրողի արկարբ շափէ ու համեմատութենէ զուրա խոշորցնելով, Հեքիաթը զայն բուրբոյն ծիծաղելի գարձնէ կ'ուզէ: Արդէն Հերոսը ինքն ալ հիացում ու սէր չ'արթնցներ երբեք: Ընդհանրապէս, Հեքիաթ բուսածին Հերոսը պաշտամունք կ'արթնցնէ: Մինչդեռ այս մէկուն Հերոսը արգահատանք միայն կը հրաւիրէ իր վրայ: Ոչ մէկ մարդ, երիտասարդ կամ պատանի պիտի ուզէր ըսել.

— Ես հիշդ այս Նագարին պէս պիտի ապրիմ...

Հեքիաթին արթնցուցած այս ժխտական զգացումը ինքնին արդէն ներքին տպացոյց մըն է, թէ իր նպատակը բախտասիրութիւն զաջալերել չէ, այլ՝ ընդհակառակն, զայն խորհելի ներկայացնել:

Աւելի վերի խափ մը վրայ, զազաբական աշխարհի կեղծուպատիր յաջողութեանց ծանուցումով տարածուած հսկայ ծագրադրոջ մըն է Քաջ Նագարի արկարբը: Հեքիաթը ծանուցանել կ'ուզէ —

— Ո՛վ ժողովուրդ, սա մեծ-մեծ թաղաւորներն ու ձորպետաները, որոնք դուրսէն, անձանօթ վայրերէն եկեր ու գրուեր են մեր երկիրը. սա լենկթիմուրեան ու ճենկիդխանեան տիրակալները, սա թիւրքմէն եւ ապաւլ ու իրոխըզ թափառաւրջիկները բուրբոյն ոչինչէն իշխանութեան տիրացած ու մեր գլխուն փաթթուած աղէտներ են: Արթուն ու զաջ կեցուածք ունեցէք անոնց դէմ: Անկեղծ մարդոց կեցուածքին դիմաց, օր մը երեսան պիտի ելլէ անոնց կեղծ դորութիւնը, թէեւ այսօր իրենք վայելի թուին աշխարհը...

«Քաջ Նագար» Հեքիաթը, ուրեմն, իր հարազատ կառոյցին մէջ, ստեղծագործութիւն մըն է ո՛չ թէ բախտասիրութիւն զաջալերելու համար ժողովուրդին մէջ, այլ՝ ծաղրելու համար բախտով զիրքի բարձրացած հասարակ արարածները: Եւ այս տեսակետով, մենք

Հարկ է զայն ընդունիք իբր ժողովրդա-
յին անկեղծ քաջութիւն հրահրող զրոյց
մը, նման «Սասունցի Դաւիթ» գիւցադ-
ներգութեան: Սասունցի Դաւիթ քաջա-
գործութեան դրակամ տիպար մը կը
ներկայացնէ, իսկ Քաջ Նազար ծխողական
կողմէ վրայ բախտասէր տիպարը այնքան
ծիծաղելի կը ներկայացնէ, որ ամէն
մարդ կը խորշի անկէ: Չայն կը ներկա-
յացնէ մերկացած մարդկային բոլոր ար-
ժանիքներէն, եւ կը մզէ ծիծաղելի վի-
ճակի մէջ:

Հայրենի աշխարհին վրայ արշաւող
բախտախնդիր հորդաններու դէմ՝ Հայ
ժողովուրդին ինքնապաշտպանութիւն ու
քաջութիւն ներշնչող Հեքիաթ մըն է
«Քաջ Նազար»: Օտար արքայաներու
ճշմարտի տակ սովորութիւն դարձած իր
համակերպութիւնը արտաքին երեւոյթ
է Հայութեան մէջ. իր ներքին բնութեան
մէջ՝ անոր արժանապատուութիւնը չէ
մեռած, ու թաքուն սէրը ունի ճշմարիտ
քաջութեան, երբ կը ծիծաղի կեղծ քա-
ջութեանց վրայ:

Բայց հիմա կու գայ մեծ հարցը, թէ
ինչպէ՞ս Հապա կը շարունակուի Քաջ
Նազարի գոյութիւնը, ինչպէ՞ս Հեքիաթը
կ'ըսէ, թէ մինչեւ այսօր ալ կ'ապրի Քաջ
Նազար, կ'իշխէ ու զէջֆ կ'ընէ, ու պի-
տի շարունակէ որքան ատեն, որ մար-
դիկ խելքով չեն դատեր... Այդ բախտա-
խնդրութեան աւանականութեան դէմ մեծ
խրոզութիւն մը կայ, թէ՛ Քաջ Նազար
չաւնի իր սերունդէն ժառանգ մը: Չունի
որդի մը, որ իրեն յաջորդէ, ո՛չ առաջին,
ոչ երկրորդ կնոջմէն: Դիւցադնական ու-
րիչ շատ տիպարներ կը շարունակուին ի-
րենց սերունդներու շղթայով: Այսպէս
է, օրինակ, որ Սասունցի Դաւիթ քաջերը
կը շարունակուին յաջորդական սերունդ-
ներով եւ, նոյնիսկ ամէնուն մահէն ետք՝
զեւ Փոքր Մենք քարայրի մը մէջ կենդա-
նի կը սպասէ լոյս աշխարհ բացուելու...
Մինչդեռ կեղծ քաջը չունի իր արիւնէն
ծնած յաջորդ մը: Ատկա բնական անհե-
տացումի Հաւաստիք մըն է: Քաջ Նազար

առանձին մէկ երեւոյթ է, կեանքի մէկ
պատահականութիւնը: Ու եթէ մինչեւ
այսօր ալ կը շարունակուի իր տիպարը
ու կը ծիծաղի իր իշխանութեան հնա-
զանդող աշխարհի միամտութեան վրայ,
ատկա ո՛չ թէ արեան ժառանգական յա-
ջորդականութեամբ է, այլ՝ ժողովրդ-
դային համակերպութեան շարունակու-
թեամբ՝ իրեն նման նոր տիպարներու
հրապարակ գալովը: Կ'իշխան հին կեղծ
հերոսները, բայց կու գան նորերը, մին-
չեւ որ առաջ գան նախապաշարունակէ
ազատուած համարձակ մարդիկ ու քո-
ղազերծեն կեղծիքը:

Հեքիաթը տոնք չէ ըսած, բայց
զրոյցին թելը կէս կտրած է, որպէսզի
ամէն լսող գայն լրացնէ, Հասցնէ Հոն:
Որովհետեւ այդ է բնական վախճանը
կեանքի Հաստատ օրէնքները անտես-
դին: Այսպէս, յանկարծակի փոթորիկով
մըն է, որ կը փարատին կեղծիքներու
չուրջ հիւստուած մշուշները: Բախտի իշ-
խանը միշտ իր շուրջ համբաւի մը մշու-
շը կը արածէ եւ անոր ետին կը ծածկէ
իր փտատիբութիւնը: Բայց կու գայ նոր
սերունդ մը ու կը պատուէ այդ վարտա-
գոյրը, բայց, աւա՛ղ, ժամանակ մը
ետք, ի՛նքն ալ անզ կու տայ նոր մշու-
շի մը վարտագոյրին: Եւ կեղծիքի շղթան
օղակ-օղակ կը շարունակուի, որքան ատ-
են, որ կայ իշխողներու բախտախնդ-
րութիւնը եւ ժողովուրդի Հաւանդա-
կանութիւնը:

Այս է պատճառը, որ իր գոյութիւ-
նը միշտ կը պահէ Քաջ Նազար: Ու
պիտի պահէ այնքան ատեն, որ մարդիկ
խելքով չեն դատեր:

Քաջ Նազարներ եղած են ու կրնան
ըլլալ: Բայց անոնց գոյութիւնը դիպ-
ւածական է: Որովհետեւ արկածա-
խնդրական կեանքը ո՛չ միայն Հեքիաթ-
քի ենթակայ է կարգուկանոնի վրայ
հիմնուած այս աշխարհի մէջ, այլեւ
ինքն իր մէջ կը կրէ իր կործանումին
որդը:

(Շար. 8 եւ վերջ)

ԲՆԻՉԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

**Ֆ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը**

Ի՞նչ է ԳԵՐԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Նախորդ էջերուն մէջ, հակիրճ ձևով փորձեցինք պատկերը տալ 20րդ դարու առաջին կէտին տիրող մղձաւանջային մթնոլորտին եւ մտքերու մէջ տիրող խուճապին ի տես կատարուած բիրտ յեղաշրջումներուն՝ — պատե-
րազմ, յեղափոխութիւն, դիտութեան նուաճումներ, փիլիսոփայական յան-
դուզն տեսութիւններ, գրական եւ գեղարուեստական նոր ըմբռնումներ, ըս-
տեղծելու համար այն մթնոլորտը, որուն մէջ պիտի ստեղծագործէր քանաս-
տեղծը:

Որովհետեւ գրական, գեղարուեստական կամ դադափարական որեւէ
շարժում չի կրնար անջատուիլ տիրող քաղաքական եւ ընկերային մթնոլոր-
տէն եւ նախընթաց շարժումներէն:

Այսպէս ծնունդ առին ու տարածուեցան գրական բոլոր դպրոցները,
դասականութիւնէն մինչեւ ձիպապաշտութիւն, խորհրդապաշտութիւնէն մին-
չեւ գերիրապաշտութիւն, որ եղաւ վերջին ժամանակներու գրական եւ գե-
ղարուեստական կարեւորագոյն յեղաշրջումը:

Սակայն ինչպէս ըսինք, գերիրապաշտութիւնը ծնունդ չառաւ յան-
կարծ, այլ կազմաւորուեցաւ տարիներու ընթացքին, օգտուելով զինքը կան-
խող կարգ մը շարժումներէն, որոնց գլխաւորները կը կոչուին ապագայա-
պաշտութիւն, որուն ժառին խօսեցանք արդէն, եւ տաւտայիզմ, որուն ժառին
քանի մը խօսք պիտի ըսենք:

Տաւտայիզմը, որուն արժատը անիմատ կամ մանկական տաւտա բառն
է, հիմնուեցաւ 1916ին, Յիւրիխի մէջ, Լուսմանացի Թրիսթան Յարայի, ալ-
գասցի Հանս Արփի եւ երկու գերմանացիներու կողմէ: Առաջին պատերազմի

աւարտին, ան փոխադրուեցաւ Փարիզ, ուր գործունէութեան լայն ասպարէզ կար: Յարա հրատարակեց տասնայիզմը մանիֆեսթը (1918) եւ հիմնեց պաշտօնաթերթ մը, որ նախ կոչուեցաւ «Քապարտ Վալթեր», յետոյ՝ «Տատա», ու, վերջապէս, «Փամոնիպալ»:

Յարայի մանիֆեսթին մէջ կը կարգանք յատկանշական հետեւեալ նախադասութիւնը. «Ես կը քանդեմ ուղեղիմ քաժիմները եւ ընկերային կազմակերպութեան կառայցը. բարոյալիկ մտնուրեք եւ երկինքին ձեռքը նետել դժոխքին մէջ, դժոխքին աչքերը՝ երկինք, վերահաստատել տիեզերական սիրքի մը բնդուն անիւր, ամեատիմ իրական ուժիմ եւ քմահաճոյքիմ մէջ»:

Տատայիզմը հիմնովին կը սարբերէ դրական եւ զեզարուեստական նախորդ շարժումներէն ա՛յն իմաստով, որ անիկա կը հետապնդէր քանդումի նպատակ մը, մինչ միւսները շինիչ էին: Տատա խորքին մէջ կը ներշնչուէր անիլիստական շարժումէն: «Տատա, — կ'ըսէ Անտրէ Ժիտ, — քանդումի ձեռնարկ մըն է»:

Անոր յայտնի անդամներէն բանաստեղծ Ռիպրոն Տըսեն կը յայտարարէր. «Ի՞նչ իսել է զեզեցիկ, ի՞նչ ըսել է տգեղ: Ի՞նչ ըսել է մեծ, գորաւոր, տկար: Ո՞վ է այսիմը կամ այնիմը: Ո՞վ եմ ես: Ձեմ գիտեր, չեմ գիտեր, չեմ գիտեր»:

Նոյն այդ շրջանին, Փարիզի մէջ կը գործէր ուրիշ դրական խմբակ մը՝ բողկացած Պրըթոնէ, Արակոնէ, Էլիւարէ, Մուսոյէ եւ ուրիշներէ, որոնք կը հետապնդէին զրեթէ տատայիզմի նպատակները, մէկ սարբերութեամբ միայն. քանզեւ տիրող մտածելակերպը եւ զրելակերպը, բայց անոր տեղ ստեղծել նորը, արդիականը: Ատեն մը, այս երկու խմբակները միացուցին իրենց ճիզերը եւ հրատարակը լեցուցին իրենց ազմուկով:

1920ին, տատայիսթ երեկոյթի մը ընթացքին, Լուի Արակոն բեմ բարձրանալով կը պոռար.

«Ո՛չ նկարիչ, ո՛չ գրագէտ, ո՛չ երաժիշտ: Ո՛չ կրօնք, ո՛չ հանրապետատակամ, ո՛չ կայսերապաշտ, ո՛չ ընկերվարական, ո՛չ անիլիստական, ո՛չ համալսարան, ո՛չ քաղաքագէտ, ո՛չ պրօլետար, ո՛չ պուրժուա: Ո՛չ քանակ, ո՛չ ռատիկալաութիւն, ո՛չ հայրենիք: Վերջապէս կշտացա՞մ այս թուր սպաշուքիւններէն. այլեւս ոչի՛մն, ոչի՛նչ, եւ ոչի՛նչ»:

1923ին, սակայն, երբ կը ներկայացուէր Յարայի մէկ փեհաք, Պրըթոնի կողմնակիցները կը խուժեն արահէն ներս ու կը յարձակին ուղղափառ տատայիսթներու վրայ. տակնուվրայ կ'ընեն բեմը, աթոռ կը քաշեն իրարու դէմ: Վերաւորներ կ'իյնան երկու կողմէն ալ:

Փանի մը ամիս ետք, Պրըթոն իր ընկերներուն կը կարգայ հետեւեալ յորդորը.

«Լեփցե՛ք ամե՛ն ինչ: Լեփցե՛ք տատայիզմը: Լեփցե՛ք ձեր կիմը: Լեփցե՛ք ձեր համաճուշիմ: Ցանցե՛ք ձեր գաւակները փողոցներու անկիւնը: Լեփցե՛ք որքը շուքիմ համար: Մեկնեցե՛ք մարքաներէն»:

Հինգ տարուան գոյութենէ մը ետք, տատայիզմը հողին աւանդեց, տեղի տալով ուռնացող ու բարգաւաճող գերիբապաշտ շարժումին առջեւ:

Գերիբապաշտութիւնը իբր դպրոց կը տեսէ 21 տարի, այսինքն՝ 1918էն 1939: Գերիբապաշտութիւն բառին գիւտարարը հռչակաւոր բանաստեղծ Կիլոմ Ափրիկեէն է, որուն 1917ին զբաժնաճանկներէն մէկուն մէջ կը կար-

գանձ հետեւեալ նախադասութիւնք. «Ամէն բան լաւ մը թնկել է ետք, կը կարծեմ իսկապէս, թէ Յայրենիքի է որդեգրել գերբնապաշտութիւն բարը, քան գերբնապաշտութիւնք: Գերբնապաշտութիւն բարը ցարդ գոյութիւն չունի բարարաններու մէջ...»:

Անորէն Պրըթոն՝ այս շարժման քրմայեւոր, հետեւեալ ձեռով կը սահմանէ զայն.

«Գերբնապաշտութիւն կը նշանակէ ինքնաբերական իմքնագործութիւն, որուն միջոցով կ'առաջադրենք յայտնի խօսքով, գիրով կամ որեւէ ուրիշ ձեւով մտքին իսկական գործելակերպը: Կը նշանակէ նաեւ մտքի թելադրամբ՝ առանց բանականութեան հակակշռին եւ առանց որեւէ գեղագիտական կամ բարոյական նկատումի»:

Գերբնապաշտութիւնը գոյութիւն ունէր այդ թուականէն շատ առաջ, նոյնիսկ Միջին դարու կարգ մը բանաստեղծներու գործերուն մէջ: Սակայն այդ երանգը աւելի ուժով շեշտուած էր ժ.Լ. եւ Ժ.Թ. դարու կարգ մը օտար կամ ֆրանսացի բանաստեղծներու էջերուն մէջ, որոնք նկատուած են այդ շարժումին նախահայրերը: Անոնց շարքին յիշենք անգլիացի Ուիլիամ Պլէյքը, դերմանացի Նովալիստը եւ ֆրանսացի Ներվալը, Պատլէրը, Ռեմպոն եւ Ափոլինէրը:

Գերբնապաշտութիւնը սկզբունքով ո՛չ դրական, ո՛չ դեղորսուեստական եւ ո՛չ ալ դեղագիտական նկատումներ ունէր, նոյնիսկ ինքզինքը որակած էր հակադրական եւ հակադեղորսուեստական: Սակայն, դէպքերու բերմամբ եւ հիմնադրներուն կամքէն անկախ, անիկա դարձաւ նոր բանաստեղծութիւն մը, նոր գրականութիւն մը, նոր արուեստ մը, նոր մտածելակերպ մը եւ նոր ապրելակերպ մը, մա՛նականը՝ երբ Համաշխարհային Առաջին պատերազմէն ետք, մարտնչող երիտասարդութիւնը պահանջք կը զգար նոր արտայայտութեան մը, որ պատկերէր իր խուճապը, եւ այն գծինը, որուն մէջ ապրած էր տարիներով:

Գերբնապաշտութեան տեսութիւնները եւ հաւատոյ հանգանակը կը դանուին մասնաւորաբար Անորէն Պրըթոնի հրատարակած Առաջին (1924) եւ Երկրորդ (1929) մանիֆեստներուն մէջ:

Այս ծայրայեղ յայտարարութիւնները ջիղը կը գրգռեն ժամանակակից բոլոր անուանի գրողներուն եւ արուեստագէտներուն, որոնք բուն պայքար կը բանան այդ յեղաշրջող եւ անիշխանական շարժման դէմ, մա՛նականը՝ որ անիկա սկսած էր խնամիական կապեր մշակել համայնապարտութեան հետ:

Պրըթոն ասին մը կը մոռնայ բանաստեղծ իր հին կուռքերը եւ նորեր կը գետեղէ պատուանդանին վրայ: Այդ նորերու շարքին կայ բանաստեղծ մը՝ Լօթրէամոն, Հոդգեան մը՝ Ֆրէնչա, եւ համայնապարտ պարագլուխ մը՝ Թրոցքի: Հակառակ ասոր, Պրըթոն կը մերժէ գերբնապաշտութիւնը մուշկ ոյրեւէ քաղաքական կազմակերպութեան մէջ: Վէճեր տեղի կ'ունենան, որոնցմէ կը ծնի պառակտում: Վերջապէս, կարգ մը գերբնապաշտ գրողներ կ'անդամակցին համայնապարտ կուսակցութեան եւ կը խղեն կապերը իրենց նախին ընկերներէն: Թէեւ համայնապարտ թերթերը լաւ աչքով չեն դիտեր այս անշահախնդիր գրականութիւնը եւ կը մերժեն տեղ առաջ գերբնապաշտ գրութիւններուն իրենց էջերուն մէջ:

1930ին, Արակոն եւ Սատուլ կը մեկնին Խորհրդային Միութիւն՝ մասնակցելու համար Գրողներու միջազգային համագումարին, այն համագումարին, որ Հատաղովը կ'ըլլայ մգտումաւոր գրականութեան մը: Պրըթոն

սակայն կը մնայ իր դիրքին վրայ, Համակիր Համայնավարութեան սկզբունքային գաղափարներուն, բայց անջատ կուսակցութեան գործունէութիւններէն: 1933ին, խզումը կ'ըլլայ կատարեալ:

Գրական եւ քաղաքական գործունէութեան առնթեր՝ գերիբազաւտութիւնը կը յեղաշրջէ նաեւ նկարչութիւնը, քանդակագործութիւնը, երաժշտութիւնը, Քատրոնը եւ շարժապատկերը:

Սակայն ինչպէս ըսինք, իր ամէնէն վաւերական նուանումները կը կատարէ գրականութեան եւ, ժաննաորոտար, բանաստեղծութեան ժաղերուն մէջ:

Թէեւ իր սկզբնական շրջանին գերիբազաւտութիւնը կը միտէր կեանքի Եր յղացում մը ըլլալ, պէտք է ըսել սակայն, որ այդ ուղղութեամբ կատարուած ճիգերը շտուի իրենցմէ սպասուած արդիւնքները:

Գերիբազաւտները կը ծառայէն յոռետես փիլիսոփայութեան, որուն մղիչ ուժը ախտագին յուսահատութիւնն է: Կը քարոզեն անձնասպանութիւնը, որովհետեւ տիեզերքի մէջ ամէն ինչ խարէութիւն է, եւ երջանկութիւն չի կրնար գոյութիւն ունենալ: Ո՛չ ժողովրդ, ո՛չ աշխարհ, եւ ո՛չ ալ Աստուած կրնան փարատել մեր մէջ կուտակուած սեւ ամպերը, եւ տալնապի պահերուն իրենք իրենց Հայրը կու տան. ինչո՞ւ ապրիլ եւ արտայայտուիլ: Սակայն աւելի խաղաղ պահերու, անոնք կը գործեն ու կ'արտայայտուին: Կը փնտրեն դուռ մը՝ խուսափելու Համար մղձաւանջի անողոք բանտէն: Թէեւ գիտէին, որ արքայութեան ասնող այդ դուռը գոյութիւն չունէր իրենց Համար, սակայն զայն գտնելու յարատեւ իղձը կը դառնար իրենց գործունէութեան անոնցքը:

Թեմաներու գետնի վրայ, գերիբազաւտները կ'անտեսէին արտաքին աշխարհը եւ կը կեդրոնանային իրենց ներաշխարհին մէջ, որ կը Հանդիսանայ իրաքանչիւր անհատի անբռնարարելի միջնարեւոյ:

Բանաստեղծութեան միջոցով ներաշխարհի Հետախուզութիւնը կը Հանդիսանայ գերիբազաւտութեան գերագոյն նուանումը: Այդ ներաշխարհը կը գործէ մտքի ու բանականութեան Հակակշռէն անջատ, ազատօրէն եւ անհեթեթօրէն, ու բանաստեղծին պաշտօնն է դառնալ ինքնագործ մեքենայ մը եւ գրի առնել այդ տարօրինակ աշխարհին երեւոյթները: Այս սկզբունքէն մեկնելով՝ գերիբազաւտ գլուխգործոց մը պիտի ըլլայ խելագարի մը ներաշխարհին արտայայտութիւնը ենթակային կողմէ:

Եթէ ներաշխարհը կը դառնուի միօրինակ վիճակի մը մէջ, կարելի է զայն գրգռել երազներով, կամ թմբկախօսիչներով եւ անմիջապէս գրի առնել անոր մէջ ծնող արտասովոր եւ անհեթեթ պատկերները:

Ուրեմն գրելու ո՛չ մէկ օրէնք, քերթողութեան ո՛չ մէկ կանոն, Հասկըցուելու ո՛չ մէկ ճիգ: Առանց կաշկանդումի, եւ մեքենայօրէն, թուղթին յանձնել այն բառերն ու նախադասութիւնները, որ կը ծնին ներաշխարհի ազդեցութեան տակ, եւ ընթերցողին Հաղորդելու ուղեղին մէջ ծնունդ կոչու անտառին տարօրինակութիւնները եւ կոխարդանքները: Ա՛հա այս է գրելու արուեստին միակ օրէնքը, որ թելադրուած է գերիբազաւտ գրողներուն:

Հարկաւ ճիշդ չունեցողներուն Համար ո՛չ օրէնք, ո՛չ կանոն եւ ո՛չ ազատութիւն կրնան գլուխգործոցներ ստեղծել. այնպէս որ՝ նոյնիսկ անվերլուծելի գրութիւններուն մէջ իսկ երեւան կու գան իբրեւ եւ վաւերական բանաստեղծները, որոնք առանց գերիբազաւտութեան ալ, յաջողապէս պիտի կատարէին իրենց առաքելութիւնը:

Անտրէ Պրըթոն հետեւեալ առդերով կը սահմանէ իր զլխաւորած շարժումին ներգործութիւնը-

«Գերիրապաշտութիւնը հեղեղի մը պէս տարածուեցաւ ա՛յ միայն արւեստի մէջ, այլևս կեանքի մէջ: Անիկա մարդկային գիտակցութիւնը արթնցոյց մոր կացութիւններու առջեւ, քանիցս պատեր, որոնց նոյն կը կարծուէր, թէ անկապելի է մոր բաց մը տեսնել: Ան վնասեցաւ քայլ մը անտեղ տղաւ գգայնութեամ եւ միութիւն դրաւ անհատի աշխարհիմ աւ ձերաշխարհիմ մէջ»:

Գերիրապաշտութիւնը կազմաւորած է մեր ժամանակներու մեծագոյն բանաստեղծները եւ արուեստագէտները՝ Արտակոն, Պրըթոն, Էլլիւար, Փրեմէր, Մասոն, Թանկի, Տալի, եւ այլն:

Իր կազմաւորումէն քանի մը աստի ետք, անիկա հեղեղի մը պէս կը տարածուէր աշխարհի բոլոր երկիրներուն վրայ, ինչպէս ինչպէս Ատլանտեան ուղիներու երկրէն եւ Աֆրիկէն մինչեւ Աւստրալիա, գառնալով ընդհանրական ու միջազգային մասնակցութեայ եւ ներշնչման եղանակ մը:

Եթէ զանց առնենք սկզբնական շրջանին իր պոստալ շարժանցութիւնները, որոնց նպատակն էր հանրութեան ուշադրութիւնը գրաւել իրենց վրայ, պահանջութեան եւ արուեստի բերած իր նպատակը անպայման որ չարի ու սահման չունի: Այդ նպատակներէն յիշենք ամէնէն կարեւորները-

- Իւրայատուկ սոց,
- Փայլատակազ պատկերներ,
- Ներշնչման մոր ազդեցութիւնը,

առանց որոնց ներկայ բանաստեղծութիւնը պիտի չըլլար այն՝ ինչ որ է այսօր:

Ուրեմն, այն բոլոր երեւոյթները, զորս թուեցինք նախորդ էջերուն մէջ՝ քաղաքական վերիվայրումներ, ընկերային յեղաշրջումներ, գիտութեան նուաճումներ, բոլորովին նոր փիլիսոփայութիւն, մարդկային ճակատագրի անհեթեթութեան զաղափար, բարբերու ազատագրում, եւ այլն, այս բոլորը կը գտնենք գերիրապաշտութեան ծնունդ տուած գրականութեան մէջ, որ թէեւ իր խոստովանող տարիները ապրեցաւ միջպատերազմեան շրջանին, բայց դարձաւ հսկայ ուղիներու մը, որուն մէջ մկրտուեցան աշխարհի բոլոր բանաստեղծները եւ արուեստագէտները:

Այս տուեալներուն լոյսին տակ է, որ պիտի կարենանք աւելի լաւ ըմբռնել քաներորդ դարու գեղարուեստը եւ, մասնաւորաբար, Փրամստակամ մամուլակալից բանաստեղծութիւնը:

Ներշնչումի եւ արտադրութեան տեսանկիւնէն դիտուած՝ Փրանսական ժամանակակից բանաստեղծութիւնը կարելի է բաժնել երեք շրջաններու:

1.— Պատերազմի եւ դիմադրութեան շրջան

Աւանդական բանաստեղծութեան կողքին, ծնունդ կ'առնէ խորհրդաւոր եւ անմիջական ստեղծագործութիւն մը, որ գործն է ընդդէմադիր գրադէստներու: Այս բանաստեղծութիւնը վառ է հայրենասիրական ոգիով եւ պայքարի ու զոհողութեան թեմաներով: Նոյնիսկ համայնալար կամ ձախակողմեան հակում ունեցող գրադէստները մէկտէ կը դնեն իրենց միջազգայնական եւ համամարդկային քարոզչութիւնները եւ կը դառնան անկեղծ ու անկաշտ հայրենասէրներ: Նոյնը կ'ընեն գերիրապաշտները եւ նորարարութեան շարժումները, որոնք հրաժարեցան իրենց գեղարուեստական զար-

տուղիութիւններէն, որպէսզի իրենց խօսքը դառնայ աւելի հասկնալի եւ աւելի համայնական:

2.— Յետ պատերազմեան շրջան (1945-1955)

Քանաստեղծութիւնը կամաց-կամաց իր վրայէն կը նեակ տառապանքի ու մահուան սեւ պատմուճանը: Գերբնապաշտութիւնը կրկին կ'ողողէ ներշնչութեամբ, բայց տիրական անունները դեռ կը պատկանին նախապատեարդման սերունդին կամ խաւարի քամակին:

3.— Նոր շրջան (1955էն հետ)

Միևուրտը խաղաղած է բոլորովին եւ քանաստեղծութիւնը կը հետապնդէ իր յափտեանական առաջելութիւնը եւ կը յառաջանայ զանազան ուղղութիւններով: Դպրոցներ չկան այլևս, այլ կան հասանքներ միայն, որոնք կը բնորոշուին արուեստի նոյն մտահոգութիւններով եւ ներշնչումի նոյն աղբիւրներով:

Այդ երեք շրջանները աւելի մանրամասնօրէն ուսումնասիրելէ առաջ, փորձենք քանի մը խօսք քննել այդ խորհրդաւոր, գեղարդոյն եւ յափտեանական արուեստին մասին, որ կը կոչուի քանաստեղծութիւն:

Դարերէ ի վեր քանաստեղծները նկատուած են մարդկային ընկերութեան մենաշնորհեալ դասակարգի մը անդամները: Յոյն մեծ փիլիսոփայ Պլատոնի համար ռեալիտետները աստուածներու քարզմաններն են: Բանաստեղծը քննաւոր, եթերային եւ նուիրակն էակ մըն է, որ կը ստեղծագործէ, երբ զգայ ներշնչումը, երբ ինքզինքը կորսնցնէ եւ ձերբազատուի քանակաւնութեան տիրապետութենէն:

Նոյնիսկ ամէնէն դասական եւ տրամարանող քննադատները շեշտը դրած են քանաստեղծին իւրայատուկ եւ արտասովոր խառնուածքին եւ ներշնչումին անհրաժեշտութեան վրայ:

Քանաստեղծութիւնը արտայայտելու ամէնէն հին եւ ամէնէն աւանդական միջոցը եղած է զերթուածը, այսինքն՝ կարճ կամ երկար ույն դրութիւնը, որ բաղկացած է շարուած եւ յանդաւոր տողերէ: Եւ բոլոր ազգերու գրական առաջին կոթողները եթէ ո՛չ քանաստեղծական, գոնէ՛ տաղաչափեալ գրութիւններ են, Աստուածաշունչի համարներէն սկսած մինչեւ Հոմերոսի երգերը եւ շատ մը ուրիշ ժողովուրդներու դիցարաններական կամ առասպելական պոեմները եւ էպոսները: Արձակը գրական լեզու նկատուեցաւ շատ ուշ: Հին օրերուն, անիկա կը գործածուէր նամակներ գրելու եւ դիւանային արձանագրութիւններ կատարելու համար:

Այս երեւոյթը ունէր գործնական պատճառներ: Այդ օրերուն, երբ գիր ու սպարան չկար, դրականութիւնը խօսքով կ'արտայայտուէր եւ տաղաչափութիւնը կը գերացնէր յիշողութեան պաշտօնը: Հոմերոսի գործերը, օրինակի համար, գրութեան անցած են քանաստեղծին մահէն դարեր ետք, եւ անոր ստեղծագործութիւնները սերունդէ սերունդ փոխանցուեցան ասուածքողներու կողմէ, որոնք զոչ գիտէին անոր հազարաւոր տողերը:

Յետոյ քանաստեղծութիւնը դարձաւ մտական տարազ, կախարդական լեզու, դարձաւ երգ ու վերջապէս արտայայտութեան ամէնէն կատարեալ գործիքը:

Երբ արձակը կազմաւորուեցաւ ու դարձաւ գեղարուեստական լեզու,

բանաստեղծութիւնը անոր գէժ շղթայազերծեց յուսահատական պայքար մը՝ շիջնալու համար անոր տիրապետութեան աակ: Եւ որովհետեւ արձակին գլխաւոր առաւելութիւնը անոր ալ տմարտական բնոյթին մէջ էր, բանաստեղծութիւնը դարձաւ բանակահոսութեան սխերիմ թշնամին: Այդ պայքարը սկսաւ շատ կանուխէն, բայց իր գագաթնակէտին հասաւ վիպապաշտներու գրողին ծնունդով: Եւ այսպէս, բանակահոսութիւնը, որ տիրապետող յատկութիւնն էր դասական գարոցին համար, սկսաւ նահանջել վիպապաշտներու եւ խորհրդապաշտներու գրողներուն առջեւ, մինչեւ որ գերիրապաշտները զայն զահրէնկէց ըրին եւ սեղը բազմեցուցին սանձարձակ երեւակայութիւնը:

Իււաբանչիւր դար սենցած է իւրայատուկ ըմբռնում մը բանաստեղծութեան մասին: Հին ժամանակներուն, անկէս եղած է դիտութեան միջոց մը, տեսանելի եւ անտեսանելի աշխարհներու զոյանի դրոշներուն բանալին: Եւ մեր դարը կարծէք որդեգրած է այդ նոյն տեսակէտը, ինչպէս կը հաստատէ ժան Ռուջըօ՝ իր հետեւեալ առդերուն մէջ:

«Բանաստեղծութիւնը գեղարուեստական որեւէ ստեղծագործութեան ոչ ինքնուրուիքն է եւ ոչ ալ գործիքը, այլ մտղկային վտանգաւոր պաշտօնի մը իրագործումը: մտղկային մտքի ամենէն նուրբ գործունէութիւնը, անարտայայտելիին արտայայտութիւնը, ներաշխարհին ամենէն մուք ծալքերուն յուսարանութիւնը՝ բառերու եւ նախադասութիւններու միջոցով:»

Մէկ խօսքով՝ մարդու ուղեղին, հոգիին ու ներաշխարհին ալքիմիադիտութիւնը:

Չենք դիտել ե՞րբ եւ ո՞ւր առաջին անգամ երզը բխեցաւ առաջին բանաստեղծին հոգիէն: Ե՞րբ զգայուն ու արատաւոր սրտի մը յուզումները եւ բարբառումները վերածուեցան մեղեդիի: Ի՞նչն էր արդեօք ներշնչումի առաջին աղբիւրը: սէ՞րը թէ՛ բնութեան գեղեցկութիւնը, հիացումը թէ՛ սարսուղի, որ ծնունդ տուաւ առաջին երգին:

Հազարաւոր անտուն եւ անձանթ բանաստեղծներ հող դարձած են իրենց գոգանիքներուն հետ: Անոնց երզը լրած է հազարամեակներէ ի վեր, սակայն անոնց հոգիին հուրը արթնցած է ուրիշ հոգիներու մէջ, որոնք յաճախ անդիտակցաբար կը կրկնեն անոնց երգերը:

Բանաստեղծութիւնը ծնած է մարդ արարածին իմացականութեան հետ: Բանաստեղծները կոչին, երբ դիր ու գրականութիւն չկար:

Մինչեւ ԺԹ. դար, բանաստեղծութիւնը չփոթուեցաւ առդայափակած արուեստին հետ: Բանաստեղծը կը բնագոյտուէր, երբ կ'անտեսէր դարերու ընթացքին բնորոշում խիստ օրէնքները: Սակայն գտնուեցան մարդիկ, որոնք բնորոշում հանդերձ այդ օրէնքներուն կարեւորութիւնը, շնչաւ գրին ներշնչումի անհրաժեշտութեան գրայ: Հասկցուցին, որ մէկը կրնար լաւ քերթող ըլլալ, բայց ոչ իրաւ բանաստեղծ: Գերթուածը մարմինն էր միայն, իսկ բանաստեղծութիւնը՝ հոգին:

Բանաստեղծութեան էութիւնը բացատրելու առաջին փորձը ըրաւ Հայր Նիքոլայ Ռաֆէն, ՄԵԳ դարու կէսերուն: Անոր անունը գրեթէ չի յիշուիր զբնականութեան պատմութիւններուն մէջ, որովհետեւ ան զանաւ մը կը ներկայացուէր, Գորնէյներու, Մոլիէրներու, Ռասիններու եւ տասնեակ մը ուրիշ հսկաներու բազմաամօք: Բայց այս համեստ մարդը ունէր սուր հոստաութիւն եւ հասկցած էր բանաստեղծութեան անխթականութիւնը: Իր հետեւեալ աղբիւրը կրնանք նկատել իբրաւ բանաստեղծութիւնը սահմանելու առաջին փորձը:

«Բանաստեղծութեան մէջ կան նաեւ անտեսելի եւ անբացատրելի բաներ:

Այդ բաները կը կազմեն ամոր խորհուրդը: Կսեռններ չկան բացառելու համար այդ գազտմի շնորհները, այդ աննշմարելի հմայքները, այն բոլոր պահած գեղեցկութիւնները, որոնք կը յուզեն սիրտը»:

Այս սահմանումը կընտնէ վերագրել ժամանակակից ոեւէ քննադատի կամ բանաստեղծի: Հայր Ռաֆէնի բացատրութիւնը կընտնէ նկատել լաւագոյններէն մէկը:

ԺՔ. դարու կէսերուն, բոլոր դարերու մեծագոյն բանաստեղծներէն մէկը՝ Եսրը Պատլէր, կու տար հետեւեալ սահմանումը.

«Եթէ ազնիւ խորանայ մեր ներաշխարհին մէջ, հարցաքննել մեր հագիւն, վերակոչել մեր խանդավառ յիշատակները, պիտի նկատենք, որ բանաստեղծութեան նպատակը իր էութիւնն իսկ է. բանաստեղծութիւնը չի կրնար ուրիշ նպատակ ունենալ, եւ ոչ մէկ պոեմ ա՛յնքան մեծ, ա՛յնքան վեհ, ա՛յնքան արժանի պիտի չըլլար պոեմ կոչուելու, եթէ գրուած չըլլար միայն պոեմ մը գրելու համոյ՛քին համար»:

Բացատրութիւնները եւ սահմանումները կը բազմանան քաններորդ դարուն հետ՝ Զուռ բանաստեղծութեան տեսարաններէն մէկը, Արքա Պրեմոն, ընդունելով Հանդերձ Հայր Ռաֆէնի եւ Պատլէրի սահմանումները՝ կ'երթայ աւելի հեռուները, երբ կ'ըսէ.

«Զուտ բանաստեղծութիւնը լուսիւն է, ինչպէս միստիկան»:

Դարուս լաւագոյն քննադատներէն մէկը, Քիէրրի Մօնիէ, հետեւեալ տողերուն մէջ կու տայ վերջնական սահմանումը.

«Բանաստեղծը բառեր կը գործածէ ո՛չ թէ ամոնց իմաստին համար, այլ այդ իմաստն անդին՝ աշխարհին հետ տնոնց ունեցած կախարդական խաւմապատասխանութեան համար. զոր պաշտօն ունի նուաճելու: Բանաստեղծներու գրիչին տակ բառերու ներգործութիւնը տիեզերքին վրայ՝ սրամաքանական չէ միայն, այլ մոգական»:

Եթէ աչքէ անցընենք ուրիշ մէջբերումներ ալ, կը յանգինք այն եզրակացութեան, որ իւրաքանչիւր անձ իր հասկցած մեւով կը բացատրէ բանաստեղծութեան էութիւնը, որովհետեւ զիրաքանչիւր բանաստեղծ բացառութիւն մըն է, զոր ոչ մէկ կանոն կը հաստատէ» (Քիէրրի Մօնիէ):

Մեկնելով Հանդերձ նոյն սկզբունքներէն, այդ սահմանումները իրարմէ կը տարբերին ըստ հետապնդուած նպատակին եւ յաճախ անուրանալի հակասութիւն մը կը նշմարուի նոյն բանաստեղծին գործին եւ տեսութիւններուն մէջ: Ա՛յնքան՝ որ չենք վարանիր իրաւունք տալ Ժան Բոքթոյի հետեւեալ սրամիտ խօսքերուն, թէ՛

«Այնքան շքաւար է բանաստեղծի մը համար խօսիլ բանաստեղծութեան մասին, որքան բռնի մը՝ ծաղկաբախտութեան մասին»:

Եթէ իրարու հետ բաղդատենք այդ սահմանումները, կը նկատենք, որ ամէնէն շատ գործածուած բառերն են՝ «քելադրութիւն, հաղորդակցութիւն, համապատասխանութիւն», մինչդեռ իրենց ստեղծագործութիւնները կ'անցնին ըմբռնելիութեան սահմանները եւ կը դառնան առեղծուածներ, չըսելու համար հանելուկներ:

Պան ըսողներ, որ բանաստեղծութիւնը պէտք է ըլլայ բոլորին համար, իսկ ուրիշներ կը պնդեն, որ բանաստեղծութիւնը անսովի ու կախարդուած բերդ մըն է, որմէ ներս մուտք գործելու համար պէտք է անդեակ ըլլալ զաղտնի ճամբաներու, մեռելէն մէջ ունենալ մոգական լապտեր մը, այսինքն՝ ըլլալ գիտակցութեան եւ դանդաղ յատկութիւններու տէր: Մէկ խօս-

քով՝ անոնք ընթերցողը կը նկատեն զազանի սասիկան մը՝ օժտուած բացառիկ միրքերով եւ հոտառութեամբ:

Փռլ էլիւար կը յայտարարէ:

Եժմանակը եկած է, երբ բոլոր բանաստեղծները իրաւումք եւ պարտաւորութիւն ունին յայտարարելու, որ իրենք խորացուցաւ միտքուած են միւս մարդոց կեանքին մէջ, համայնական կեանքին մէջ:

էլիւարի այս հաստատումին կը ձայնակցի Սէն-Ճան Փերս:

Ե՛ւ այսպէս, հակառակ իր կամքին, բանաստեղծը կապուած է պատմական դէպքերուն: Իր ժամանակաշրջանի ազդերգութիւնը չի կրնար անտարբեր թողուլ գինք: Թող մեզի յատկօրէն արտայայտէ այս արտակարգ ժամանակներու մէջ ապրելու հանոյքը:

Բոլորովին տարբեր է Փիէա Ռոմբերտի կարծիքը, որ հաւաք է փոքուկրեայ աշտարակը շատագոյններու կարծիքին:

Բանաստեղծութիւնը, — կը գրէ Փիէա Ռոմբերտի, — բացարձակ սեփականութիւնն է բանաստեղծներուն, որոնք կը գրեն իրենք իրենց համար եւ կարգ մը մարդոց համար, որոնք օժտուած են մտանայատուկ զգայարմեաներով, որոնցմէ գարիկ են ուրիշներ:

Բանաստեղծը երբ կը գրէ՝ կը մտածագուի միայն ինքնիրմով: Ան չի խորհիր հանրութեան կամ ռեւի հաւանական ընթերցողի մասին: Ասկէ կը ծնի իր գրութիւններուն երեսփական մթութիւնը:

Ան գոց սեմեակ մըն է, որ մուտք չի կրնար գործել ռեւի պատեհական անցարդ: Պէտք է տեսնիլ ու շնորհալ վտակ լամբարը՝ զուարթ բախելի առագոյն:

Ըստ նորագոյն ըմբռումին, բանաստեղծութիւնը գրական սեռ մը չէ միայն, ստանաւոր չէ, յանգ չէ, բռնբռու շարահիւսութիւն չէ, հակառակ անոր որ տանը արտայայտութեան իր լուսագոյն միջոցները կը հանգրիսանան:

Կաղապարը տարբեր է կաղապարումէն, պարունակը՝ պարունակաւեային: Կաղապարին ընտրութիւնը կախում ունի բանաստեղծին խառնուածքէն եւ նախաիրութիւններէն եւ աչ թէ գրականագէտներու պարտագրած օրէնքներէն: Կարեւորը այդ կաղապարը յարմարցնելն է ներշնչումին: Թէ՛ դուրս-գործողներ արտադրուած են ուսանողական կաղապարներով երկու տասնեակ դարերէ ի վեր, առիկա անհերքելի ճշմարտութիւն մըն է, թէ՛ գրութիւն-գործողներ արտադրուած են ոչ-ուսանողական կաղապարներով, այդ ալ ուրիշ ճշմարտութիւն մըն է:

Առաջին ակնարկով դիւրին է բանաստեղծական կտոր մը զանազանել ոչ-բանաստեղծական գրութեանէ մը, միայն նկատի ունենալով կաղապարը:

Եթէ արդիական բանաստեղծութիւնը կը խուսափի չափուած ստանաւորներէն, յանգերէն կամ կաղապարուած տուններէն, սակայն դեռ կը կիրարկէ անցեալէն եկող շատ մը ձևեր:

Ընդհանուր առմամբ, բանաստեղծական կտոր մը կարճ գրութիւն մըն է, որուն տողերը կը շարունակուին գրուելի դիտարկումով: Հակառակ պարագային՝ տողերը ունին որոշ երկարութիւն մը, որ կանգ կ'առնէ էջին սահմանէն առաջ: Որոշ թիւով տողերէ ետք կը ձգուին բաց միջոցներ, զանոնք համախմբելու համար կանխատեսուած ծրագրի մը համաձայն: Այս համախմբումները կը յիշեցնեն ասանդական տունները: Երբեմն յանգեր կը զետեղուին տողերուն ծայրը կամ տողերուն մէջ: Այս բոլորը ցոյց կու տան, որ բանաստեղծը կ'ուզէ իր գրութիւնը զանազանել արձակի միօրինակ երեսոյթէն,

ինչպէս կ'ընէին անցեալի բանաստեղծները, երբ կը հետեւէին քերթողութեան եւ տաղաչափութեան խիստ օրէնքներուն :

Ուրեմն՝ բանաստեղծութիւնը ճարդկային ուղեղին անխիտանական մէկ գործողութիւնը չէ, ոչ ալ մկաններու մեքենական մէկ արտադրութիւնը, այլ կանխամտածուած արարողութիւն մը : Նոյնիսկ երբ գերբնականները գոյժը կը հիւսէին ինքնագործ գրեթեմիս, կամայ թէ ակամայ կը հետեւէին մտային որոշ յատկութիւններու եւ, ո՞վ որ կ'ըսէ մտային, կ'ըսէ բանականութիւն, եւ ո՞վ որ կ'ըսէ բանականութիւն, կ'ըսէ արամբանութիւն եւ օրէնք :

Սակայն ինչպէ՞ս սահմանել այդ անսահմանիկն . ի՞նչ տարազ գործածել, որպէսզի ոեւէ ընթերցող կարենայ վեր հանել գրութեան մը պարունակած բանաստեղծութիւնը : Ահա հոս է մեծագոյն խոչընդոտը եւ անպատեհակութիւնը : Ժամանակին բանաստեղծական կտոր մը բանաստեղծական էր բոլորին համար, այսօր պարագան նոյնը չէ եւ կարծիքները նոյնաման չեն, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը բանաստեղծութիւնը կը հասկնայ իր գիտացած ձեւով :

Բանաստեղծութիւնը կը նմանի արեւին, աւելի ճիշդը՝ թռչող սկաւառակի մը, որ կը յայտնուի միայն փոքրաթիւ ընտրեալներու, եւ այդ ընտրեալներն ալ զայն կը տեսնեն իրենց խոռոնուածքին եւ անհատականութեան համաձայն :

Բանաստեղծը տեսնելի աշխարհի նիւթական ձեւերէն անդին կ'անցնի ու կը պեղէ անտեսանելիին խորհրդաւոր անըրպետը : Ան գեղեցիկ տեսարանի մը յափտակութիւնն է, անուշ երգի մը զիւթանքը, փոթորիկի մը օտարօտութիւնը, շունթի մը լոյսը : Ան ազուր նայուածքի մը մեղեդին է, ներկային յաւերժացումը, անիրականին փնտրուածքը : Ան բոլոր արուեստները կենդանացնող ելակարգական հոսանքն է :

Եւ դեռ շատերուն համար ան գերմարդկային կոշ մըն է՝ անձանօթին ուղղուած, բառերու կախարդանք մը, կամ ալքիմիագիտութիւն մը, որ ցնխը կը վերածէ սուկիի : Այս սահմանումները կը թողունք իւրաքանչիւր բանաստեղծի խանութեան եւ աշխարհը գիտելու եւ ուսումնասիրելու եղանակին :

Այսօր բանաստեղծութիւնը տիեզերքի եւ ճարդկային հոգիի դաշանիքներէն ներս թափանցելու շաւղոյն միջոցը կը նկատուի : Ներշնչուած բանաստեղծ մը գիտութեան անդաստանին մէջ շատ աւելի հետունները կ'երթայ, քան ոեւէ գիտնական . ան թիւերու փոխարարութեան աւելի տեղեակ է, քան ոեւէ մաթեմատիկոս . ան հոգիներու լարիւրինթոսին մէջ աւելի գիւրաւ կը շրջի, քան ոեւէ հոգեբան :

Ան մութին մէջ լոյս չի փնտրեր միայն . կը փնտռէ լոյսին մէջ կորուսուած խաւարը : Ան գիտէ, թէ տիեզերքը իրթին առեղծուած մըն է, որուն առջեւ կը խորտակուին ճարդկային ամէնէն օժտուած միտքերը : Եւ ո՞վ կրնայ գտնել այդ առեղծուածին բանալին, եթէ ոչ ինքը՝ յաւիտենական Ոգիպարը . . .

(Շար. 2)

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ



Ա. ԿՌԱՆԵԱՆ

Բ. ԿՌԱՆԵԱՆ

Ա Լ Ի Ս Ի Ա

Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն



Ուիլ Տիրանդ իր «Քաղաքակրթու-
թեան Պատմութիւնը» գործին մէջ կ'ընէ
հետեւեալ յատկանշական բնութագրու-
մը. «Իսասական քաղաքն մարդուն պայ-
քարն էր աստուածներուն դէմ: Ելիզա-
պէթեան քաղաքն մարդուն պայքարն
էր մարդուն դէմ: Արդի քաղաքն մար-
դուն պայքարն է իր դէմ»: Արդի գրա-
կանութիւնը, Ինտրայի ներաշխարհին
մէջ, արուեստագէտին պայքարն է իր
բնազդներուն, իր բազմանբնուն, Ե-
րզան, տեսիլներուն ի խնդիր:

Ինծի կը թուի, որ արդի արուեստի
վրայ ամէնէն մեծ ազդեցութիւնը գոր-
ծած է Յրէօյտ: Ան է, որ արտաքին աշ-
խարհէն — որ աւելի գիւրութեամբ
կը յայտնէ իր զաղտնիքները — վարա-
զոյրը վերցուց եւ մարդկային աչքը դար-
ձուց զէպի ներքը, ուր կը կատարուի
աստուածային կատակերգութիւնը,
մարդկային արամբ, ստեղծագործութիւ-
նը: Իր մանկութեան բարդոյթներով,

սեռային տեսութեամբ, ենթադրապա-
կանով եւ հոգեվերլուծումով, նոր աշ-
խարհ մը բացու եւ իր խոր ազդեցու-
թիւնը թողուց արդիական արուեստին,
ի մասնաւորի գրականութեան վրայ:

Ի վերջոյ ի՞նչ է արուեստին գերա-
զոյն նպատակը. — Քաճանցել կեանքի
խորհուրդին, իջնել զէպի արժանները,
հասնել աւելիներու ակին, Քաճանցելու
իբերու եւ, ի մասնաւորի, մարդկային
հոգիի թաքուն էութեան:

Շոփէնհաուզը կը գրէ. «Նկարագրել
մարդը իր անդադրում տեղներուն եւ ա-
րարկներուն մէջ, ահա՛ բանաստեղծու-
թեան բարձր առաքելութիւնը»: Ապա՝
«Երբ ուզենք մանջնալ մարդկութիւնը իր
ամենամտերիմ էութեան, իր Գազափա-
րին մէջ, մեծ եւ անմտե բանաստեղծնե-
րու երկերուն մէջ է, որ հարազատ եւ
յստակ պատկեր մը պիտի գտնենք, քան
պատմաբաններու»:

Միակ փիլիսոփան, որ բացառութիւն

կը կազմէ, եղած է ինքը, մեծն Պղատունը, որ իր «Հանրապետութիւնը» երկին մէջ բանաստեղծները եւ նկարիչները կը նկատէ «նմանցնողներ», ընդօրինակողներ եւ ոչ թէ ստեղծագործողներ: Ամէն յարգանք ունենալով Հանդերձ՝ կարելի է լիովին համաձայն չըլլալ իրեն: Արուեստի գործը ինքին անկախ ստեղծագործութիւն է: Բանաստեղծութիւնը — ինչպէս միւս արուեստները — որ զուրս կու գայ բանաստեղծի գրիչէն, ինչպէս երեխան մօր արդանդէն, արդէն անկախ միաւոր մըն է, առանձին իսկութիւն մը, բնականագործութիւն մը: Երբ Սեզան կը նկարէ ընութիւնը, իրերը կամ դէմքերը, ընութիւնը չէ, ո՞ր կ'ուզէ վերստեղծել, ընդօրինակել, այլ՝ իր ներքին աշխարհն է, որ կ'ուզէ արտայայտել: Ըսել կ'ուզեմ, որ զգացումը, երազը, տեսիլը, բնականագործութիւնը, գեղեցկութիւնը ինքը՝ ո՛չ թէ դուրսն են, արտաքին աշխարհին մէջ, այլ ներքը՝ մարդուն ներաշխարհին մէջ, որովհետեւ տիեզերքը ամէն էակի համար կը սկսի այն ատեն, երբ էակը կը բանայ աշխարհ եւ կը դիտէ տիեզերքը: Եւ տիեզերքը կը վերջանայ ամէն էակի համար, երբ կը փակէ իր այգիները եւ կը մեկնի:

Ինչպէս Սեզան եւ բոլոր արուեստագէտները, նաեւ Ալիսիա Կիրակոսեան արտաքին աշխարհով չէ, որ Հետաքրքրուած է, ընութիւնը չէ, որ կ'ուզէ նըկարագրել — թէ ինչպէս թռչունները կը դայլոյսին կամ աղբիւրները կը կարկաչեն — այլ ընութենէն ստանալով իր զրգիւրը, անձերէ, պատահարներէ ստանալով իր մղումը, իր ներքին աշխարհին մէջ է, որ (անկախ արտաքին աշխարհէն) ծնունդ կ'առնէ, կը ձեւաւորուի, կեանքով կը սողորուի ստեղծագործութիւնը: Արդի արուեստին հրաշքներէն մէկն ալ այն է, որ քանզեց բոլոր կաշկանդումները, կանոնները, տարազներն ու մեծ աւանդութիւնը եւ արուեստագէտին սուսա բացարձակ ազատութիւն: Տաղալափութիւնը, քերթողական սեռերը ինքնին բարդ գիտութիւն մըն էին: Նրո՞մանօրինակ կանոնները կը սեղմէին նը-

կարչութիւնը, երաժշտութիւնը, թատրոնը եւ միւս արուեստները:

Թող չկարծուի, որ ընդհանրացումներու եւ վերլուծումներու վրայ կը յամենամ եւ նիւթէն կը շեղիմ: Ըսածներս ուղղակի առնչութիւն ունին Կիւսակոսեանի բանաստեղծական արուեստին հետ: Փիլիսոփաները հատորներ գրած են Ժամանակի եւ Տարածութեան մասին: Ժամանակը եւ Տարածութիւնը արտաքին աշխարհին եւ մարդու ներաշխարհին մէջ հիմնովին տարբեր ձեւերով կ'արտայայտուին: Նիւթական աշխարհին մէջ Ժամանակը տեւաբար առաջ կ'ընթանայ, հաւասար ու կշռութաւոր յատկապէս մով, մինչդեռ մարդկային ներաշխարհին մէջ, մարդկային մտածումը, զգացումը, տեսիլը ո՛չ անդեալ կը ճանչնան, ո՛չ ներկայ, ոչ ալ սպագոյ այն իմաստով, որ Ժամացոյց մը կը գործէ: Այլ ամէն բնույթ, տուեալ որեւէ պահու մը, արուեստագէտին միտքը եւ Հոգին ազատօրէն, բոտ կամս, կը շարժէին Ժամանակին ու տարածութեան մէջ, առանց յարգելու արտաքին աշխարհի հոլովոյթը: Բանաստեղծը ներկային մէջ գործ մը կատարելու, խօսելու, գրելու ատեն, միաժամանակ կրնայ հին դէպքի մը, պատկերի մը մասին մտածել կամ արձակուիլ անյայտին մէջ: Ըսել կ'ուզեմ՝ բանաստեղծը տեւաբար հին ապաւորութիւններ, ապագայ տեսիլներ, անկախ պատահարներ, մոռցուած պատկերներ իրարու կը կապէ եւ այս բոլորը կ'արտայայտէ իր երկին մէջ, թէկուզ երեւութապէս անկապ, հակասական, բայց ի վերջոյ, թաքուն տարնչութեամբ մը ամբողջացած, որովհետեւ բոլորը կը բխին նոյն կեդրոնէն, արուեստագէտի անձին: Արուեստի գործը նախ քան գրանցուելը եւ կեանք առնելը, բիւրեղացման երկար եւ բարդ շրջան մը կը բոլորէ արուեստագէտի Հոգիին մէջ եւ հասունանալէ ետքն է, որ կը հասնի վերջին Հանգրուանին, — արտայայտութեան:

Չեմ կարծիր, որ պիտի կարենայի Ալիսիա Կիրակոսեանէն աւելի լաւ խրատացնել իր բանաստեղծութիւնը, որ գե-

Մեծ գիշերները վերագտնում ենք
 Այժմ խորհուրդները, որոնք կորչում
 են
 Մի սքանչելի առանձնութեամբ մեջ,
 Այժմ առանձնութեամբ, որտեղ բոլորս
 ժառանգորդներն ենք վերացակամի:

Իր առաջինութիւններէն վերջինը,
 Հագուստաւոր յատկութիւն մըն է, մա-
 սամբ շնորհ էր տալանդին եւ մասամբ
 իր սեռին, — այն կնոջականութիւնը, ե-
 րանգնեքու հարստութիւնը, զգայնու-
 թիւններու նրբութիւնը, զոր միայն տա-
 ղանդաւոր կին մը կրնայ զգալ ու արտա-
 յայտել: Իր բանաստեղծութիւնը ամբող-
 ջովին պարուրուած է զգացումի հարըս-
 տութեամբ, հակադրութիւններով, այ-
 լազանութեամբ, դոյնի եւ կշռոյթի տա-
 րորինակ զեղումով:

Հ. Պերկաքն կը գրէ. «Բնութեան եւ
 մեր միջեւ, մեր եւ մեր գիտակցութեան
 միջեւ, տոյ մը կայ, որ բամբռ եւ անթա-
 փանց է սովորական մարդոց, բայց նուրբ
 եւ թափանցիկ է արուեստագէտին եւ թա-
 նաստեղծին եամբար»:

Այնքան կը նայի մարդոց եւ իրե-
 րուն այդ նուրբ, թափանցիկ քողին մէ-
 ղէն եւ կը տեսնէ այն՝ զոր հասարակ
 մահանացուները շին տեսներ:

Միջագային համբաւի տիրացած,
 տաղանդաւոր, ինչպէս Օշական պիտի ը-
 սէր՝ վաւերական բանաստեղծուհի մը:
 Շնորհիւ վահագն Գաթեանի թարգմա-
 նութեան եւ, մանաւանդ՝ իր իսկ թար-
 ձանքին, Այլսիա Կիրակոսեան կը դառ-
 նայ իր մայր ժողովուրդին զերկը:

Ըստւած է, որ այն անձը, որ առա-
 ջին անգամ վարդը նմանցուց զեղեցիկ
 կնոջ՝ բանաստեղծ էր, ան՝ որ երկրորդ
 անգամ նմանցուց՝ էջ մըն էր: Ամէն տա-
 ղանդ պէտք է իր սեփական մայրը, իր
 ինքնուրոյն ունեւնայ, եւ ոչ թէ քա-
 յէ ուրիշներու ուղիով:

Ահա արուեստագիտուհի մը, որ իր
 ժամանակին մայրն է, կամ, աւելի ճիշդ
 պիտի ըլլար ըսել՝ հակազգեցութիւնը տա-
 նոր: Ամենա-անբանաստեղծական դա-
 րու մը, կը բերէ խոր ու մարուր բանաս-
 տեղծութեան մը վկայութիւնն ու միտ-
 թարութիւնը:

ԲԻԻՉԱՆԴ ԿՌԱՆԵԱՆ

Թ Ա Տ Ր Ո Ն

«ԹԱՏՐՈՆ 67»-Ի ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ

Վարժան Եաշինտի Թատերաւարը 1974 Մայիս 9ին Պէյրուսի Պատգեղ Թատրան սրահին մէջ ներկայացուց Խաւարա Ալպիի «Կնեզա-նարանակամ պարտեղի պատմութիւն» (Յաւ Սքա-րի) անուն մէկ արարեաց Թատերակը եւ Հե-րաւ Փինթըրի «Կիլիկիա մը զարթ» (է Յայք աւաթ) գործը. զոր իրարայտը բազմաթիւ տեսարաններով Թատերակ մը կարելի է համարել: Կը թուի, թէ այս վերջին գործը աւելի սի-նեմայէ համար գրուած սեմաթի մըն է, բան Թատերակ մը:

Ալպիի «Կնեզամարանակամ պարտեղի պատ-մութիւնը մարդկութեան պատմութիւնն է, որ, որոշ երկիրներու մէջ, մասնաւորաբար Ամերի-կայի, կ'ազրի վանդակներու մէջ, իրարու ձօս, իրարու երես նայող, սակայն իրարմէ բաժ-նըւած, իրարմէ հեռու, իրարու հետ հաղորդակ-ցելու անզոր վիճակի մէջ: Խոսակցութիւնները ոչինչ կը փոխանցեն այլեւս, ոչ մէկ կողմ կ'առա-ջացնեն՝ «Հիւսիս» եկած եմ արդեօք այո, հիւս-սին ըլլաւու է: ոչ բոլորովին հիւսիս, հիւսիս արեւելք թերեւս, սակայն եւ արեւելս՝ հիւսիս: Ներքին պարունակութենէ զուրկ, անձը անձի հետ հաղորդակցութեան մէջ չընող նման նիւթերով կարելի է հանդիպել մարդոց, խօսք բանալ հան-րային պարտեղի մը նստարանին վրայ առանձին նստած մէկու մը հետ, որ ամէն կիրակի այդ նստարանին կը նստի մինակը եւ զիրք կը կար-գայ: Կարելի է ազրել սան մը այս կամ այն սենեակին մէջ, առանց դիտարուելու, թէ ո՞վ կը

րնակի յաջող սենեակը, կամ գիտնալով հան-գերս արեւէ յարարութիւն չունենալ անոր կամ անոց հետ, կամ շատ-շատ կրթութիւն պահանջու-րու, իմիջին ու արեւելքին սանգեմտ պահանջ-ներու արդիւնք յարարութեամբ մը միայն բա-ւարարուիլ, առանց սերտ, առանց նշխարի ա-սկիւթեան մը կարելիութեան: Աւ կնեզանիւնը անզամ, կնեզանարանակամ պարտեղի կնեզանի-նէր ըլլան թէ սան մը զանապանին պահակ լու-նը ըլլայ, չունը, որ մարդմտա է, ընկերակամ է սովորաբար, յարարութեան մէջ չեն կրնար մանկ մարդուն հետ, մարդը ի վիճակի չէ մի-շու անզամ կողմ մը հաստատելու իր եւ կնեզա-նիւններուն միջեւ:

Նիմացինին մէջ մարդկային զին մը սօրի հանելու եւ իրազէս մարդէ մարդ յարարութեան կարելիութիւն մը սանգեկու միակ համ-բան անոր ստացուածքին, եսին, անձին, անհասական սեմաթութեանց կամ յաւկնտու-թեանց զոյնին է, վերաւորելը, խելը եւ, ի վերջոյ, անոր մէջ ինքնապաշտպանութեան կնե-զանակամ վայրագ ընողը արթնցիւնը, որ կըր-նայ յանդիլ սպանութեան, բայց այդ համբով, զիմացինին փորը իրուած զաւույնին համբով զէ՞՞ մարդէ մարդ կողմ մը առաջացած կ'ըլլայ եւ պարտադրուած սերքի համբով իրականացած անձնապաշտութեամբ մը մարդը փրկուած կ'ըլլայ իր բացարձակ առանձնութենէն, ամառակիր մե-նութենէն:

Ան- Խաւարա Ալպիի «Կնեզամարանակամ

պարտեզի պատմութիւնն թատերակէն նիւթը, որ զեն ամբողջովին իրականութիւն դարձած չէ Միլին Արեւելիքի եւ ընդհանրապէս Արեւելիքի, կամ այսպէս ըսած՝ «նուազ զարգացած» երկիրներուն մէջ, ուր ճարդկային ազրուներն ու յարաբերութիւնները զեն «մարդկային են», եւ շատ աւելի «մարդկ ճարդ յարաբերութիւն» են, քան եւրոպական եւ, «մանաւանդ» Հիւսիսային ամերիկեան երկիրներուն մէջ. սակայն, այդ զարեւցածեան» անուանուած «քաղաքակրթութեան», աւելի ճիշդ՝ տնտեսական ու ընկերային ըմբռումներու արագ տարածումին թերւումով հող զբառնելու վրայ է նաեւ Արեւելիքի երկիրներէն մէկ մասին մէջ:

Նիւթը արուած է մէկ տեսարանի մէջ, երկաթաուժանոց մը, ուր իրականութեան մէջ կը խօսի ու նիւթը կը զարգացնէ միայն մէկ հողի՝ ձերի (Վարուժան Պաշտան), հողեկան, մտային, սպա նաեւ, հետզհետէ, Փիլիսոփայական յարձակումի ենթարկելով հանրային պարտեզի մը մէկ անկիւնը զանուազ նստարանին վրայ նստած Փիթըրը (Լեւոն Հրեշտակեան):

Բնական դժուարութեանց բերումով անշուշտ (յաջորդ կտորին ներկայացման համար բնական զանազան տեսարաններու տնկարանը առաջուց հաստատած ըլլալուն համար, բնական տարածութիւնը պակաս էր, վարպետրով մը փակուելով դեմքէ մէկ երբորդին իջած էր) շատ շին անշ ձգուած էր զերակատարներուն, մտնաւորարար ձերիին, որ իր մենախոսութեան ընթացքին պարտաւոր էր Փիթըրի շոր կողմը զանանչ, շարժիչ, շրջանակը հեղահեղ նեղցնել, միաժամանակ անսակ մը հիփոնոսցման ենթարկել նստարանին նստած Փիթըրը, վերջ է վերջէ, շրջանակը նեղցնելով-նեղցնելով զալ նստելու համար նստարանին մէկ ծայրը, ու անկէ, հետք-հետէ հրեւո համար Փիթըրը անդին, աւելի անդին, աւելի անդին, մինչեւ որ ան իրան նստարանէն, զուրս նստուի իրը եղող հանդստեան վայրէն, ու կատարէ պայքարի ինքզինք պաշտպանելու, կամ իր իրականութիւնը պաշտպանելու, իր սեփականութեան անք կանգնելու համար, մինչեւ անզամ դանակ մը ձերիի փորը իրեւո աւտիճակ: Տարածութեան պակասը թոյլ չէր տըւած Պաշտանի խաղին մէջ նման շարժումներին, որով՝ ան ստիպուեցաւ իր մենախոսութիւնը, մենակատարութիւնը իրականացնել դեմքէ նոյն տե-



Փիթըր (Լեւոն Հրեշտակեան) եւ ձերի (Վարուժան Պաշտան)

ղը կանգնած, շատ շին շարժումով ու տեղափոխութեամբ, ինչ որ նուազ զգայի կը զարժնէր, անշուշտ ակամայ, Փիթըրի շոր զին սարդի ոտայնի մը յարուելը, եւ հեղահեղ նեղը մտաւր ու վերջապէս ծուղակը իյնալը:

Շատ շին բառեր ունեցող եւ ստով իսկ աւելի դժուարին պայմաններու մէջ տեղի ունեցող խաղարկութիւնը, թէ՛ Լեւոն Հրեշտակեանի (Փիթըր) եւ թէ՛ երեք-չորս արտերու նիւթին խոսցումը արտայայտող մենախոսութեանց արտայայտիչ Վ. Պաշտանին խաղարկութիւնը (ձերիին) կու գար Ալպիի թատերակին կեանք տալ, ու ազբաւ մեւով:

Հրեշտակեան կը յառաջդիմէ, յոռաշղթման է: Պաշտան իր տարերքին մէջ էր կրկին, եւ շատ յաջող մեւով: Պաշտան աւտարին, սպանութեան տեսարանին՝ ձերիի վերջին նախազատութիւնները յանկարծ բարձրախօսով տար սխալ մըն էր ըստ մեղի. հանդիսատեսներուն կերքնացումը կը ջրուէր եւ ամբողջէն ստացուած սպանութեան հարուած մը կու սար: կը յուսանք, թէ յաջորդող ներկայացումներուն առանց բարձրախօսի, մեծող ձերիի բնական ծայնով արու-

ցու աչք հասուածը, սնկթոր պահելով ազատ
խաղարկութեան ճշ ճգած ազատ պատարտութիւնը:

••

Հերշա Փինթըրի Վիշնը մը զարտ Թասե-
րակը կոչուեան ճշ ներկայացումն է եւ ժար-
զու ճշ սնկոր պայտը՝ ինչպէս պատարտու
ննդդին իսկ կոչմէ իր ճիշ սնկուարում ու
արժանացում շարժայթերին: Անպատ ժար-
զու զարտութեան ճշ, որ կը կը փնտնէ, կը
փորձէ փնտնել, առկն եւ ընկերներն զարտ
սնկուած զիշերով ճշ, բայց է զարտ, զանի որ
անոնք ու անոնք հարմար, նկող ճանկուած
կը շարունակեն զինք ննթարիւած, հարմուած
Վինգի ճիշ պահել: փոքրէն սնկող կնոջ ճշ
հետ՝ զարմուչ է զարտ, զանի որ ան եւս, զրիթ
ժորը նման պահանջներու, հրամաններու շարտ
ճշ զարտ կու առչ եւ սնի սնկական շարժայթ-
ներ, որոնցմէ զինք պատարտը ճշ կը փնտնէ:
Ստորակոչութեան կամ ննթարկութեան շարտ

զոյթն պատարտուիւս համար՝ Ալլըրթ մի-
շն սնկամ կը զիմէ Ֆրիթակն բանութեան,
ժորը ճշմ ճնոց կը բարձրացնէ, ժամացոյցով կը
հարուածն զայն ու ժայրէ կ'իշմայ զանին: Ալ-
լըրթ պահ ճշ կը կարծէ, թէ սպաննած է իր
ժայրը: — Եւ իսկ պատահածով որոշ ինքնազա-
հարկն ճնոց կը բերէ եւ զիշերուայ կեանք փո-
զոցն զամս ազկան հետ կը ժարտի պատա-
րուած, միշն սնկամ իր կարգին ուրիշին ճշ-
րայ բանացու, հրամայող ժարզու մեկերով: Ու
ասան զարմին, սնկուածու ինչպէս զամս, եր-
շանկացած ժարզու զսնկուածութեան ժարտ ճշ
կը զմարտի իր զիմէին, ճիշ-երկու ճշարկեան
զիթ, միշն այն ասան, երբ ժորը ճայրը կը
յուսի: Ալլըրթ, պահ ետ... Ամէն ինչ կը ճի-
րայտանայ եւս, նորիկն վինգիին, նորիկն նն-
թարկութեան ու ճշարտայրը կ'իշնէ համակեր-
պած, սնկացած Ալլըրթի ճշմայ:

Բազմամարզ իւսմիթ ճշ (ՆԱ հոգի) իտար-
կութեամբ բնադրուեցաւ յաշարգանի սնկու-
ածներով կազմուած այս Թասերակը: Տեսարան-
ները իրարմէ կը բաժնակին յարմար իտարով:
Յաշոյ կը բնմայրգարուածը, եւ իւսմիթ սնկու-
ածներուն համարուածը՝ աշարգան: Բուն բնոց սո-
կան կ'իշմար Ալլըրթի սնկարը սնկուարում ե-
րիտասարդին (Վիշն Դարթիեան) սաներան, որ
կնկանացուց սնկարը մին բնականութեամբ ու
յաշարգութեամբ: Բուսերը շնն, որ զիշարածը կը
յաշականին, այլ իտարկութեանը ու Վ. Դար-
թիեան իր զիմէն բերու: Միշն ուսումնասիր-
ում ու երանգներով հարուստ եւ հուրը իտար-
կութեան ճշ:

Փինթըրի սնկարին (որովհետեւ, Թասերակ
ճշ չկար մեր զիմաց, այլ հոյանքիկ ճանկուածով
սնկարին ճշ միշն) զմիշարտար շարտար զար-
դացում չէր բերեր սնկարին, կամ Թասերակի
միւս սնկուարութեանց, ո՛չ որտաքին զիշեր-
ու Թասարումով, ոչ ոչ ներքին հոյանքիկ ճշ
զրանուումով: որով՝ զմիշարտական լրիւ կա-
րողութեանց պատարտութեամբ միշն կարելի զի-
տի ճշարտ այս սնկարաններուն բերել որոշ զե-
րայութեան, որոշ բնականութեան: Վարուածն
Կարլեան ինչ կու սար սար որինակը շատ երկ-
րորդական, ներ ժարզու սնկարը ճշ ժարմուար-
րելով: Կուսրին միւս սնկարանները սակայն հե-
տու կին աշը կարողութեանն եւ, թէն շատ հա-
ժարտուած մեկով, բայց եւ սնկարտ զարտիւրին
ոչ շատ բնական իտարկութեան ճշ կ'առաջա-



Տիկ. Սրաֆսի (Մարի-Տոգ Մանուկեան) եւ
Ալլըրթ (Վիգէ Դարթիեան)

Եւր բնժի զանազան անկիւններուն վրայ: Ժը կար ծանաւորարար տիկ. Սթոքսի, Ալլըքսթի ժոր պարագային (Մարի-Ֆոզ Մանուկեան): Այդ քան պոռայցոյ, Ղլային, ու իրապէս բնութեամբ տիրապետող ժոր ժը տիպարին զիմաց Ալլըքսթի ընկզկաւը, ծամացոյցով ժորը ղիւտան զարնելը չի կրնար ուրիշ եւ խորունկ իմաստ ժը ստանալ, կը զանեայ պարզապէս Ղլայնութեան ետեւորար- ձութիւն ժը: Մինչ նիւթը այդ չի, այդ չի խոր- հուրը, Ընդհանկուտակն, շատ աննշարտ, շատ բար- ըի ու ձեզմ ձեւով վարուող, զուրպուրացող ժոր ժը զուրպուրանքին ծակկզրոն անդամանքն է, որ կացութիւնը կը գարննէ ողորդական, եւ թի- բուս ժորը նմանցնելու՝ Լամար էր, որ աղկան տիպարին ձէջ եւս եոյն ձեւի պոռայցոյ Ղլայնու- թիւն ժացուած էր. Քի Նրկու պարագաներուն ալ տակնորդ:



Ալլըքսթի (Սիլվա Պարուսեան) եւ Ալլըքսթի (Վիգէմ Գարրինեան)

Օր. Սիլվա Պարուսեան աղկան զերով յա- շող խաղարկութիւն ժը կը բերէր, կթէ ձէկ կողմ զննք տիպարի ըմբռնումին հարցը: Առա- ղանութեան յանկեալ ժորցում ժը շատ տակի տպուոր պիտի զարննէ իր խաղարկութիւնը եւ տ- ակնի հասկնալի:

Վիգէմ Գարրինեան Ալլըքսթի զերով սենցած էր աղուոր աւիթ ժը (լու է, որ այս տիպարը իրնն վտառուած էր) իր բնական ընտան կու- րուցութիւնները զարգացնելու եւ արտայայտելու: Լամար: Իւրաքանչիւր տեսարանի Լամար՝ ան կրցաւ բերել իւրայայտուկ կեցուածք, արտայայ- տութիւն ու խաղարկութիւն ու զուրը ձիտանկ կրցաւ առաջնորդել վերջին տեսարանի իր իրրու-

ժորը ազատագրուելու, աշխարհ գալու ու անոր յաջորդող անկումի տեսարանին ապրուած, ա- սուլմաներուած ընտանութեամբ ժը: Անկէն կը սպասուէ իրմէ եւ ինք կրնայ աւել այդ տակնի:

Թատերական թարգմանութիւնը, ծանաւորա- բար Ալլըքսթի զարննի թարգմանութիւնը կը կար- տէր յանկեալ ճիշդ ու աշխատանքի, թարգման- անի ապուրուութիւնը շնորհիւ Լամար սնկըն- զիբին վրայ:

Բ. Փ.

ՈՐՊԷՍՉԻ ԹԻԻՐԻՄԱՑՈՒԹԻԻՆԸ

ՉԽՈՐԱՆԱՅ...

Բարեկամ ընթերցողներ, որոնք հետաքրքրութեամբ մը կը հետևին մեր ամսագրին մէջ յաջորդաբար լոյս տեսնող Կ. Սասունիի «Հնարիզմէ հորիզոն» յուշագրութեան, հետամայնով թէ ուղղակիօրէն յիշեցուցին մեզի Մարտի համարին մէջ երեւցած բաժնին մէկ պարբերութիւնը, ուղղելով միւս նոյն հարցումը, թէ Մուրաֆ, Սեպուհի, Վ. Փափազեանի եւ, առհասարակ, հայ ժողովուրդի որոշ խաւերուն մասին հոն եղած ակնարկութեան մէջ թիրմացութիւն մը չկա՞յ արդեօք:

Երբ տարբեր առիթներով եւ քանի մը ընթերցողներու կողմէ կրկնուեցաւ նոյն հարցումը, խմբագրութիւնս պարտք համարեց առ այդ կատարել որոշ ճշդումներ:

Ահաւասիկ խնդրոյ առարկայ հասուածը.

«Ինչու հաշտութիւնը չստորագրուած, կոիւի եւ խոնկալութեամբ օրհրուհ, Մայիս 20-27ի տագնապին, մեր գործիչներէն եւ գիճուորակներէն մտանք՝ ժողովրդական զանգուածին հետ՝ դէպի հիւսիսային կովկաս ուղղուեցան եւ սուսական քաղաքներուն ճամբով անցան Մուրաֆ, Սեպուհի եւ Փափազեան հայաստանէն մեկնած են դէպի հիւսիսային Կովկաս եւ սուսական քաղաքները եւ ոչ թէ ուրիշ երկրէ մը: Վերոյիշեալ հատուածը անջատելով գրուածքին ընդհանուր մարմինէն եւ բաւածը ինքն իր մէջ ամբողջ մը համարելու պարագային՝ հասկնալի է թիրմացութիւնը, մեր հերոսներուն վարքը ստուերով թիրմացութիւնը, որ Սասունիի նկարագրած իրականութեան բնաւ չի համապատասխաներ:

Այս պարբերութենէն եւ, մանաւանդ, վերջին նախադասութեան այս ձեւէն ստացուած է այն ապարտութիւնը, որ «Մայիս 20-27ի տագնապին» ժողովրդական որոշ զանգուածներ, գործիչներէն ու զինուորականներէն ու մանց եւ անոնց հետ նաեւ Մուրաֆ, Սեպուհի եւ Փափազեան հայաստանէն մեկնած են դէպի հիւսիսային Կովկաս եւ սուսական քաղաքները եւ ոչ թէ ուրիշ երկրէ մը: Վերոյիշեալ հատուածը անջատելով գրուածքին ընդհանուր մարմինէն եւ բաւածը ինքն իր մէջ ամբողջ մը համարելու պարագային՝ հասկնալի է թիրմացութիւնը, մեր հերոսներուն վարքը ստուերով թիրմացութիւնը, որ Սասունիի նկարագրած իրականութեան բնաւ չի համապատասխաներ:

Չմոռնանք, որ Կ. Սասունի այդ օրերուն ինքն ալ կը գտնուէր Թիֆլիս, գրութեան այդ մասը Թիֆլիսի մէջ ապրուած յուշ մըն է եւ խնդիրը կը վերաբերի «Մայիս 20-27ի տագնապին» Հայաստանէն դուրս գտնուած հայութեան եւ այդ հատուածին ղեկավար տարբերուն, զինուորականներուն, գործիչներուն եւ հայդուկներուն: Ահաւասիկ խնդրոյ առարկայ պարբերութեան ճիշդ վերջ գտնուող բացայայտիչ ստղը.

«Յրուածութիւնը զարմանալի կերպարանք տուցաւ շրջապատուած Հայաստանի ասիմաններէն դուրս կուտակուած հայութեան մէջ»:

Ոսքը կը վերաբերի ուրեմն ոչ թէ «Մայիս 20-27 տագնապի օրերուն» Հայաստանի հողին վրայ գտնուող մարդոց խուճապին, այլ Թիֆլիսի հատուածին, անոր ղեկավարներուն, զինուորականներուն, գործիչներուն, հայդուկներուն, որոնք չկարենալով «չըջապատուած Հայաստանի սահմաններէն»

րեն» ներս մտնել՝ Վրաստանի մայրաքաղաքին մօտեցող թրքական վտանգէն զերծ մնալու համար միայն չուզուեցան դէպի Հիւսիսային Կովկաս եւ առսակամ քաղաքներու Յամքամ բռնեցին»:

Ձկնքէ ու կուսող ուժէ զուրկ թիֆլիսի մեր հատուածը իրապէս ուրիշ ելք չունէր, եթէ ոչ հեռանալ քաղաքէն՝ անսալով եւ ժամանակի հրամայականին, եւ ղեկավար խաւի հրահանգներուն:

Այո, եւ ղեկավար խաւի հրահանգներուն:

Շահեկան են ու նշանակալից Մուրատի եւ Սեպուհի թիֆլիսէն հեռանալու փաստին կապուած մանրամասնութիւնները:

Ըստ Սեպուհի յաշերուն, երբ թրքական զօակը կը սեղմուի Հայաստանի շուրջ, երկու հերոսները կը ներկայանան Ազգային Բիւրոյին՝ 50 մի եւ զէնք խնդրելու, բայց հնարատր չըլլար գոհացում տալ անոնց դիմումներուն: «Յոյսերնիս կտրելով Ազգային հարեւորդէն, որուն կարեւոր անդամներէն մին էր վախճան Փափագեան: Սա եւս պատասխանեց, թէ ո՛չ փող կայ եւ ոչ ալ զէնք... Մեր ճակատակն էր ձիեր գնել եւ երբայ հաճ, ուր հայ ժողովուրդի օրհասական ժամերը կը պատրաստուէին»:

Սեպուհի այս էջէն եւս կ'իմացուի, որ «հայ ժողովուրդի օրհասական ժամերուն Հայաստան չէր գտնուեր ինք, իրեն հետ Մուրատը, ինչպէս նաեւ Վ. Փափագեան, որ անկէ հեռանալու մասին մտածէին»:

Ձի եւ զէնք խնդրելու եւ հայրենիքին օգնութեան փութալու համար Մուրատի եւ Սեպուհի սպրած տաղանայի օրերուն, իրենց կը ներկայանայ Համօ Բարազամեանը եւ կը յայտնէ Ազգային Խորհուրդի նախագահին որոշումը, թէ պէտք է հեռանան թիֆլիսէն: Սեպուհ հետեւեալ տողերուն մէջ կը պարզէ այդ որոշումին ի յուր Մուրատի սրտին ծաւալած տառապանքը.

«... Ինչո՞ւ թշնամիի գնդակ մը չծակեց սիրտս, որ ազատի այս տանջանքներէն... Ձի կ'ուզես, չեմ տար, փող կ'ուզես, կը մերժես, եւ այժմ ալ Ազգային հարեւորդի նախագահն է, մեր մեծ ընկեր Ահարոնեանը, որ կ'ըսէ, թէ պէտք է հեռանամք անձանք ճամբաներով դէպի հիւսիս... Ձէ՛, եւ նորէն փորձ կ'ընես, գուցէ յաջողիմ գէնեմք ու ձիերը ձեռք ձգել»:

Այսպէս տաղանայեցան Մուրատ եւ Սեպուհ եւ այս օտիպուծով հեռացան անոնք թիֆլիսէն ու բունկիցի ճամբան առևտական քաղաքներուն, ուր, բնական է, կարծիք իրենց արիւնը թոյլ չտուաւ իրենց հանդիսա ընել եւ Բազուի ճակատամարտին ղեկավարութեան հետ կապ մը հաստատելէ ետք՝ փութացին հոն, ողջնշուած Թոստոմի կողմէ բանաձեւուած քաղաքական ա՛յն կարգախօսով, ըստ որում՝

«Թշնամին ամէն տեղ է: Եթէ մեր շուրջը խմբուած թշնամի ուժերը պարտաւթեան մատնենք, Հայաստանին սպառնացող ուժերը պիտի տկարացնենք»:

Երկու հայդուկները ուս բանակէն լքուած եւ թուրանական հորդաներէն ոտնակոխ Ասրազէյճանը պաշտպանող հայ բանակներուն կը միանան Յուրիսի վերջաւորութեան եւ, ընդամէնը երեք օր ետք, Օգոստոս 4ին տեղի ունեցած կատաղի կռիւի մը ընթացքին՝ կ'իյնայ Սերաստացի քաղը, ինչպէս կ'ըսէ երգը՝ «Բաբուի ժայռս լիքան կրճէին»:

Բարի Լուր... Եւ Տխուր Իրականութիւն...

Միշտ առանձին հանոյք ժըն է մեզի տեսնել մեր ժողովուրդի հաս-
ւածներէն մէկը, որ դիւր ու զբաղանդաւոր հանդէպ ժառանգական իր բուխ
ապրումներէն թափ առած՝ կը պատրաստուի բարոյական առումով թէ նիւ-
թապէս աէր կանգնիլ իր զբաղէաններէն մէկուն, անոր զործին, գործերուն:

Արձանագրութեան արժանի բարի լուրը այս անգամ եկաւ Պոլսէն,
առաջագրուած նպատակն ու նուիրատուներու առաջին ցանկը ներկայացնող
Հետեւեալ պատկերով:

«Մարմարա» հանոյքով եւ գեղանկարութեամբ կը բանայ Յակոբ Մըն-
ճուրիի գործերու հրատարակութեան յատկացուելիք հիմնադրամի մը Եւ-
նակը, որուն հիմնադարը կը դնէ Ամեն. Ս. Պատրիարք հայրը: Նախնական
հաշիւ մը ցոյց կու տայ, թէ Մնճուրիի միայն պատմութեամբ հատորը
կը կարտի մօտ 25-000 յիրայի: Վստահ եմք, թէ մեր գրատը բնօրգոյցները
գնահատմամբ եւ մօտիկ շահագրգռութիւն ցոյց պիտի տան այս ձեռնարկին:
Շնորհակալութիւն կը յայտնենք բոլորից եւ ստորեւ կը հրատարակենք ցանկ
մը առաջին մասնակցութիւններու, որոնք մեզի հասած են արդէն իսկ:

Ամեն. Ս. Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեան	5-000
«Մարմարա» օրաթերթ	1-000
Ռապէր Հատնեան	250
Տիկ. Արմէնուհի Ս. Էօզէր	250
Տիկ. Ասողիկ Քէյնեան	250
Օր. Վարդուհի Եարնեան	100
Օր. Վարդուհի Գալփայեան	100
Տէր եւ Տիկին Արամ Գամպուրեան	100

Նախաձեռնութիւնը հետազոտական է՝ սկսած իր մեկնակէտէն ու
կենսագործման համար յատկապէս այս առաջին ցանկին վրայ երեւոյղ նը-
ւիրատուներու անուններէն: Պոլսոյ մամուլին հետեւողը կը ճանչնայ զը-
րեթէ ամէնքն ալ: Բացառապէս ժողովուրդին հոգեւոր ու մտաւոր կարօ-
ներուն ազատարկող անձեր են բոլորն ալ, հովուապետ, խմբադասապետ, զը-
րոյ, թարգմանիչ, ուսուցիչ, որոնք ձեռունազարդ զբաղէանի օրհնութիւն
եւ ուղիւններ կարգաւորով չեն բարարութիւն ահաւասիկ, այլ անոր զործը
ամէնուն ու վաղուան հասցնելու համար կը նուիրարբերեն նաեւ իրենց լու-
մաները:

Այս սկիզբը չի կրնար դանդաղիլ ու չպատկել ձեռնարկը: Բայց կ'իրա-
զործուի՝ արդեօք բուն նպատակը, որ Մնճուրիի գործերը լայն խաւերուն
կարգաւ աւելու միտքն է վերջին հաշուով:

Մեր խորադոյն վէրքերէն մէկը ա՛յս է այսօր, կարգաւոր արձագրու-
թեան տեղատուութիւնը, զբաղան գործեր կարգացող մարդոց թիւին ահռե-
լի պակասը:

Այս բարի լուրին քով՝ տխուր, տխուր է մեր իրականութիւնը...

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆԳ



ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԻ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ (Կամիտա Վարդապետ), հրատարակութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1974 : ԳՊՐՈՑԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ (Քատերգութիւններ), Անտիտ Ոսկերիչեան, Պէյրութ, 1974 :

ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՄԻՋԵՒ (յուշեր, պատմութիւններ), Մ. Տէր Մելիքեան, Պէյրութ, 1974 :

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ (պատմական), Ս. Սապահ-Գիւլեան, հրատարակութիւն Տպարան Տօնիկեանի, Պէյրութ, 1974 :



ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ
ՍՈՂԺԵՆԻՑԻՆ ԵՒ ՄԵՐ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԸ...

ՏԱՐԵԳԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՄԱՀԻՐԱՆ 20 ՏՈՒՍԸ
ՀԱՏԱՎԱՏԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

باکین
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
- مدير المسؤول
السيد ارتمين كارنيك قزاجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԾՍԻ

•

ՄՍԲԱԳԻՐ
Գ. ՍՆԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչությունի հասցե

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban